



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Дип Др

518



7  
-42  
M

6



ԱՆԻՆԲ


518

177

9-42

W

ԼՈՍՏ ԶԼՍԹԵՐՅԻՏԻ



Հ. ԱԽԹԵՆՏԻՈՍ Վ. ԳՈՒՐԳԵՆԵՆՆ

609




ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂՍԶԱՐՈՒ

1873





578-2009

4047  
41

ԽՔ 522.



ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Որուն մէջ պարզ, ընտանի և  
ամեն վիճակի ու կարողութեանց  
յարմար կերպով մը դրուած են՝  
քաղաքավարութեան սկզբունքն,  
աշխարհէս ծանօթութիւն ունենա-  
լու արուեստը, և զմարդ պատուա-  
ւոր, առաքինի, նրբաճաշակ և բա-  
ւեզարդ ընելու ամեն հարկաւոր  
հրատներն. բոլորն ալ նոր կարգի  
մը վրայ առած :

## ԳԻՏԵԼԻՔ

Սնդիւիացւոց ազգին անցեալ դա-  
րուն Ազնուականաց մէջէն սակա-  
ւոց բարքն այնպէս ծանօթ է,  
ինչպէս հանճարաւոր և աշխոյժ  
կոմսին Չէսթըրֆիլտի, որն որ հա-  
ւասարապէս անուանի եղաւ ընկե-  
րական, քաղաքական և իմաստուն  
մարդկանց ժողովոց մէջ: — Բաց 'ի  
յատուկ ուղղադատութենէն՝ կա-  
տարեալ ծանօթութի ունէր մարդ-  
կային բնութեան վրայօք. որով և



անթերի ազնուական մի էր, զուար-  
ճալի մարդ մի ընկերական կենաց  
մէջ: — Աւայսպիսի դժուարագիւտ  
տաղանդներով և սիրելի յասկու-  
թիւններով ճոխացած ըլլալուն՝ ան-  
շուշտ քան զամեն մարդիկ աւելի  
յարմար էր Իսապիարակ ըսուելու ու  
Իսապիարակոսեան ու իրեան գրու-  
թիւն մի սահմանելու:

Յետագայ գրքոյկս իրեն որդւոյն  
համար գրած խրատներն կը բու-  
վանդակէ, զորն որ կուզէր իրեն  
պէս կատարեալ մարդ ընել ամեն  
բանի մէջ. ընթերցողն պիտի գտնէ  
այս երևելի մարդուն գեղեցիկ խոր-  
հրդածութիւններն զանազան նիւ-  
թոց վրայ, իրեն ուղիղ գիտողու-  
թիւններն մարդկանց ու մարդավա-  
րութեան վրայ, և շատ օգտակար  
ղննողութիւններն զմարդ առաքինի  
նրբաճաշակ և բարեկարգ ընելու:

Ծ. Այս գիտելիքս անգղիարէն  
բնագրին սկիզբը յառաջաբանի տեղ  
գրուած գտնելով՝ թարգմանելը  
հարկաւոր սեպեցինք՝ մատենիս և  
մատենագրին վրայ տեղեկութիւն  
մը տալու մտքով:

Հ. Ա. Վ. Գ.





ԼՈՌՏ ՉԷՍԹԸՐՖԻԼՏԻ  
ԽՐԱՏՔ ԱՌ ՈՐԴԻՆ ԻԻՐ



Ա. Անտառադիր-Ընդհանր.

Անտառադիր մարդը ընդհանրապէս կամ յոյժ տկար մարդ կըլլայ, կամ յոյժ ծանծաղամիտ. ինչ որ ալ ըլլայ՝ ընկերութեան մէջ միշտ անհաճոյ է: Մարդավարութեան պարտքերու մէջ միշտ սլակասաւոր ընդհանուր խօսակցութեան մասնակից չըլլալով կամ ուշ չգնելով, երբեմն երբեմն խօսքի մէջ կը նետուի, ու անակնկալ բան մը կը գըլորէ, քունէն նոր արթնցողի՝ երազ տեսնողի մը պէս: Խորունկ մտածմանց մէջ ընկղմած կերևնայ, բայց հաւանական է որ շատ անգամ բան մը չմտածեր. իր մտե-



րիմ բարեկամներն ալ առջևը տես-  
նէ չճանչնար կամ անխմանալի պա-  
տասխան մը կուտայ իրենց: Գլխար-  
կը աս խուցը կը թողու, ցուպը ան  
խուցը, հաւանականաբար մուճակ-  
ներն ալ անդի խուցը կը թողուր՝  
թէ որ ծամուկած կոճակները զա-  
նոնք հաստատ չբռնէին: Ասիկայ ո-  
րոշ նշան մըն է՝ կամ ամենատկար  
խելքի մը, որ միայն մէկ բանի ուշա-  
դրութիւն կրնայ դնել, կամ այն-  
պիսի ծանծաղամտութեան մը՝ որ  
կուզէ կարծեցընել թէ ինքը բոլոր  
խելքը ու միտքը մէկ մեծ ու հար-  
կաւոր բանի մը տուեր է: Աշխարհ-  
քիս ստեղծմանէն ՚ի վեր Իսահակ  
Նիսուծն մը ու Ադք մը, ու այլ հինք  
վեց հոգի հաղիւ կը գտուին, որ ի-  
րաւամբ ասանկ անուշադրութեան  
տան իրենք զիրենք, պատճառաւ  
խորունկ մտածմունքներու՝ որ ի-  
րենց ըրած զննութիւններուն հա-  
մար հարկաւոր էր:

Գործոց ու ընկերութեան յար-  
մար չէ ամենեւին ան մարդը, որն որ  
ուշադրութիւն չկրնար դնել առ-

ջևը եղած որ և իցէ բանին վրայ:  
Նրբ կը տեսնեմ այնպիսի մարդ մը  
որ խելքը իրմէ հեռու կը քալէ, ես  
ալ աւելի կընտրեմ մարմնովս ան-  
կէց հեռանալ. վասն զի ինձի հա-  
մար անկարելի է անոր հետ նոյն  
խցին մէջ կենալ, որովհետեւ անմը-  
տադրութեան ու անշնորհք կերպի  
չեմ դիմանար:

Աւելի կուզեմ մեռելի քով կե-  
նալ, քան վերացկոտ մարդու մը  
հետ բնակիլ. վասն զի թէպէտ մե-  
ռած մարդ մը հաճոյական բան մըն  
ալ չըլլայ, գոնէ չեմ կրնար ալ  
կասկածիլ, որ զիս կարհամարհէ.  
Իսկ յայտնի անուշադիր մարդը՝  
լուէլեայն ինձի կիմացընէ թէ իր  
մտադրութեան արժանի չսեպեր  
զիս: Ասոր համար ալ է որ վերաց-  
կոտ մարդը չկրնար դիտել իմանալ  
ընկերութեան հոգին կերպն ու  
վարմունքը. և թէպէտ բոլոր կեան-  
քը ընտիր ընկերութիւններու մէջ  
ալ անցընէ (բաւական է որ ընդու-  
նելի ըլլայ), այսու ամենայնիւ աւե-  
լի խելք մը չսորվիր, խուլի մը հետ



ինչպէս որ կը վարուինք, վերացկոտ մարդու հետ ալ նոյնպէս կը կենցաղավարինք: Եւ յիրաւի սովորական տնտեսութիւն է այնպիսի մարդու մը հետ խօսիլ, որ յայտնապէս կը ցուցնէ թէ ըսածնիս չըլտեր, ուշ չգներ ու չհասկընար:

### Բ. Մարդը ու թիւն.

Ոչ գործողութեան և ոչ զուարճութեան յարմար է ան մարդը՝ որն որ չկրնար կամ չգիտեր առջևը եղած նիւթին ուշադրութիւն ընել, կամ թէ ըսենք կերպով մը քիչ մը ատեն ամեն օտար մտածմունքները մտքէն դուրս վաւրնակ: Թէ որ մէկը կարգաւ կամ հարկինքի կամ որ և իցէ ընկերական զուարճութեան ատեն, ինքն իր մտքէն Եւկլիդէսի առածներէն մէկը լուծելու ետեւ ըլլայ, այնպիսին խիստ արտասոյց մարդ կը սեպուի, և ընկերութեան պատիւ չընէր. կամ թէ իր սենեկին մէջ առած մը լուծելու ետեւ եղած Ժամանակը, մէկ պզտի երգ

մը մտքէն անցընէ, ևս ապահովապէս կրնամ կարծել, որ այդ մարդը խեղճ ուսումնագէտ մը միայն պիտի ըլլայ:

Օրուան մը մէջ ամեն բանի բաւական Ժամանակ կայ, թէ որ ամէնքը մէկիկ մէկիկ ընես. բայց թէ որ երկու բան միատեղ ուզես ընել՝ ամբողջ տարուան մէջ բաւական ատեն չես գտներ:

Այսպիսի հաստատուն ու անշրջիտութ ուշադրութիւն մէկ բանի մը վերայ, մեծ հանճարի օտոյդ նշան մըն է. ինչպէս որ ահար ու ծանծաղ մտքի անսխալ նշան են փութալը, շփոթիլը ու խռովելը:

Եւ յիրաւի առանց ուշադրութեան բան մը չըլլուիր: Ուշադրութեան պակասութիւնը որ բուն գաւազանքի պակասութենէն առաջ կուգայ, կամ ահարամտութիւն է կամ անտեսութիւն: Չէ թէ միայն ամեն բանի ուշադրութիւն պիտի գնես, հասկա նաև աս ուշադրութիւնդ ալ ամենապարասա պիտի ըլլայ. անանկ որ մէկ նայէ,



լով խուցի մը մէջ կեցողներուն զա-  
մենքը պիտի տեսնես իրենց շարժ-  
մունքովը, իրենց նայուածքովը ու  
իրենց խօսքերովը. բայց սակայն ա-  
ռանց ապշած նայելու կամ դիտող  
երևնալու: Աս արագ ու անյայտ  
դիտողութիւնը շատ հարկաւոր ու  
օգտակար է բոլոր մեր կենացը մէջ,  
և շատ ջանալու է զանիկայ ձեռք  
բերելու: Իսկ ընդհակառակն վե-  
րացկոտութիւնը որ անմտութիւն  
մը կամ ըրած բանին վերայ անու-  
շադրութիւն մըն է, այնչափ տկարա-  
մտի կամ խենթի կը նմանցընէ ըզ-  
մարդ, որ իմ կողմանէս ճիշդ տար-  
բերութիւն չեմ գտներ մէջերնին:  
Տկարամիտը խելք չբանեցընէր,  
խենթը խելքը կորսնցուցած է. իսկ  
անուշագիր մարդը վերացկոտու-  
թեանը ատեն գրեթէ նոյնպէս խել-  
քէ զուրկ է:

Վերջապէս ամենէն հարկաւոր  
դիտութիւնը որ է աշխարհք ճանչ-  
նալ, ուրիշ բանով ձեռք չենք կըր-  
նար ձգել, բայց եթէ մեծ մտա-  
դրութեամբ, ես շատ ծերեր կը-

ճանչնամ որ թէպէտ երկայն ատեն  
աշխարհքիս մէջ ապրեր են, բայց  
սակայն զանիկայ ճանչնալու կող-  
մանէ դեռ սղայ են, պատճառաւ  
իրենց թեթեւութեանն ու անմտա-  
դրութեանը: Ան կերպերը որոնց որ  
ամեն մարդ գիւրաւ կը յարմարի,  
և ան արուեստակեալ (քաղաքա-  
վարութիւնները) որոնք որ բոլոր  
աշխարհք կուզեն դրսուանց ցուցը-  
նել, կերպով ճշմարտութիւնը կը-  
ծածկեն, և ամեն մարդու վերայ ընդ-  
հանրապէս մէկմէկու կը նմանցընեն:  
Ուշադրութիւն ու բարակամտու-  
թիւն պէտք է աս քօղին տակէն  
նայելու ու ամենուն իր յասուկ  
բնաւորութիւնը տեսնելու համար:

Աս բանիս հասնելու համար, մա-  
նրը մտադրութիւններ կան՝ որ ըզ-  
մարդ երախտագիտութեան պար-  
տական կընեն, և զգալի կերպով  
մը կը փայփայեն քան հսկարտու-  
թիւնը ու անձնասիրութիւնը որ  
մարդուս բնութենէ անբաժանելի  
է, որովհետեւ ասոնք անտարակու-  
սելի ասլացոյց կը սեպուին մեր



նկատմունքին ու համարմունքին որ  
 ուրիշներու վերայ ունինք: Չոր օ-  
 րինակ գնենք թէ, մէկը ճաշու-  
 կամ ընթրեաց հրաւիրեցիր, ուշ  
 գիր տես՝ թէ այդ մարդը կերա-  
 կուր մը աւելի կը սիրէ, ջանա որ  
 այդ կերակուրն ալ գանուի. և երբ  
 սեղան կը բերուի, ըսէ. Աս ան դի-  
 պուածի մէջ ինձի անանկ երեցաւ,  
 թէ հրամանքդ աս կերակրէն կա-  
 խորժիս, անոր համար մասնաւոր  
 կերպով ապսպրեցի որ շինուի: Աս-  
 գինիէն ալ քիչ մը հանեցի, գիտ  
 նալով որ հրամանքիդ սիրածն է:  
 Բաց ասկէց ամեն մարդ պակասու-  
 թիւն ունի կամ աս ան բանէն կը  
 խորշի և կը սիրէ. եթէ մենք ծաղ-  
 րենք մէկը կատուէ կամ պանրէ  
 խորշելուն համար (որոնք որ շատ  
 հասարակ հակակրութիւններ են)  
 կամ անուշադրու թեամբ կամ անհո-  
 գու թեամբ թողունք որ այդ չսի-  
 րած բաներն անոնց առջևը ելլեն,  
 որոնք կրնայինք արգիլել. գիմացին-  
 նիս առջի անգամուն միտքը կը գնէ  
 թէ զինքը արհամարհեցինք, իսկ

երկրորդ անգամուն բանի տեղ չգը-  
 րինք. և երկուքն ալ միտքը կը  
 պահէ ու կը յիշէ: Իսկ ընդհակա-  
 ոակն երբոր հոգ կրնենք սիրած բանը  
 ճարելու ու չսիրածը հեռացընելու,  
 գոնէ անով միտքը կը գնէ թէ մեր  
 ուշադրու թեանը արժանի կը սե-  
 պենք զինքը, և իրանձնասիրու թիւնը  
 շոյելով բարեկամ կրնենք զինքը,  
 քան թէ որ մեծ ծառայու թիւն  
 մը ըրած ըլլայինք իրեն: Եւ որչափ  
 որ պզտի բան ըլլայ, այնչափ աւե-  
 լի քու մտադրու թիւնդ կը ցուցընէ  
 ան մարդուն վրայօք, որով և աւե-  
 լի կերպով մը երախտագէտ կընես  
 զինքը: Ի՞նչ քեզի խորհուրդ հար-  
 ցուր, և կը տեսնես թէ ինչպէս այդ  
 պզտի մտադրու թիւնները՝ որ ու-  
 րիշները քեզի համար կընեն, կը  
 փայփայեն քու անձնասիրու թիւ-  
 ու թեթեւ ունայնամտու թիւնդ ո-  
 րոնցմէ մարդ չկայ որ ազատ ըլլայ:  
 Մտածէ թէ ինչպէս ան մարդուն  
 հետ մասնաւոր սէր մը ու մտերմու-  
 թիւն կուենեսաս, և ինչպէս անոր  
 ըրածին ու ըսածին հաւնելու պատ-



րաստ կը գտուիս: Նոյն սլատճառ-  
ներով ուրիշներն ալ քու վրադ  
նոյնպէս հաճոյական կրնան ըլլալ:

Գ. Տեսակ փեսակ անշնորհք կերպեր.

Եստ մարդիկ կան՝ որ թէսլէտ  
ուրիշ կողմանէ արժանաւոր ու սլա-  
տուաւոր մարդիկ են, բայց անանկ  
անդէպ վարմունքներ, գէշ սովո-  
րութիւններ ու անշնորհք կերպեր  
ունին իրենց կենցաղավարութեան  
մէջ, որ իրենցմէ զղուել մը ու խոր-  
շում մը կը բերեն, որոնց չեն կըր-  
նար յաղթել ուրիշ կողմանէ ունե-  
ցած անգին կատարելութիւններն  
ու արդիւնքը:

Կոպտութիւնը երկու սլատճառէ  
առաջ կրնայ գալ. կամ բարեկիրթ  
ընկերութեան մէջ չգտնուելէն կամ  
անոնց կերպին մտադրութիւն չը-  
նելէն:

Երբ անշնորհք մարդ մը խուց մը  
կը մտնէ, խիստ հաւանական է որ  
իւր սուրը երկու ազդրերուն մէջ  
իյնալով կամ զինքը գետին իյնալ

տայ, կամ հաւասարակշռութիւնը  
կորսնցընէ. երբ ինքզինքը գտնէ՝  
կերթայ բոլոր խուցին մէջէն ան  
տեղը կը նստի, ուր որ նստիլ իրեն  
չէր իյնար. հոն գլխարկը ձեռքէն  
կ'իյնայ, անիկայ առնելու ատեն  
գաւազանը կը ձգէ. գաւազանս վեր-  
ցընեմ ըսելու չմնար, գլխարկը նո-  
րէն կ'իյնայ. անանկ որ ինչուան  
ինքզինքը ժողովէ քառորդ մը կանց-  
նի: Թէյ կամ խահուէ խմելու ա-  
տեն անշուշտ բերանը կայրէ, և գա-  
ւաթը կամ պնակիկը վար կը ձգէ  
ու վրան գլուխը թէյով կամ խա-  
հուէով կ'աղտոտէ: Ճաշու ատեն իր  
անշնորհքութիւնը աւելի դուրս կը-  
ցատքէ՝ որչափ որ աւելի շատ բան  
ունի ընելու. դանակը, սլատառա-  
քալը և դգալը ուրիշներէն տար-  
բեր դիրքով կը բռնէ<sup>1</sup>. առանց վախ-  
նալու որ բերանը կտրի՝ կերակու-

1. Դիտելու բան է, որ Եւրոպացիք սլա-  
տառաքաղը միշտ ձախ ձեռքով կը բռնեն,  
և դանակն ու դգալը աջ: Կերակրոյ ա-  
տեն ուր որ գարուի մարդ, հոն տեղի սո-  
վորութեան պէտք է համաձայնի:



ըրդ գանակով կ'ուտէ, պատառա-  
քաղով ահռայները կը խառնէ, և  
ան դգալն որ հազար անգամ բե-  
րանը խոթեր հաներ է, մէջ տեղի  
պնակին մէջ կը դնէ: Թէ որ կերա-  
կուրը կարտելը իրեն իյնայ, յօ-  
գերուն տեղը չկրնար գանել, և  
ոսկրները կարելու ջանալու ատեն՝  
կերակրին ջրի համեմովը ամենուն  
երեսը կը ծեփէ: Ինքն ալ միշտ ա-  
սուրով կամ ճարպով կը մալակո-  
նուի, թէպէտ և անձեռոցը միշտ  
կոճակին ծակէն անցուցած ըլլայ ու  
ծայրը ծնոտին գալչի: Երբ խմելու  
կուգայ արհաւ գաւաթին մէջ պէտք  
է որ հազայ, և բոլոր նստողներուն  
վրայ շողիքի անձրև մը բերէ: Ասոնց-  
մէ զատ հազար ու մէկ անշնորհք  
կերպեր ունի. զոր օրինակ քիթը  
վեր կը քաշէ, երեսը կը ծամռակէ,  
մատուրները քիթը կը խոթէ, կամ  
խնջելէն ետև թաշկինտակին մէջ կը  
նայի. անանկ որ ընկերութեան զը-  
զուումն կը բերէ: Երբ ձեռքը բան  
մը չունի, մեծ նեղութեան պատ-  
ճառ կըլլան անոնք իրեն, և չգիտեր

թէ ուր դնէ զանոնք. անանկ որ միա-  
կերպ շարժման մէջ են, երբեմն  
ծոցը կը դնէ, երբեմն կուրծքը. եր-  
բեմն գրպանը, զգեստը ուրիշներուն  
պէս չհագնիր. վերջապէս բան մը  
չկայ որ ուրիշներուն նման ընէ: Ի-  
րաւ աս ամեն բաներս ամենևին  
յանցանք մը չեն, բայց ընկերու-  
թեան մէջ խիստ անհաճոյ ու ծաղ-  
րելի բաներ են. և ո՞վ որ կուզէ հա-  
ճոյ ըլլայ ուրիշներուն՝ պէտք է որ  
ամենայն հոգով աս բաներէս զգու-  
շանայ:

Ինչ որ ըսինք չընելու բաներու  
վրայ, դուն անիկց կրնաս դիւրաւ  
հետևընել ընելիքներդ, որոնք որ  
քեզի սովորական ու ընտանի բա-  
ներ կը գառնան թէ որ պատշաճա-  
պէս մտադրութիւն ընես քաղաքա-  
վար մարդկանց ու աշխարհք տե-  
սած մարդկանց կերպերուն:

Ուրիշ տեսական անշնորհքու-  
թիւն մ' ալ կայ խօսակցութեան  
ու բառերու, որոնցմէ ալ պէտք է  
փութով զգուշանալ. ինչպէս են լե-  
զուի սխալներ, ծուռ հնչմունքներ



հին զուրցուածքներ, հասարակ առակներ. որոնք ամենը գէշ ու ցած ընկերութիւններ յաճախելու նշաններ են: Զոր օրինակ է թէ փոխանակ ըսելու. թէ Շատ տեսակ ախորժակ կայ, և ամեն մարդ զատ զատ ախորժակ ունի, առակ մը բերնէդ թուցընելով ըսես թէ Ինչ որ մէկուն կերակուր է, մէկալին թոյն է. կամ թէ ըսես Ամեն մարդուն իր ուղածը, ինչպէս որ ան բարի մարդը կըսէր՝ որ իր կովկեր կը համբուրէր. ամեն մարդ միտքը կը դնէ թէ դուն ծառայներու ու աղախիններու ընկերութենէն վեր՝ ուրիշ մարդու հետ չես վարուած:

Նմանապէս մտաց անշնորհքութիւն մըն ալ կայ, ուսկից որ պէտք է ամենայն խնամքով զգուշանաս. ինչպէս ըսենք մէկուն անունը շփոթել կամ մոռնալ կամ խօսելու ատեն ըսել. Բանը, ինչպէս կըսեն, կամ խաթուն բանը ինչպէս կը կոչուի, որ շատ անշնորհք ու առամկական կերպ է. նոյնպէս է նաև մարդկանց անյատուկ պատուա-

նուններ տալը. զոր օրինակ Պարոն ըսելու տեղ Տէր ըսել, Տէր ըսելու տեղ Պարոն:

Նմանապէս լաւ միտք չառած պատմութիւն մը սկսիլ, և ետքը մէջ տեղը հասած չհասած ստիպուիլ ըսելու թէ մնացածը մոռցեր եմ, շատ անհաճոյ ու կոշտ բան է: Մարդ պէտք է որ իր խօսակցութեան մէջ շատ ճիշդ, պարզ ու բացայայտ ըլլայ. ապա թէ ոչ փոխանակ զուրիշները զուարճացընելու ու կրթելու, կը ձանձրացընէ ու անհանգիստ կընէ:

### Դ. Վախիտութիւն

Վախիտութիւնը ապուշ Անգլիացիի յատուկ նշանն է, որն որ վախէն կը դողդղայ ու ինք զինքը կը կորսնցընէ, թէ որ կոկիկ մարդ մը բան մը իրեն հարցընէ, կարմրելով ու կմկմալով պատասխան մը չկրնար տալ. որով ծաղը ըլլալու անհիմն վախէն՝ յիրաւի ծաղրելի կըլլայ:




Համեստութեան ու անշնորհք վախկոտութեան մէջ մեծ տարբերութիւն կայ. ետքինը այնչափ ծիծաղելի է, որչափ որ գեւելի է ճշմարիտ համեստութիւնը. հաւասարապէս անվայել բան ապուշ մարդ ըլլալը ու աներես ըլլալը. և ինքզինքնիստ արհամարհելի կրնենք թէ որ առանց շփոթելու ու տագնապելու չկարենանք խուց մը մըտնել ու երկու խօսք խօսիլ. ինքն իր վրայ անվստահ, վախկոտ ու ամբողջ կոտ մարդ մը ինչ արդեանց տէր ալ ըլլայ, աշխարհիս մէջ առաջ չերթար կամ երես չճերմկցրներ, իր անսրտութիւնը անգործ կը մնայ, ուր ընդ հակառակն ժիր մարդրն ու շատախօսը զանիկայ կանցնին: Բոլոր տարբերութիւնը բանեցուցած կերպէն առաջ կուգայ. ան որ աս կերպովս լրբութիւն կը սեպուի, ուրիշ կերպով պատշաճ ու վայելուչ հաստատութիւն մըն է միայն: Թելացի ու աշխարհք ճանչցող մարդը իր իրաւունքը այնչափ աւելի հաստատ ու անվախ

կերպով կը պաշտպանէ և իր միտքը դրածը առաջ կը տանի, որչափ որ աներես մարդ մը. բայց բանական վարպետութիւն ունի իրեն ըրածներուն համեստութեան տրտաքին երևոյթ մը տալու: Աս կերպերս մարդկանց սիրտը կը շահին և կը դրաւեն, ուր շատ անգամ մի և նոյն դիպուածները զուրիշները կը տհաճեցրնեն ու պարապ կելեն, միայն գործողին անչափ ու աներես կերպին համար:

Անգլիացիք ընկերութեան մը մէջ մտնելու ատեն սովորաբար կամչընան. բայց թէ որ առանձնական կերպերէ զգուշանանք՝ ինչ բանի համար պիտի ամչնանք. և ինչո՞ւ համար նոյնչափ համարձակութեամբ ու ազատութեամբ չկարենանք պիտի խառն ընկերութեան մը մէջ մտնել, որչափ որ մեր խուցը կը մտնենք: Միայն ախտէ ու տգիտութենէ պէտք է որ ամչնանք. իսկ երբ անոնցմէ ազատ ենք, առանց դժուարութեան ու առանց վախի ամեն տեղ կրնանք համարձակիլ:

Երբեք չլսել

4047 1541





Բան մը չկայ որ պատանի մը ցած  
ընկերութիւններ յաճախելու յոր-  
դորէ, ինչպէս վախկոտութիւնը:  
Թէ որ միայքը դնէ թէ ուրիշնե-  
րուն հաճոյ չկարենայ պիտի ըլլաւ,  
յաւիտեան հաճոյ ըլլալիք չունի:

Ուստիք ալ ըրիաւի վախկոտու-  
թեան միասն ու անպատեհու-  
թիւնն իմանալով, միւս հակառակ  
ծայրն անցան ու աներես եղան.  
Ինչպէս վատերն երբեմն վատնոյն  
մեծութենէն յուսահատ եղած են.  
Բայց սա ալ հաւասարապէս խորշէլի  
է, որովհետեւ աներեսութենէ աւելի  
ընդհանրապէս տհաճելի բան չկըր-  
նար ըլլալ: Աս երկու ծայրերու  
մէջ տեղը կը բռնէ բարեկիրթ մար-  
դը, որն որ ամեն ընկերութեանց  
մէջ ինքզինքը հաստատ ու անդորր  
կը պահէ. այնպիսին համեստ է ա-  
ռանց երկչոտ ըլլալու, ու անխառն  
առանց աներեսութեան:

Վախկոտ մարդը ընկերութեան  
մը մէջ մտած ատենը կամչնայ ու  
կը շփոթի, հետը խօսած ատենդ կը-  
խառնի, և դժուարաւ պատասխան

մը կուտայ, և չգիտեր թէ ձեռուը-  
ներն ինչ բանի բերէ. բայց բարե-  
կիրթ մարդ մը որ աշխարհքէս ծա-  
նօթութիւն ունի, ընկերութեան  
մէջ շնորհալի ու վստահ կերպով  
մը կերենայ, և բոլորովին անվրդով  
ու անշփոթ կը մնայ: Բարձր աստի-  
ճանի մարդիկներէ չայլայլիր, և ա-  
ռանց շփոթելու անոնց պատշաճ  
յարգութիւնը կընէ, ու այնպէս  
դիւրաւ կը վարուի թաղաւորի մը  
հետ ինչպէս իր հպատակներէն մէ-  
կուն հետ: Ասիկայ պըզտիկուց ա-  
ղէկ ընկերութեանց մէջ գտնուե-  
լուն, ու մեր մեծերուն հետ տես-  
նուելուն օգուտն է: Բարեկիրթ  
մարդը իրմէ վարիմներուն հետ ա-  
ռանց գոռոզութեան կը վարուի. և  
իր մեծերուն հետ յարգութեամբ  
ու պարզերեսութեամբ: Աս ալ կայ  
որ աղնուական կերպ ունեցող մար-  
դը, թէպէտ վար աստիճանէ ըլլայ,  
աւելի ընդունելութիւն կը դանէ,  
քան եթէ մեծ կատարելութիւն-  
ներ ունեցող մը որ աշխարհքի ծանօ-  
թութիւն չունի: Համեստութիւնը



պէտք է որ բարեկիրթ ու պարզ-  
երես վստահութեան հետ միացած  
ըլլայ:

### Ե. Ընկերութիւն.

Աղէկ ընկերութեանց մէջ յա-  
ճախելը, մանաւանդ նոր աշխարհքի  
առջև երեցած ժամանակնիս, մէկ  
հատիկ ճամբայ է լաւ տպաւորու-  
թիւններ ունենալու: Աղէկ ընկե-  
րութիւն ըսելով չենք հասկընար  
ան մարդկանց ընկերութիւնը որ ի-  
րենք զիրենք այնպէս կը կարծեն ու  
կանուանեն: Ասիկայ գլխաւորապէս  
(թէպէտ ոչ ամբողջապէս) կը բաղ-  
կանայ աղնուածնունդ, պատուա-  
ւոր ու աստիճանաւոր մարդիկնե-  
րէ. շատ անգամ և իրաւապէս ան-  
տոհմ ու անաստիճան մարդիկ ալ  
ընդունելի կըլլան ասոր մէջ, թէ որ  
մասնաւոր արդեամբ մը երևելի ե-  
ղած են կամ ազատական արուես-  
տից և գիտութեանց մէջ անուանի:  
Բարեկիրթ ընկերութեանց մէջ շատ  
անգամ կը մտնեն նաև շատ ան-

տոհմ, անպատիւ ու անարդիւն  
մարդիկ կամ իրենց յանդուգն լըր-  
բութեամբը, կամ մեծ մարդու մը  
պաշտպանութեամբը: Աս կենցա-  
ղասէր բարեկիրթ ընկերութեան  
մէջ ամենահարկաւոր բան է լաւ  
վարմունք ու մաքուր լեզու ունե-  
նալը, որովհետև նոյն ընկերութե-  
նէն եղած մարդիկն ալ իրենց կեր-  
պին բարեկիրթ ընկերութեան վար-  
մունք ու լեզու կը կոչեն, որովհետև  
իրաւացի ասեան մըն ալ չկայ որ  
զանոնք հաստատէ:

Սովորական նշանակութեամբ  
բառին աղէկ ընկերութիւն չեն կըր-  
նար ըսուիլ առաջին կարգի հա-  
րուստ մարդկանց ժողովքներն,  
բայց միայն եթէ իրենք ըլլան նոյն  
երկրին բարեզարդ ու աղէկ անուն  
ունեցող մարդիկն. վասն զի առա-  
ջին կարգի հարուստներն ալ վերջի  
աստիճանի նուաստ մարդկանց պէս  
ապուշ, անկիրթ ու արդիւնք մը  
չունեցող մարդիկ կրնան ըլլալ:  
Ընդհակառակն բոլորովին նուաստ  
աստիճան մարդկանցմէ ձեացած ըն-



կերութիւնն ալ, ինչ արժանաւո-  
րութիւնն և տաղանդ ալ ունենան  
այլէկ ընկերութիւն չեն կրնար ը-  
սուիլ. անոր համար անոնց մէջ շատ  
յաճախել չըլլար՝ թէպէտ արհա-  
մարհել ամենեւին չվայլեր:

Բովանդակ խնաստուն մարդիկ-  
ներէ ձևացած ժողովք մը՝ թէպէտ  
և մեծապէս պատուելի են, բայց  
այլէկ ընկերութիւն ըսելով ասոնք  
ալ չեն խնացուիր. որովհետև աշ-  
խարհքիս մէջ չապրելու համար՝  
չեն կրնար անոր համարձակ և քա-  
վարքավար կերպերը գիտնալ: Թէ  
որ կրնանք մեր կողմանէ ալ այսպի-  
սի ընկերութեանց մէջ երես ճերմըկ-  
ցընել՝ լաւ է երբեմն երբեմն գը-  
տուիլը անոնց մէջ. ասով ուրիշ ըն-  
կերութեանց մէջ աւելի սրատիւ  
իշուենանք՝ այնպիսիներուն հետ ալ  
ծանօթ ըլլալու համար:

Այն ընկերութիւններն որ բոլոր  
աշխոյժ ունեցող ու բանաստեղծ  
մարդկանցմէ ձևացած են երիտա-  
սարդաց շատ հաճոյական են, և շատ  
կը զուարճանան եթէ իրենք ալ նոյն

պէս վառվառն ըլլան, իսկ եթէ  
նոյն աշխոյժը չունենան՝ հպար-  
տութեամբ կուզեն անոնցմէ մէկը  
սեսլուիլ: Այլ այսպիսի ընկերու-  
թիւնները խելքով և չափաւորու-  
թեամբ յաճախելու է. աշխոյժ ու-  
նեցող մարդ ըսելը շատ ընտանե-  
կան անուն մի չէ, և քիչ մը վախ  
կը բերէ մարդուս. և սովորաբար  
ուամիկը այնչափ կը վախէ ընկերու-  
թեան մէջ աշխոյժ ունեցող մար-  
դէն, որչափ կնիկ մարդը հրացա-  
նէն, զոր կարծէ թէ ինքնիրեն կըր-  
նայ պարսլուիլ և իրեն մնաս մը ը-  
նել: Բայց սակայն այս մարդկանց  
հետ ծանօթութիւն ունենալ և ի-  
րենց ընկերութիւնն ալ յաճախելը  
լաւ բան է. բայց ոչ այնչափ՝ որ  
հարկ ըլլայ ուրիշ ընկերութիւն-  
ներէն բոլորովին ոտքդ կտրել,  
կամ այնպէս երևայ որ անոնց ըն-  
կերութեան մէջ միայն տեղ ունիս:

Ամեն բանէ աւելի ջանս որ քեզ  
մէ վեր մարդկանց հետ տեսնուե-  
լով չընուատանաս: Քեզմէ վեր  
ընկերութիւն որ կըսեմ՝ իրենց աղ-



նուականութեան կարգովը չեմ  
հասկընար, այլ իրենց արդեանցը  
և աշխարհքիս առջևն ունեցած հա-  
մարմունքովը վեր մարդիկ:

Աղէկ ընկերութիւնն երկու տե-  
սակ է. մէկն որ beau monde կը-  
սուի արքունեաց մէջ առաջինն կար-  
գի մարդիկներէն և ամենէն աւելի  
չքեղ կենաց մէջ եղողներէն կը ձևա-  
նայ. իսկ միւսը անոնցմէ որ իրենց  
մասնաւոր արդեամբը երևելի են  
կամ մէկ մասնաւոր և յարգոյ ա-  
րուեստի կամ գիտութեան մը մէջ  
անուանի են:

Նմանասէս զգուշացիր ցած ըն-  
կերութիւններէ փախչելու, որոնք  
յիրաւի ցած են ըստ ամենայն նշա-  
նակութեանց բառին, ցած ըստ աս-  
տիճանի, ցած ըստ յատկութեանց,  
ցած ըստ կերպերու և ցած ըստ ար-  
ժանեաց: Ունայնասիրութիւնը՝ որ  
մեր շատ յիմարութեանցը, և մեր  
քանի մը յանցանաց աղբիւրն է,  
շատերն ընկղմեց այսպիսի ընկե-  
րութեանց մէջ՝ որ ամեն կողմանէ  
իրենց նկատմամբ ցած էին, որ-

պէս զի այն ընկերուէց մէջ իրենք  
առջինը սեպուին: Իրաւ առջի բե-  
րան ինքն կըլլայ անոնց օրէնք տու-  
ղըն, և ամենքը կը գովեն ու զար-  
մանան իրեն վերայ. բայց քիչ ա-  
տենէն ինքզինքը կ'անարգէ ու լա-  
ւագոյն ընկերութեանց անյարմար  
կըլլայ:

Այսպէս ցուցընելով քեզի թէ  
ինչ ընկերութեանէ պիտի փախչիս,  
և սրը պիտի փնտռես, քանի մը  
խօսք ալ վարմունքի վերայ զուր-  
ցեմ:

Ընկերութեան մէջ վարուելու  
կանոններ.

Երբ նորահաս սլատանի մը՝ որ  
աշխարհքս իրեն համար նոր բան մի  
է, առջի անգամ ընկերութեան մէջ  
կը մտնէ, միտքը կը գնէ որ յարմարի  
ու նմանի անոր, բայց շատ անգամ  
նմանելու նիւթոց մէջ կը սխալի. և  
շատ անգամ լսելով այն խենթ ա-  
նուանները զոր կուտան մարդիկ, լը-  
սելով ազնուական և նորեղուկ ախ-



տեր, և տեսնելով որ ումանք թէ-  
 սկստ ընկերութեանց մէջ կը փայ-  
 լին, և յարգելի ու զարմանալի ե-  
 ղած են, և գիտելով որ այսպիսի-  
 ներն անառակ են կամ գինեմոլ  
 կամ խաղամոլ, անոնց ախարիցը կը  
 հետևին, անոնց կատարելութիւն-  
 ներն չգիտնալով, և կարծեն թէ  
 իրենց համբաւն ու անուշը այս աղ-  
 նուական ըսուած ախարով ունե-  
 ցեր են: Արն որ բոլորովին հակառակ  
 է. վասն զի այս մարդիկն իրենց  
 համարմունքն իրենց արդեամբքը,  
 իրենց գիտութեամբքը, իրենց բա-  
 րեկրթութեամբքը, և իրենց ուրիշ  
 ստոյգ կատարելութիւններովն ըս-  
 տացած են. և ամեն բանաւոր մարդ-  
 կանց մտաց առջևը անարդուած ու  
 նուաստացած են միայն այս ընդհա-  
 նուր և նորելուկ ախարով: Ապա  
 ուրեմն յայանի է որ մարդիկ այս-  
 պիսի խառն բնութիւն ունեցող  
 ներուն կատարելութեանցը համար  
 գէշ ախարուն աչք կը գոցեն, բայց  
 ոչ երբէք զանոնք կարգարացընեն:  
 Աթէ մէկը դժբաղդութեամբ ախար

մը ունենայ՝ պէտք է որ գոնէ իրե-  
 նովը գոհ ըլլայ, չէ թէ ուրիշներու  
 ունեցածն ալ վրան առնէ: Աւրիշ-  
 ներու ախարից հետևելը տասնա-  
 պատիկ աւելի մարդ կորսուցու-  
 ցած է, քան թէ բնական յօժա-  
 րութիւնը:

Ապա ուրեմն ինչ ընկերութեանց  
 մէջ որ երբ՝ ջանանք անոր ստոյգ կա-  
 տարելութեանցը նմանել. օրինա-  
 կենք անոնց մարդավարութիւնը,  
 կերպը, մարդու առջև ելլելը, ու  
 իրենց խօսակցութեան համարձակ  
 ու բարեկիրթ եղանակը. բայց յի-  
 շենք՝ որ որչափ ալ փայլին այս կա-  
 տարելութիւններովս՝ սակայն ի-  
 րենց ախարն է թէ ունին, մէյմէկ  
 բիծ են, որոնց նմանելու պիտի չջա-  
 նանք, ինչպէս որ չենք ուզէր արուես-  
 տական սպիներ ունենալ երեսնիս,  
 տեսնելով որ դեղեցիկ մարդուն մէ-  
 կը դժբաղդաբար բնական սպիներ  
 ունի երեսը: Մանաւանդ թէ պի-  
 տի մտածենք թէ օրչափ աւելի գե-  
 ղեցիկ կըլլար այդ մարդը եթէ զա-  
 նոնք չունենար:



Արդ որովհետև աղէկ ընկերու-  
թեանց մէջ լաւ ընդունելութիւն  
գտնելու խրատները տուի քեզի, կը  
մնայ որ քու առջիգ դնեմ խօսակ-  
ցութեան բարեկիրթ կանոններն  
ալ:

Զ. Խօսակցութեան կանոններ.  
ԽՕՍԻԼ

Ընկերութեան մէջ նայէ որ յա-  
ճախ խօսիս, բայց ոչ բնաւ երկայն-  
վան զի ասով եթէ հաճոյ ալ չըլ-  
լաս՝ գոնէ ասպահով կըլլաս որ լսող-  
ներուն ձանձրութիւն չես տար:

Շատ խօսելէն առաջ ընկերացդ բնա-  
ւորութիւնն հասկընի:

Երևակայութեամբ ըմբռնածդ  
լեզուով ալ արտաբերելէն առաջ՝  
ընկերութեան բնաւորութիւնն ու  
կացութիւնը իմացիր: Ամեն ընկե-  
րութեանց մէջ շատ աւելի ծռած  
ըղիւղներ կան քան թէ շիտակ. և  
շատ աւելի դատաքննութեան ար-

ժանի մարդիկ, քան այնպիսիներ  
որ դատաքննութիւնն ախորժին:  
Անոր համար եթէ առաքինութիւն  
մը երկայն բարակ գովես՝ ուսկից որ  
ընկերութենէն մէկը յայտնապէս  
զուրկ է, կամ ախտ մը պարսաւես՝  
որով որ ուրիշ մը յայտնի ապա-  
կանած է, քու խորհրդածութիւն-  
ներդ՝ թէպէտ և ընդհանուր և մաս-  
նաւորի մը համար զուրցուած չըլ-  
լայ, բայց յարմարելի ըլլանուն՝  
անձնական և ան մարդկանց համար  
զուրցուած կերևան: Այս խորհր-  
դածութիւնս բաւականապէս կը-  
սորվեցրնէ քեզի՝ որ դու ալ կաս-  
կածոտ ու գժդմնոտ չըլլաս, կարծե-  
լով որ ուրիշ մը քեզի համար  
զուրցեր է այն խօսքը՝ որ կրնաս քու  
վրագ առնել:

Պատմութիւնն պատմել և խօսակցու-  
թեան եղանակն հետեանալ:

Խիստ քիչ անգամ պատմութիւն  
պատմէ, այն ալ եթէ խիստ յար-  
մար է և շատ կարճ է. այն պարա-



գայներն որ նիւթին էական չեն մէկդի ձգէ, և խօսքին նիւթէն հեռանալէն զգուշացիր. խօսքին մէջ շատ անգամ պատմութիւն մէջ բերելը՝ երևակայութեան աղքատ ըլլալուն նշան է:

Մէկո՞՞՞ Տը զգեապիս կոճակէն բռնել.

Զըլլայ թէ մէկուն կոճակէն կամ ձեռքէն քաշես՝ քեզի մտիկ ընելու համար. վասն զի եթէ ուրիշներն քեզի մտիկ ընել չեն ուզեր՝ այլ լաւ է քու լեզուդ բռնես քան թէ զանոնք:

Երկայնախօս ու խփառացող ճարտէի.

Երկայնախօս մարդիկ սովորաբար ընկերութեան մէջ խեղճ համբերող մը կը դանեն՝ ու անոնց ականջը փափսալով կամ գոնէ քթի տակէ ձայնով մը երկայն ատեն կը հոգնեցնեն: Այս բանս կարգէ դուրս անկըրթութիւն է, և երբեմն նաև դուրթութիւն, որովհետև խօսակցու-

թեան հիւթը ամենուն հասարակ և հաւասար ստացուածքն է: Բայց թէ որ այս անդուծ շատախօսներէն մէկը զքեզ բռնելու ըլլայ՝ համբերութեամբ մտիկ ըրէ, կամ գոնէ անանկ ձեւացուր, թէ որ արժանի է այս նկատմունքիս. վասն զի բան մը չկայ որ զինքը քեզի այնպէս երախտագէտ ընէ, ինչպէս համբերութեամբ զինքը մտիկ ընելն. ինչպէս նաև բան մը այնպէս չզայրացնենք զանի՝ ինչպէս խօսքին մէջ տեղը զինքը թողուլը, կամ քու անհամբերութիւնդ երեսիդ տրամուծեամբը յայտնելդ:

Խօսող ճարտ ու լընել

Բան մը չկայ որ այնպէս սատիկ ըլլայ ու գծուար մոռցուի՝ ինչպէս քեզի հետ խօսողի յայտնի անուշադրութիւն ցուցնելն. ես շատերն տեսեր եմ որ այս ըսած անուշադրութեանս թերևս անարգութեանն համար իրենք զիրենք կուտեն: Շատերը տեսեր եմ որ ի-



րենց հետ խօսելու ատենդ՝ փոխա-  
 նակ քեզի նայելու ու մտիկ ընելու,  
 աչուրնին առիքը կամ խոսցին մէկ  
 անկիւնը կը անկեն, կամ սրատու-  
 հանին կը նային, կամ շանը հետ  
 կը խաղան, կամ իրենց քթախոտի  
 տուփը ձեռքերնուն մէջ կը դարձը-  
 նեն, կամ քթերնին կը խառնեն:  
 Փոքր, թեթև ու ցնդած մաքի աս-  
 կէ աւելի յայտնի նշան չկայ. և աս-  
 կէց զատ ուրիշ կոպտութիւն մը  
 չկայ՝ որ այնպէս ծանր գայ դիմա-  
 ցինիդ. վասն զի ասով քու կողմա-  
 նէդ յայտնապէս ցուցըցած կըլլաս՝  
 թէ ամենէն փուճ բաներն շատ ա-  
 ւելի մտադրութեան արժանի կը  
 սեպես, քան թէ քեզի հետ խօսո-  
 ղին ըսածները: Ալ դու մտածէ թէ  
 ինչ ասելութիւն և քէն կը սրատ-  
 ճառէ այս կերպ վարմունքն՝ այն  
 ամեն սրտերուն ուր որ քիչ մը անձ-  
 նասիրութիւն կը գտուի: Ըսի և նո-  
 րէն կըսեմ այս տեսակ անձնասի-  
 րութիւնը մարդուս բնութենէն ան-  
 բաժանելի է, ինչ վիճակէ որ կուզէ  
 ըլլայ. նոյն իսկ քու ծառայդ շատ

աւելի շուտով կը մոռնայ ու կը ներէ  
 կերած ծեծը, քան թէ քեզմէ ան-  
 սած արհամարհանաց ու անարգա-  
 նաց յայտնի նշան մը: Ապա ուրեմն  
 չէ թէ միայն ստուգիւ՝ հասկա նաև  
 յայտնի ու դրսուանց ալ քեզի հետ  
 խօսողին ուշագիւր ցցուր լնքղինքդ:

Ուրեշի խօսքի հարեւր.

Կոպտութեան վերջի աստիճան  
 քան կը սեպուի՝ մէկու մը խօսքը  
 կտրել, կամ դու խօսելով, կամ ըն-  
 կերութեան մտադրութիւնն ուրիշ  
 նիւթի վրայ դարձընելով. սղաք  
 ևս աս բանս գիտեն:

Խօսակցութեանն ինչ ատեն  
 աս քան լէ քուր.

Ինչ ընկերութեան մէջ դրտուիս  
 նայէ որ աւելի ուրիշներուն սկսած  
 նիւթին վրայ խօսիս քան թէ քեզմէ  
 նոր նիւթ տաս. եթէ հանձար ու-  
 նիս՝ քիչ շատ կընաս ամեն նիւթի  
 մէջ ալ զանի երեցընել. իսկ եթէ



չունիս, շատ աւելի լաւ է ուրիշի նիւթին վրայ առանց տեղեկութեան խօսիս, քան թէ քեզմէ ընտրած նիւթիդ վրայ ճոխանաս:

Քո գիտութիւնդ ընկերութեան  
Տէջ ծածկէ.

Քանի մի մասնաւոր գիտուած, ներու մէջ միայն քու գիտութիւնդ կրնաս յայտնել. իմաստուն մարդկանց համար սրահէ զանիկայ, և նայէ որ ուրիշները քեզմէ զորով խլեն, քան թէ դու քեզմէ զանոնք երևցընես: Ասով ուրիշներն զքեզ համեստ մարդու տեղ կը դնեն, և թերևս ունեցածէդ աւելի գիտուն կը կարծեն զքեզ. չըլլա՞ թէ ընկերներէդ աւելի գիտուն և ուսեալ երևնալ ուզես. վասն զի ո՞վ որ իր գիտութիւնն կուզէ ցուցընել՝ մէկը մէկալը կը սկսին իրեն հարցմունքներ ընել. և թէ որ վեր 'ի վերանց է իր գիտութիւնը՝ ծաղրելի ու արհամարհելի կըլլայ. իսկ թէ չէ, իմաստակի տեղ կանցնի: Աշխար-

հիս առջև բան մը չկայ՝ որ սյնակն նուազեցընէ արդիւնաւոր մարդուն արժանիքը (որն որ կուզէ միշտ երևնալ), ինչպէս զանիկայ ունեցողին սնասպարծ ցուցամուտութիւնը:

Քաղաքաշարութեամբ դիմախօսէ.

Երբ մէկուն ըսածին կամ կարծիքին դէմ կուզես դնել կամ մերժել՝ նայէ որ կերպդ, դէմքդ, բառերդ և ձայնիդ աստիճանը կակուղ ու ազնիւ ըլլայ. և այն ալ համարձակ ու բնական կերպով՝ չէ թէ արուեստակութեամբ. և նայէ որ դէմ խօսելու ատեն կակղացուցիչ կերպեր գործածես, ինչպէս. Թերևս սխալիմ, Ստոյգ չեմ գիտեր բայց կարծեմ որ, Աւելի կարծէի թէ. և այլն: Չանա որ վէճ մը կամ բանակուուութիւն մը զուարթ կատակաբանութեամբ մը լինցընես, ցցունելու համար որ ոչ դու առնուերես, և ոչ հակառակորդդ կուզէիր զրգուել. վասն զի քիչ մը ատեն երկարած բանակուուութիւն մը եր-



կու կողմի հողիներն ալ քիչ մը ա.  
տեն մէկմէկէ կը պաղեցընէ :

Եւէ կարելի է վեճէ պոռաշոյի :

Արջափ որ կրնաս խառն ըն-  
կերուծեանց մէջ զգուշացիր վիճա-  
բանական ու բանակուռի խօսակ-  
ցուծիւններէ . որոնք անտարակոյս  
խել մը ատեն երկու կողմէն վիճող-  
ներն մէկմէկէ կը հովացընեն . և թէ  
որ վիճաբանուծիւնը տաքնայ ու  
ձայներն բարձրանան , նայէ որ  
աղնուական թեթևուծեամբ մը  
կամ զուարթարար կատակաբանու-  
ծեամբ մը վերջացընես :

Վիճաբանութեան մէջ լատ գիտօր :

Աչ երբէք տաքնալով սրուալով  
վեճ մը պէտք է պաշտպանել . թէ  
պէտ և գիտնանք որ իրաւունքն  
մերն է , մեր կարծիքը չափաւորու-  
ծեամբ ու պաղուծեամբ պէտք է  
զուրցենք , իսկ թէ որ պիտի չըլլայ  
խօսակցուծիւնը ջանանք փոխել ը-

սելով . Մէկզմէկ պիտի չկարենանք  
համոզել , և հարկաւոր բան մ'ալ  
չէ ասիկայ . ուրեմն քիչ մ'ալ ուրիշ  
բանի վերայ խօսինք :

Տեղական պատշաճութիւնն ալ  
նայել :

Յիշէ որ ամեն ընկերուծեանց  
մէջ տեղական պատշաճութիւն մի  
ալ կայ որ պահելու է . և այն բանն  
որ այս ընկերուծեան մէջ շատ պատ-  
շաճ է , կրնայ ըլլալ որ ուրիշ ըն-  
կերուծեան մը մէջ բոլորովին ան-  
պատշաճ ըլլայ , ինչպէս որ շատ ան-  
անգամ կը պատահի :

Զուեշք , Բանախաղ , Կապախա-  
նութիւն .

Բանախաղերը , զաւեշտը , մանր  
սրտամուծիւնները՝ որ այս ինչ ըն-  
կերուծեան մէջ հաճոյական են ,  
ուրիշ ընկերուծեան մէջ անհամ-  
ու ձանձրալի կըլլան : Ընկերուծեան  
մը մասնաւոր յատկուծիւնները ,



սովորութիւնները և լեզուը՝ խօսք  
մը կամ շարժուածք մը մեծ բանի  
տեղ կը դնեն, ուր ընդհակառակն  
նոյն խօսքն ամենևին յարգ մը չու-  
նենար՝ եթէ այն դիպուածական  
պարագայներն մէկտեղ չըլլան: Աս  
բանիս մէջ մարդիկ շատ կը սխա-  
լին, և թէ այն բանն որ զիրենք ու-  
րիշ ընկերուծեան մը կամ մասնա-  
ւոր դիպուածի մը մէջ շատ զուար-  
ճացուց, ճոռոմաբանուծեամբ մը  
կը սկսին ուրիշ ընկերուծեան մը  
մէջ կրկնել. ուր որ ժամանակը ու-  
տեղը յարմար չըլլալուն՝ կամ ան-  
համ կիցնայ բանն, և կամ նաև մե-  
կուն մէկալին կը դաչի: Մանաւանդ  
որ շատ անգամ ասանկ յիմարական  
յառաջաբանուծեամբ մը կը սկսին  
ըսելով թէ, Ձեզի գեղեցիկ բան մը  
ունիմ պատմելու՝ որ աշխարհիս  
մէջ չէ լսուած: Այս կանխաբա-  
նուծիւնը մտիկ ընողները կարծն-  
ցրնէ. որոնք երբոր տեսնեն որ պատ-  
մածը պարտապ բան մի է՝ իրաւամբ  
խենթի տեղ կը դնեն այսպիսի գե-  
ղեցիկ բաներ պատմողը:

Ինչն էր անչին վրայոք լիսուիւ.

Որչափ որ կրնաս ջանա ամեն դի-  
պուածի մէջ քու անձիդ վրայոք  
չխօսիլ. ոմանք յանկարծակի կը սկը-  
սին իրենց վրայ լաւ խօսիլ առանց  
մէկ պատճառ մը կամ առիթ մը ըլ-  
լալու, ասիկայ յիրաւի լրբուծիւն  
կըսուի. ուրիշներն կան որ աւելի  
վարպետուծիւն կըբանեցրնեն, այս-  
ինքն իրենք իրենց դէմ մեղադրանք-  
ներ կը հնարեն, կամ կը սկսին գան-  
դախլ այնպիսի զրպարտուծեանց  
համար՝ զորս ոչ երբէք լսած են,  
որպէս զի իրենք զիրենք արդարացը-  
նեն, և իրենց առաքինուծեանց  
ցանկը ցուցրնեն: Իրաւ, կըսեն, գի-  
տենք որ արտասուց բան է ինքն իր  
վրայ այսպէս խօսիլը, և իրենք ալ  
այս բանիս շատ հակառակ են, և  
թէ որ իրենց անունն անիրաւ տեղ  
այնչափ ծամծմուած չըլլար՝ չէին  
խօսիր: Բայց այս ունայնամտու-  
ծեան առջև քաշուած պարկեշ-  
տուծեան քօղը շատ բարակ ու



Թափանցիկ ըլլալուն՝ չկրնար զանի  
ծածկել. նաև անոնցմէ՝ որոնք հա-  
տարակ թափանցողութիւն մի միայն  
ունին:

Ուրիշներն ալ աւելի չափաւո-  
րութեամբ և ճարտարութեամբ ա-  
ռաջ կերթան. իրենք զիրենք յան-  
ցաւոր կը խոստովանին ամեն գլխա-  
ւոր առաքինութիւններով. նախ  
զանոնք տկարութեանց կարգը դնե-  
լով, և յետոյ խոստովանելով իրենց  
խեղճութիւնը՝ որ այսպիսի տկա-  
րութեանց մէջ կը գտուին. զոր օ-  
րինակ թէ չեն կրնար խեղճութեամբ  
թշուառացած մարդ մի տեսնել, ա-  
ռանց սաստիկ զգածուելու՝ և իրենց  
օգնելու ջանալու: Չեն կրնար ի-  
րենց նմաններն թշուառութեան  
մէջ տեսնել՝ առանց իրենց ձեռք  
տալու՝ թէպէտ և իրենց վիճակն ալ  
չկարենայ տանիլ: Չեն կրնար ճշ-  
մարտութիւնը չխօսիլ, թէպէտ և  
գիտեն որ երբեմն անխոհեմութիւն  
է: Վերջապէս կը խոստովանին թէ  
այս ամեն տկարութիւններս ունե-  
նալնուն՝ աշխարհքիս մէջ չեն կրը-

նար ասլիլ, ևս առաւել առաջ եր-  
թալ: Բայց հիմա այլ ատենն ան-  
ցած է ուրիշ ճամբայ բռնելու, և  
պէտք է որ ինչպէս գիտեն այնպէս  
առաջ երթան:

Թէպէտ և այս ըսածս նոյն իսկ  
թատրոնի համար ալ շատ ծաղրա-  
կան և փոթորցուցած կերևայ, բայց  
աշխարհիս հասարակաց թատրոնին  
վրայ շատ անգամ կերևան այսպիսի  
այլանդակութիւններ: Այս ունայ-  
նամտութեան և զրպարտութեան  
սկիզբը՝ այնպէս զօրաւոր է մար-  
դուս բնութեան մէջ՝ որ ինչուան  
ցածագոյն նիւթերու ալ կիջնէ. և  
շատ անգամ կը տեսնենք որ մարդիկ  
կը նային այն բաներուն մէջ ալ գո-  
վեստ մը որսալ՝ ուր որ յիրաւի գո-  
վելու բան մը չկայ, թէ և զուրցած-  
նին բոլոր իրաւ ըլլար: Օրինակի հա-  
մար մէկը կը հաստատէ թէ ինքը  
սուրհանդակով հարիւր մզոն ճամ-  
բայ ըրեր է՝ վեց ժամուան մէջ. որ  
յայտնի սուտ է. բայց ենթադրելով  
թէ ճշմարիտ ալ ըլլայ՝ ասկէց ինչ օ-  
գուա. դնենք թէ ինքը լաւ սուր-



հանդակ մի է. ուրիշ: Ուրիշ մըն ալ  
կը հաստատէ, նաև երգմունքով՝  
թէ ինքը մէկ ժուժինն եօթը ութը  
շիշ գինի անկեր է: Այսպիսի մար-  
դը սուտըրուց կարծելը գթութիւն  
է, ապա թէ ոչ պէտք է հաստա-  
տենք որ անբանին մէկն է:

Դեռ այսպիսի հազարու մէկ խեն-  
թութիւններ ու այլանդակութիւն-  
ներ կան՝ որոնց մէջ կիյնան մար-  
դիկ պարծենկոտութեան համար  
և գրեթէ միշտ ծայրը իրենց վախ-  
ճանին հակառակ կելլէ: Այս ան-  
պատշաճութիւններէս ազատելու  
մի միայն միջոցը՝ մեր վրայօք չխօ-  
սիլն է. բայց պատմութեան մը մէջ  
թէ որ հարկաւոր ըլլայ զմեզ յիշել  
պէտք է զգուշանանք այնպիսի բառ  
մը բերներնէս փախցնել՝ որ ուղ-  
ղակի կամ անուղղակի կերպով մե-  
զի գովեստ մը որսալու համար սե-  
պուի: Մեր բնութիւնն ինչ որ է  
արդէն ուրիշի ծանօթ է, և զայն ի-  
մանալու համար մեր խօսքին կարօտ  
չեն:

Ինչ ալ կարենանք ըսել՝ մեր խօս-

քը մեր պակտութիւնները չեն կըր-  
նար պարտըկել, կամ մեր կատարե-  
լութեանցը աւելի պայծառութիւն  
մը տալ. այլ ընդհակառակն շատ  
անգամ առջիններն աւելի յայտնի  
կընեն, և վերջիններն աւելի կը մը-  
թընցընեն: Աթէ մենք մեր ար-  
դիւնքը լռենք, ոչ նախանձը, ոչ  
արհամարհանքը և ոչ ծաղրը կրնան  
արդիւլել կամ նուազեցընել մեզի  
իրաւացի կերպով տրուած գովես-  
տը: Բայց եթէ ամեն նիւթի մէջ  
մենք մեր ներբողութեանն ըլլանք՝ որ-  
չափ ալ վարպետութիւն բանեցը-  
նենք ու ծածկել ձեացընենք, ա-  
մեն մարդ մեզի դէմ կը զինին, և  
վախճաններնուս ամենեւին չենք հաս-  
նիր:

Մտն ու գաղանախորհուրդ մի  
Էրեւնար.

Նայէ որ ամենեւին ծածուկ ու  
գաղանախորհուրդ չերևաս. վասն  
զի ոչ միայն սիրելի բնութիւն մի չէ  
ասիկայ, այլ նաև շատ կասկածելի



ու անվտոմահանալի. թէ որ դու ու-  
րիշի գաղանախորհուրդ երևաս՝ ու-  
րիշներն ալ իրաւամբ քեզի հետնոյն  
պէս կըլլան, և անով քան մը չես  
խմանար: Ամենէն մեծ ճարտարու-  
թիւնն այն է որ մարդ գրտուանց  
համարձակ, բայց և մարդամօտի  
կերպ մը ունենայ. իսկ ներսէն իտ-  
հեմ ու շրջահայեաց, ինքն իր վրայ  
զգուշանայ, բայց միանգամայն ար-  
տաքուստ բնական համարձակու-  
թեամբ մը ուրիշները սրտակցու-  
թեան յորդորէ: Գիտցիր որ որև  
լցէ ընկերութեան մէջ մեծ մասը  
կրնան քու մէկ անխոհեմ ու ետևը  
առջևը չմտածած խօսքդ իրենց կող-  
մը քաշել, թէ որ տեսնեն որ անկէց  
իրենց օգուտ մը կրնայ ըլլալ:

Քեզի հետ խօսողին երեսը նայէ.

Երբոր մէկուն հետ կը խօսիս՝  
միշտ անոր երեսը նայէ. այսպէս չը-  
նէն ներքին յանցաւորութեան մը  
նշան է. բայց ասկէց՝ չես կրնար ալ  
օգտակար կերպով դիտել անոնց

չարժմունքէն՝ թէ ըսածդ ինչ աղ-  
դեցութիւն կրնէ իրենց վրայ:  
Մարդկանց ճշմարիտ զգածմունքը  
խմանալու համար՝ ես աւելի աչքիս  
կըլստահիմ քան թէ ահրնջիս. վասն  
զի ինչ որ կուզեն ինձ հաւտացընել  
կրնան ըսել. բայց ինչ որ ինձի չեն  
ուզեր իմացընել՝ դժուարաւ կրնան  
ծածկել՝ որ իրենց աչքէն չկարե-  
նամ իմանալ:

Չարախօսութիւն.

Աւանձին բամբասանքը ոչ պէտք  
է մտիկ ընել, և ոչ ուղեւով ուրիշի  
հաղորդել. վասն զի ուրիշի վատա-  
համբաւ ըլլալը՝ թէպէտ առ ժամս  
կրնայ մեր սրտին չարութիւնը կամ  
հպարտութիւնը յագեցընել, բայց  
լսողը երբ հանդարտ կերպով մտա-  
ծէ՝ մեր այս գէշ սովորութենէն ա-  
զէկ հետևանքներ չկրնար հանել մեր  
վրայ: Բամբասանքը գողութեան  
պէս է, ո՛վ որ կընդունի՝ գողին հա-  
ւասար չար կը սեպուի:



Ընդհանուր դասադասութիւններէ  
 զգուշացիւր .

Խօսակցութեան մէջ չըլլա՛ որ  
 ընդհանուր ընկերութիւն մը վար  
 զարնես . վասն զի անով անօգուտ  
 տեղը շատերը թշնամի կրնես քեզի .  
 կանանց մէջ ալ արանց պէս թէ ա.  
 ղէկներ կը գտուին , և թէ գեշեր .  
 մանաւանդ թէ արանց չափ և աւելի  
 ալ աղէկներ կը գտուին : Նոյն կա.  
 նանը կրնայ յարմարցուիլ նաև օ.  
 րէնագիտաց , զինուորաց , քահա.  
 նայից , պաշտատեանաց և քաղա.  
 քացւոց համար ալ , ևն : Ասոնք ա.  
 մենն ալ մարդ են , քիչ շատ նոյն  
 կրից և զգածմանց ենթակայ , ի.  
 րենց կերպերովն միայն մէկմէկէ  
 տարբերելով՝ այլ և այլ տեսակ ա.  
 ռած կրթութիւններնուն համե.  
 մատ . ուստի անխոհեմութիւն և  
 անիրաւութիւն կըլլայ զանոնք բո.  
 լորը մէկէն վար զարնելը . վասն զի  
 առանձին մարդիկ երբեմն իրենց ե.  
 զած անիրաւութեանցը կը ներեն ,

բայց ընկերութիւնք ոչ երբէք : Շատ  
 երկատասարդներ կարծեն թէ եկե.  
 ղեցականները բամբասելը՝ խելացի  
 ու զուարթախօս մարդու բան ըլ.  
 լայ . բայց այս բանիս մէջ մեծապէս  
 կը սխալին . որովհետև կարծեմ թէ  
 ես քահանայք ալ ուրիշներու պէս  
 մարդ են . և սև զգեստ հագնելնուն  
 համար ոչ աղէկ կրնան ըլլալ , ոչ  
 քէշ : Այլ ամեն ընդհանուր դա.  
 տաքննութիւններն թէ ազգաց վրայ  
 ըլլայ թէ ընկերութեանց , կատակա.  
 բանութեան սովորական ու անշահ  
 նիւթեր են անոնց , որոնք իրենք զի.  
 րենք աշխոյժ ունեցողի տեղ կը դը.  
 նեն՝ առանց ունենալու . և անոր  
 համար ալ միշտ հասարակ տեղեաց  
 կատարելինն : Առանձին մարդկանց  
 վրայ քու յատուկ ճանաչողու.  
 թեամբդ դատաստան կարէ , և ոչ  
 թէ իրենց սեռին , արուեստին և ա.  
 նուանակոչութեան նայելով :



Մէկուսն կերպը (ԲախլիԲԸ) Յեւոյնէն:

Միմոսուծիւնը որ սղտի ու ցած մտքերու սովորական և ախորժելի զուարճուծիւնն է, մեծամիտ մարդկանց համար կարգէ դուրս արհամարհելի բան է, և խեղկատա կուծեանց մէջ ամենէն ցածն ու ամօթալի բանն է. ուստի ոչ մենք պէտք է որ ընենք, և ոչ ուրիշի ըրածը գովենք. չէ թէ միայն որուն որ կերպը ԲախլիԲԸ կրնես՝ զանիկայ նախատած կըլլաս, այլ և ինչպէս որ առաջ ըսի՝ նախատինքը ոչ երբէք կը մոռցուի:

Հայկոյանոք:

Կան մարդիկ՝ ինչպէս որ շատ անգամ կը լսենք, որ լաւ ընկերուծեանց մէջ ալ իրենց խօսակցուծիւնը հայհոյանքներով կը մալահոնեն, կարծելով թէ անով կազուորցընեն ըսածնին. բայց այս ևս դիտելու ենք որ այսպէս ընողներն կերպով մը սղա-

տիւ չեն ըներ իրենց յաճախած ընկերուծեան՝ սղէկ ընկերուծիւն ըսուելուն, այլ ընդհակառակն ցած կըրծուծեան մարդիկ են. վասն զի առանց մէկ արդարացուցիչ փորձուծիւն մը ունենալու հայհոյելը՝ չէ թէ միայն մեծ մեղք է, հասլանաւ կոպտուծիւն և չարուծիւն:

Ժողով:

Ընկերուծեան մէջ ինչ որ ալ լսենք՝ հաճոյ չըլլար թէ որ գուռուծեամբ և անպատկառուծեամբ կամ վախկոտ կերպով մը և յիմարական ու անդէպ ժպիտով մը զուրցելու ըլլանք. և աւելի ևս անհաճոյ կըլլայ թէ խօսքերն ծամծամենք կամ քթերնուս տակէն շփոթ ու անշընորհք կերպով մըմուանք:

Ոչ քո և ոչ ուրիշի անանջին իրողութեանց վրայ մի խօսիր:

Ոչ երբէք քու կամ ուրիշի անական իրողուծեանցը վրայ խօսիս:



վասն զի քուկլինդ ուրիշի ձանձրու-  
թիւն միայն կրնայ ըլլալ. իսկ ու-  
րիշներունը քեզի օգուտ մը չունի:  
Եստ ալ վտանգաւոր նիւթ է. վասն  
զի բաղդ սեպելու է թէ որ ասով  
ուրիշի տկար կողմին չգաչիս: Այս  
բանիս մէջ ուրիշի ցուցուցած դրսի  
կերպին պէտք չէ վտահիլ, որն որ  
չատ անգամ հակառակ է ներքին  
կացութեան առն և կնոջ, ծնողաց  
և իրենց սրգոցը, բարեկամ կար-  
ծուած մարդկանց մէջ, և այլն. այն-  
պէս որ մտքերնիս բոլորովն բարի  
ալ ըլլայ՝ շատ անգամ խիստ անհա-  
ճոյ երկպառակութիւններ կը ձգեն  
ուրիշներու մէջ:

Որոշ խօսակցութեան.

Բան մը չկայ որ զմարդ այնպէս  
ասուչ երեցընէ ընկերութեան մէջ՝  
ինչպէս անհամ կատակ մը կամ  
չհասկցուելու բանախաղութիւն մը,  
որուն կը հետեւի ընդհանուր լռու-  
թիւն մը, ուր որ զուրցողը կը սպա-  
սէր որ ամենքը ծափ պիտի դարնեն

ըսածին. և աւելի վատ է այդ մար-  
դուն բանը՝ թէ որ մէկը իրեն աղա-  
չէ որ բացատրէ իր ծաղրաբանու-  
թիւնը կամ բանախաղը. ուր որ ի-  
րեն անշնորհք ու շփոթ կերպը ա-  
ւելի դիւրին է ըմբռնել քան թէ բա-  
ցատրել:

Խորհրդաւոր հոսիւն.

Զգուշացիր մէկ ընկերութեան  
մէջ լսածդ՝ ուրիշ ընկերութեան  
մէջ չպատմելու. անտարբեր կար-  
ծուած բանը բերնէ բերան անցնե-  
լով՝ կարծած էդ աւելի վտանգաւոր  
հետեւանքներ կուենան: Ընկերու-  
թեան մէջ տեսակ մը ընդհանուր և  
լռելեայն վտահութիւն մը կայ ո-  
րով կը պարտաւորի մարդ հոն տեղ  
խօսուածները դուրսը չյայտնելու,  
թէսպէս և մասնաւոր կերպով լռել  
չապստրուի: Այս տեսակ խօսք տա-  
նող բերող մարդը՝ ինքզինքը հազար  
ու մէկ կնճիռներու ու վէճերու մէջ  
կը ձգէ, և ուր որ երթայ երես  
չգաներ կամ դոնէ պաղութեամբ  
զինքը կընդունին:



Խօսակցութիւնք ընկերութեան յարմար  
ԸԼԼ՝

Միշտ նայէ որու հետ որ կը խօսիս՝ խօսքդ իրեն յարմարցընես . կենթադրեմ որ նոյն բանը և նոյն կերպով չես խօսիր եպիսկոպոսի մը , իմաստասիրի մը , նաւասպետի մը և կնիկան մը հետ :

Բնա՝ Քի կարծե՞ր որ ընկերութիւնը  
+՝ ԼԵՄԻ ԿԵ ԾԻԾԱՂԻ .

Հասարակ և ցած կրթութեան մարդիկ՝ երբոր ազէկ ընկերութեան մէջ կը գտուին՝ կարծեն թէ ամենուն մտադրութիւնը իրենց վրայ դարձած է . թէ որ մէկ քանի հոգի մէջերնին փսփսան , անշուշտ իրենց համար կը կարծեն . թէ որ ծիծաղին՝ երենց վրայ կառնեն . և թէ որ գիպուածով անանկ երկդիմի խօսք մը զուրցուի՝ որ քաշքշած մեկնութեամբ իրենց վրայ յարմարի , մրտաբերնին կը դնեն որ իրենց համար

ըսուեցաւ այդ խօսքը . և անով առջի բերան կը խռովին և յետոյ կը կատաղին : Այս սխալ կարծիքը շատ ազուրկ կերպով ծաղրի կառնէ Աբրըսոյ այն հնարագիտութեան մէջ ուր կըսէ . « Ապահով եմ որ խօսքերնին իմ վրաս էր՝ որովհետեւ այնպէս պատրուտուելով կը ծիծաղէին » : — Իսկ բարեկիրթ մարդը կը կասկածի ևս՝ դրսուանց չցուցընէր թէ ընկերութիւնը զինքը կարհամարհէ , կանարգէ կամ ծաղր կընէ . եթէ ոչ այնպէս յայտնի ըլլայ բանն՝ որ իր պատիւն պահանջէ արդարապէս վրէժխնդիր ըլլալու : Ընդհակառակն հասարակ մարդ մը կասկածոտ ու նախանձաւոր կըլլայ , և սղտի բաներու համար կը կատաղի կը բորբոքի . կարծէ որ ուրիշները զինքը կարհամարհեն , ինչ որ ըսուի իր վրայ կառնէ , ընկերներն յանկարծ եթէ ծիծաղին՝ միտքը կը դնէ թէ իրեն համար է . անով կը կատաղի կը խստանայ , և անկիրթ խօսք մը կը զրուցէ . անով ինքզինքը յիրաւի ծաղրելի կընէ , միտքը դնելով թէ



ըրածը աշխուժութիւն է և իր ան-  
ձին սրաշտպանութիւն: Հասարակ  
մարդու խօսակցութենէն ալ մէկէն  
կիմացուի իր դաստիարակութեան  
և ընկերութեան ցածութիւնը՝ ու-  
րոնց քովն որ կը յաճախէ. վասն  
զի իր խօսքը գրեթէ միշտ իր անա-  
կան գործոցը վրայ է, կամ իր ծա-  
ռայիցը վրայ, կամ թէ ինչ կարգ  
կանոն սրահել կուտայ իր տանը մէջ  
և իր դրացիներուն մանր մունր գի-  
սուածներու վրայ. և այս ամէն  
բանս այնպիսի ճոռումութեամբ կը  
պատմէ՝ իբրև թէ հարկաւոր բաներ  
ըլլային. վերջապէս փճախօսի մէկն  
է:

#### Ծանրութիւն.

Նայուածքի ու շարժուածքի մէջ  
քիչ մը արտաքին ծանրութիւնը  
մարդուս վսեմութիւն մի կուտայ,  
առանց աշխոյժը ու սիրելի կերպը  
կորսուցընելու: Երեսի անգաղար  
ժպիտ մը և մարմնոյ թեթև շար-  
ժուածքը՝ մտքի տկարութեան  
յայտնի նշան է:

#### Խնայութիւն.

Յիմարն շատ աւելի ստակ կը  
վասնէ առանց իրեն անուշ մը կամ  
օգուտ մը ընելու, քան ինչ որ խե-  
լացի մարդ մը կը ծախէ երկուքին  
համար ևս. վերջինը իր ստակը իր  
ժամանակին սէս կը գործանէ, ա-  
նանկ որ բնաւ դանկ մի մէկէն ու  
վայրկեան մը մէկալէն չգործածէր՝  
ինչուան որ հարկաւոր կամ բանա-  
ւոր կերպով հաճոյական բան մը  
չըլլայ՝ իրեն կամ ուրիշի համար.  
Իսկ առաջինը հարկաւոր չեղածը  
կը գնէ, և հարկաւորին համար չը  
վճարէր: Չարդեղինաց խանութի մը  
առջեւն չկրնար անցնիլ՝ առանց  
սիրտը կասկուելու. և քթախոտի  
տուփերը, ժամացոյցները և գաւա-  
զանի գլուխները իր քսակը կը պար-  
պեն: Իր ծառայները և վաճառա-  
կանները խօսքը մէկ կընեն իրեն  
անհոգութեամբը զանի խաբելու. և  
քիչ ատենի մէջ կը զարմանայ տես-  
նելով որ այնչափ փուճումով խա-



ղալիքներուն մէջ՝ ճշմարտապէս  
հանգստարար և կենաց հարկաւոր  
բաները չունի:

Ամենէն ճոխ հարստութիւնն ալ  
առանց հոգի ու կարգաւորութեան  
չկրնար հարկաւոր ծախուց բաւել,  
իսկ անոնցմով՝ սղախի հարստու-  
թիւնն ալ բաւական է: Որչափ որ  
կրնաս՝ նայէ որ գնած բանդ մէկէն  
վճարես, և վճրագիր ընելէ խորշէ,  
և ստակը քու ձեռքովդ վճարէ և  
ոչ ծառայի ձեռքով, որ միշտ կուզէ  
իրեն համար բան մը շահիլ, կամ  
բարի ձեռք մը կը պահանջէ՝ ըսե-  
լով թէ հաճոյական բերան գործա-  
ծեր է: Իսկ երբ հարկ ըլլայ վճրա-  
գիր ընել, ինչպէս ուտելու, խմելու  
ու զգեստեղինաց համար, և այլն,  
նայէ որ զայն ալ քու ձեռքդ ամսէ  
ամիս վճարես: Զըլլած որ սուտ խնա-  
յութեամբ հարկաւոր չեղած բան մը  
գնես՝ ըսելով թէ աժան գտայ, կամ  
անխելք հպարտութեամբ մը՝ սուղ  
ըլլալուն համար: Հաշուէգիր մը  
բանէ ամեն առածիդ ու վճարածիդ.  
վասն զի ո՛վ որ առածն ու առածը

գիտէ՝ ամենեւին հաւասարակշռու-  
թիւնը չկորսուցընէր: Ասով չեմ  
ուզեր ըսել թէ ամեն կառք մը  
բանելու կամ թատրոնի տոմս մը առ-  
նելու համար ծախսած դանկերուն  
կամ խերլէշներուն հաշիւ բանես,  
որն որ ծախսած ժամանակդ ու բան՝  
քրդ չարժեր, այս մանրախուզու-  
թիւնը թող մէկ սակի վրայ դու-  
դղացող ագահներուն, բայց խնայու-  
թեան՝ ինչպէս նաև կենացդ ամէն  
գործոցը մէջ, յիշէ որ ամեն կարևոր  
բանին հարկաւոր մաադրութիւնն  
ընես, իսկ նուաստ բաներն պատշա-  
ճապէս արհամարհես:

### Բարեկամութիւն.

Պատանիք սովորաբար անխոհեմ  
սրարզութիւն մը ունին՝ որով շատ  
անգամ վարպետորդի ու փորձա-  
ռութիւն ունեցող մարդիկ զանոնք  
գիւրաւ կորսան ու իրենց խաղաղիկ  
կրնեն. և այն ամեն սատանորդի-  
ներն ու խենթերը՝ որ իրենց կըսեն  
թէ իրեն բարեկամներն են՝ յիրաւի



այնպէս կը կարծեն զանոնք . և այս  
 ձևացեալ բարեկամութեան բողոքո-  
 վին անխոհեմաբար վստահին իրենց  
 շատ սուղի ու միասու կը նստի, ու  
 շատ անգամ զիրենք կը կործանէ .  
 ուստի պիտի լաւ զգուշանայս այս  
 ինքնամատոյց բարեկամութիւննե-  
 րէն: Ընդունէ զանոնք մեծ քաղա-  
 քավարութեամբ, բայց միանգա-  
 մայն մեծ անվստահութեամբ, և  
 մարդավարութեամբ պատասխանէ  
 անոնց՝ բայց ոչ բնաւ սրտակցու-  
 թեամբ: Մի կարծեր թէ մարդիկ  
 զքեզ տեսնելուն պէս կամ քիչ մը  
 ատեն հետդ վարուելով՝ մէկէն բա-  
 րեկամ կը լան քեզի: Ճշմարիտ բա-  
 րեկամութիւնը կամաց կամաց կա-  
 ճի, և ոչ երբէք կը բարգաւաճի ին-  
 չուան որ փոփոխակի ծանուցեալ  
 արդեանց բուն հիման վրայ՝ պա-  
 սուլասաւած չըլլայ:

Երիտասարդաց մէջ ուրիշ տե-  
 սակ բարեկամութիւն մի ալ կայ՝  
 միայն անուամբ. որն որ քիչ մը ա-  
 տեն վառ կը մնայ, բայց քիչ ալ  
 կը գիմանայ. այս բարեկամութիւնս

յանկարծ կը ծնանի երբ երկու հոգի  
 մէկմէկու կը հանդիպին ախտից  
 կամ անառակութեան ճամբուն  
 մէջ. յիրաւի ինչ աղուոր բարեկա-  
 մութիւն, և ինչպէս լաւ ամրացած՝  
 գինովութեամբ և անբարեխառնու-  
 թեամբ. ասոր աւելի կը վայլէր բա-  
 րոյական ու բարեկրթութեան դէմ  
 դաւակցութիւն ըսել, և քաղաքին  
 դատաւորներն պէտք էին զանի  
 պատժել. և սակայն այնչափ լրբու-  
 թեան ու յիմարութեան հասան  
 մարդիկ՝ որ այս դաշնակցութեանս  
 ալ բարեկամութիւն ըսին: Ասոնք  
 չար վախճաններու համար մէկմէկու  
 փոխ ստակ կուտան, և իրենց մեղ-  
 սակիցներուն համար պաշտպանողա-  
 կան ու միասողական կռիւներու մէջ  
 կը խառնուին. ինչ որ գիտեն չեն գի-  
 տեր մէկմէկու կը հաղորդեն. և եր-  
 բոր յանկարծական դիպուած մը զա-  
 նոնք ցրուէ՝ այլ մէկմէկ չեն յիշեր  
 բայց եթէ այն ատեն երբ կը հար-  
 կաւորին իրարու անխոհեմ սըր-  
 տակցութիւնը մատնել ու ծաղրել:



Երբոր մէկը երգումստատա ըւ-  
լալով՝ կուզէ քեզի բան մը հաւատա-  
ցընել, որ ինքնիրեն այնչափ հաւա-  
նական է՝ որ ըսելն միայն բաւական  
էր համոզելու համար, հաստատ  
գիտցիր որ կուզէ զքեզ խաբել, և  
ինքը մեծ շահ մը ունի անկէց. ապա  
թէ ոչ այնչափ աշխատանք յանձն  
էր աւներ:

Նայէ որ մեծ տարբերութիւն  
դնես ընկերաց ու բարեկամաց մէջ.  
Վասն զի ասորթելի ու հաճոյական  
ընկեր մը կրնայ անյարմար ու խիստ  
միաստակար բարեկամ մը ըլլալ,  
ինչպէս որ յիրաւի շատ անգամ կըլ-  
լայ: Սովորաբար մարդիկ քու բա-  
րեկամացդ վրայ ինչ համարմունք որ  
ունին՝ քու վրագ ալ նոյնը կուենե-  
նան. անոր համար սպանիացւոց ա-  
ւակը շատ ճշմարիտ է որ կըսէ « Ըսէ  
ինձի որուն հետ կը վարուիս, և ես  
քեզի ըսեմ թէ ո՞վ ես »: Կրնան  
նաև մտքերնին դնել իրաւամբ թէ  
չար ու յիմար մարդկանց հետ բա-  
րեկամութիւն ընողն՝ շատ գէշ բան  
մը ունի ընելիք և ուրիշներէն կուզէ

ծածկել: Բայց միանգամայն չա-  
րերու ու յիմարներու բարեկամու-  
թենէն խորշելու ատենդ, եթէ այդ  
ալ բարեկամութիւն կրնայ կոչուիլ,  
պէտք չէ որ անմտութեամբ կամ  
առանց գրգռուելու պատճառ մը  
ունենալու՝ զանոնք քեզի հետ թըշ-  
նամացընես. վասն զի ասոնց խում-  
բերնին ալ շատուոր են. և ես աւե-  
լի ասպահով չէզոքութիւն մը կու-  
զեմ ունենալ քան թէ դաշնակցու-  
թիւն կամ սրատերազմ ասոնցմէ մէ-  
կուն հետ: Իրենց աստիցը և յի-  
մարութեանցը կրնաս յայտնի թըշ-  
նամի ըլլալ, առանց անձնական թըշ-  
նամի մը ճանչցուելու իրենցմէ: Ի-  
րենց բարեկամութենէն ետև ամե-  
նէն աւելի վտանգաւոր բանը իրենց  
թշնամութիւնն է: Իրեթէ ամեն  
մարդու հետ ճշմարիտ զգուշաւո-  
րութիւն մը ունեցիր, իսկ երևելի  
զգուշաւորութիւն մէկու մը հետ մի  
ունենար, վասն զի զգուշաւորու-  
թիւն ցուցընելը անհաճոյ բան է,  
իսկ զգուշաւոր չըլլալը շատ վտան-  
գաւոր: Քիչ մարդիկ կան որ միջին



Ճամբան կարենան գտնել. շատերը  
փուճուճուճ քաներու համար ծա-  
ղրելի խորհրդապահութիւն մը կը  
ցուցնեն, ուրիշներն ալ ինչ որ  
գիտեն անխորհրդաբար ուրիշի կը  
յայտնեն:

### Բարեկրթութիւն.

Բարեկրթութեան ճշմարիտ սահ-  
մանն այս է. « Սրբասիք առատու-  
թեան ուղղադատ մտաց և բարեբա-  
րոյութեան, և սակաւ ինչ անձնու-  
րացութեան առ սէր այլոց, ակնկաց  
լութեամբ ընդունելոյ և յայլո-  
զնոյն օրինակ ներողամտութեան »  
Միայն բարեկրթութիւնն է ո-  
ւաջի անգամ մէկուն հետ տեսնու-  
ելնուս իրենց սիրտը մեր օգտին հա-  
մար կը շահինք. ուր աւելի մեծ  
կատարելութիւններն յայտնուելու  
համար երկայն ժամանակ հարկա-  
ւոր է: Բայց բարեկրթութիւն ըսե-  
լով չենք հասկընար խորունկ ծախ-  
ներն և սովորական արարողութիւն-  
ներն, հասլա համարձակ, ազնուա-  
կան ու սլաակառոտ կերպ մը:

Յիրաւի ուղղադատութիւնը պէտք է  
որ շատ անգամ զբարեկրթութիւնը  
չափաւորէ. վասն զի ինչ որ այս ա-  
տեն կամ այս մարդուս հետ աղ-  
նուականութիւն կը սեպուի, ուրիշ  
ատեն ուրիշ մարդու հետ կոպտու-  
թիւն կը լայ. բայց սակայն բա-  
րեկրթութեան քանի մը ընդհա-  
նուր և անփոփոխ կանոններ ալ  
կան. զոր օրինակ մէկուն այս կամ ու  
միայն սլատասխան տալը՝ առանց ա-  
ւելցընելու Տէր կամ Տէրն բառերը  
(ինչպէս որ շատ անգամ կը սլատա-  
հի) միշտ կարգէ դուրս կոպտու-  
թիւն կը սեպուի. նմանապէս քեզի  
հետ խօսողին լաւ ուշադրութիւն  
չդնել և կիրթ սլատասխան մը չը-  
տալ. վասն զի այս կերպով մեզի  
հետ խօսողը միտքը կը դնէ թէ զինքը  
կարհամարհենք, և զինքը արժանի  
չենք սեպեր մեր մտադրութեանն ու  
սլատասխանին:

Բարեկիրթ մարդը կը ջանայ ի-  
րեն հետ խօսողին հաճոյարար կեր-  
պով սլատասխան տալ, սեղանի նըս-  
տած ատենին յետին տեղը կը



բռնէ, բայց եթէ զինքը աւելի վեր հրամցընեն. առջի գինին տան ակնոյցը կենդանութեանը կը խմէ, յետոյ տանախրոջը. անշնորհք ու աղտոտ կերպով չուտեր. ուրիշներու կեցած ատեն ինք չնստիր. և ամեն բան հաճոյարար կերպով մը կընէ, և ոչ բնաւ ծանր ու անախորժ դէմքով մը, որպէս թէ ակամայ ընեն:

Բան մը չկայ որուն հասնելը այնպէս դժուար ըլլայ և ունենալը այնպէս հարկաւոր ինչպէս կատարեալ բարեկրթութիւնը, որն որ հաւասարասէս հեռի է և ցուրտ արարողասիրութենէն, և աներես յանդրգնութենէն, և անշնորհք վախկոտութենէ: Քիչ մը արարողութիւնը երբեմն հարկաւոր է, չափաւոր հաստատութիւնը ամենակարեւոր է, իսկ անշնորհք համեստութիւնը խիստ անարժան բան է:

Առաքինութիւնն ու դիտութիւնը ոսկւոյ պէս իրենց ներքին յարգնունին. բայց թէ որ հարկաւոր մաքրութիւնը չունենան՝ իրենց փայ-

լունութեանը մեծ մասը կը կորսունցընեն. և շատերն փայլուն պըղինձը աւելի վեր կը սեպեն քան թէ չգործուած ոսկին: Փրանկաց սիրելի, զուարթ ու բարեկիրթ կերպը ո՞րչափ պակասութիւննին կը ծածկէ:

Իմ բարեկամս Լորտ Պէքըն կըսէ թէ, « Հաճոյական կերպ մը մշտնջենաւոր յանձնարարութեան թուղթ մի է » . և յիրաւի արժանեաց հաճոյական աւետիք մի է, և արդեանց ճամբայն կը դիւրացընէ:

Բարեկիրթ մարդ մը արքունեաց արարողութեանցը և մասնաւոր սովորութեանցն ալ տեղեակ պէտք է ըլլայ. Վեննա կայսեր առջև մարդ փոխանակ ծուլու՝ խօսքով քաղաքավարութիւններ կընէ. Փրանկիա թագաւորին ծռիլ և ձեռքը պագնել չկայ. իսկ Սպանիա և Անգլիա թէ պէտք է ծռիլ և թէ ձեռքը պագնել. այսպէս ալ ամեն արքունիք իրենց առանձին սովորութիւններն ունին՝ որոնց այցելութեան գացողներն առաջուց պէտք է տե-



դեկանան, որպէս զի սխալ ու ան-  
շնորհք բաներ չպատահին:

Քիչերը մանաւանդ թէ ոչ ոք ի-  
րենցմէ շատ վեր ճանչցած մարդ-  
կանց պարտուպատշաճ պատիւը  
կը զլանան. բարեզարդ ու աշխարհ  
ճանչցող մարդը այս յարգանքը ա-  
մենայն կերպով կը յայտնէ, բայց  
բնական, համարձակ ու անշփոթ  
կերպով մը. ուր որ լաւ ընկե-  
րութեան չվարժող մարդը՝ ան-  
շնորհք կերպով մը կը յայտնէ իր  
յարգութիւնը. այնպէս որ յայտ-  
նապէս կերեւայ թէ վարժած չէ, և  
իրեն ծանր կը նստի. բայց դեռ  
ինչուան հիմա այնչափ անկիրթ  
մարդ մը չեմ տեսած որ յարգած ըն-  
կերութեան մէջ զլլիքը կախած կե-  
նայ, կամ սուլէ կամ գլուխը քերէ,  
և կամ այսպիսի կոպտութիւնները ը-  
նէ: Սպա ուրեմն այսպիսի ընկե-  
րութեան մէջ մի միայն վախճանդ  
պիտի ըլլայ համարձակ, անշփոթ ու  
շնորհալի կերպով մը ցուցնել այն  
յարգութիւնը՝ զորն որ ամեն մարդ  
պատշաճ կը սեպէ ցուցնելը:

Խառն ընկերութեան մէջ՝ ո՛վ որ  
ընդունելի եղած է անդամ սեպուե-  
լու՝ ուրիշներու հետ հաւասար կը  
համարուի՝ գոնէ այն աստէն երբ ըն-  
կերութեան մէջ է. և անոր համար  
ամեն մարդ իրաւամբ կը պահանջէ  
քաղաքավարութեան ու կրթու-  
թեաննշանները. համարձակութիւն  
շնորհուած է այնպիսի ընկերու-  
թեանց մէջ, բայց անհոգութիւնն  
ու անփութութիւնը խստիւ արգի-  
լուած են: Երբ մէկը քեզի կը մօ-  
տենայ, որչափ ալ անհամ ու փուճ  
բաներ ալ ըլլան ըսածը, չէ թէ  
միայն կոպտութիւն այլ և կոշտու-  
թիւն է՝ ըսածին յայտնապէս ան-  
ուշադրութիւն ընելով այնպէս ցու-  
ցնել թէ զինքը խենթի կամ ա-  
պուշ չէս դու տեղ կը դնես, և ար-  
ժանի մարտեպեր մտիկ ընելու: Ս-  
ւելի կոպտութիւն է կանանց հետ  
այս կերպով վարուիլը. որոնք ինչ  
աստիճանէ ալ ըլլան՝ իրենց սեռին  
պատճառաւ՝ իրաւունք ունին պա-  
հանջելու ի մարդկանէ, ոչ միայն  
ուշադրութիւն այլ նաև բարեկիրթ



պաշտօնասիրութիւն մը : Բարեկիրթ մարդ մը մարդավարութեամբ պիտի սսլասէ ու շուղօքօրթէ և թէ կարելի է գուշակէ ու նախատեսէ անոնց մանր մունր պիտոյքը, սիրածը, չսիրածը, վերագասութիւններն ու հակակրութիւնները, ախորժակներն, հաճոյքներն և նոյն իսկ իրենց գեգ ու դժուարահաճ կերպերն : Ոչ երբէք գու քեզի պիտի սեպհականես այն գիւրութիւններն ու հաճոյքներն՝ որոնց վրայ ամեն մարդ իրաւունք ունի, ինչպէս են նատելու լաւ տեղուանքը, կամ կերակրոյ աղէկ մասը, և այլն. այլ ընդհակառակն միշտ պէտք է որ գու հրաժարիս և ուրիշի հրամցընես, անոնք ալ իրենց կողմանէ քեզի կը հրամցընեն, այնպէս որ ՚ի վախճանի գու ալ քու ունեցած իրաւանցդ մասը կը վայելես :

Բարեկրթութեան երրորդ տեսակն տեղական է, և չէ թէ միայն ըստ աշխարհաց շատ կերպ կը փոխուի, հասլա նաև նոյն երկրին այլ և այլ քաղաքացը համեմատ. բայց

ասոնք ալ առջի երկու կերպին վրայ հաստատուած պիտի ըլլան. աս նիւթիս մէջ անոնք հիմն կը սեպուին, իսկ Սովորութիւնն ու Նորաձևութիւնը անոնց այլ և այլ կերպարանք կուտան : Ո՛վ որ առջի երկու կերպն ունի, բարեկրթութեան այս երրորդ կերպն ալ գիւրաւ կրնայ սաանալ, որն որ միայն մտադրութենէ ու գիտողութենէ կը կախուի : Արնանք ըսել թէ ասիկայ բարեկրթութեան վերջի ձիրքն ու փայլն է : Ասլա ուրեմն խելացի մարդը ուր ալ գտնուի՝ մտադրութեամբ հոն տեղի կերպին ուշ կը գնէ, և իրեն օրինակ կառնէ ան մարդիկն որոնք կը տեսնէ որ բարեկրթութեան ու բարեզարդութեան գլուխ կը սեպուին. կը գիտէ թէ ինչպէս անոնք իրենց մեծերուն կը ներկայանան, ինչպէս հաւասարներնու կը մօտենան, և ինչպէս ստորնագունից հետ կը վարուին, և այս բարակ աղնուութիւններէն մէկն ալ զանց չառնէր, որոնք բարեկրթութեան մէջ կը նմանին գե-



դեցիկ պատկերի մը վարպետին տուած վերջի բարակ կատարելութեանցը. որոնք որ թէպէտ աամիկը չհասկընար, բայց գիացողը ու լաւ դատաստան ընողը անոնցմէ կիմանայ վարպետին արդիւնքը: — Այնպիսի մարդը կը գիտէ նոյն իսկ անոնց կերպարանքը, հագուստը, շարժուածքը, և ազատաբար և ոչ թէ ծառայաբար անոնց կը նմանի, զանոնք յանձին կօրինակէ, բայց կապկօրէն չհեռուիր: Այս անձնական շնորհալի կերպերն շատ հարկաւոր և հեռուանք ունեցող բաներ են: Մէկուն առջեւն որ ելլէ դեռ իրեն արժանապատուութիւնը չըճանչցուած՝ սիրելի կըլայ, ուրիշ սիրար իրեն կը քաշէ. և կարծեմ անկէց առաջ կուգայ մտքելու ու սիրահարութեան արատուոց կարծիքներն, որոնք այնպիսի զարմանալի հեռուանքներ ունին՝ որ գերբընական բանի կարգ կը սեպուին:

Համառօտ ըսենք ինչպէս որ մարդկանց համարմունքն ու զարմանքը ստանալու համար հարկաւոր է գի-

տուութիւն, պատիւ և առաքինութիւն ունենալ, այսպէս ալ ընկերական կենաց և խօսակցութեանց մէջ հաճոյ ըլլալու համար հարկաւոր է քաղաքավարութիւնն ու բարեկրթութիւնը: Մեծամեծ հանճար ունենալը ընդհանուր մարդկութենէ վերբաներ են, և մարդիկ իրենք չունենալնուն ուրիշներէ ալ չեն պահանջեր: Բայց ամեն մարդ իրաւունք ունի պահանջելու չափաւոր հանճարոյ կատարելութիւններն, որ են քաղաքավարութիւնը, հաճոյականութիւնը և ազնիւ կերպով մէկուն առջին երևնալն ու վարմունքը. որովհետեւ այս կատարելութեանց արդիւնքն լաւ կը ճանչնան՝ որ է ընկերութիւնը գիւրամատոյց և հաճոյական ընել:

Ի վերջ բանիս ստոյգ գիացիր որ խորին գիտութիւնը առանց բարեկրթութեան, անախորժ ու ձանձրացուցիչ իմաստակութիւն կը սեպուի. և ո՛վ որ կատարելապէս բարեկիրթ չէ՝ անյարմար է աղէկ ընկերութեան ու լաւ ընդունելու-



Թիւն չգտներ, և ո՛վ որ այս լաւ  
կրթութիւնը չունի՝ թէ գործոյ և  
թէ ընկերութեան չյարմարիր:

Ասլա ուրեմն բարեկրթութիւնը  
քու մտածմանցդ և գործոցդ նիւթն  
ըլլայ. որոնք որ իրենց բարեկրթու-  
թեամբն անուանի են՝ ուշադրու-  
թեամբ անոնց վարմունքն ու կեր-  
պը դիտէ, նմանէ անոնց, մանաւանդ  
թէ ջանա՛ զանոնք անցնելու, որպէս  
զի գոնէ անոնց հասնել կարենաս. և  
միտքդ դիր որ աշխարհային կա-  
տարելութեանց մէջ բարեկրթու-  
թիւնն նոյն յարգը ունի, ինչ որ  
գթութիւնը քրիստոնէական առա-  
քինութեանց մէջ. դիտէ թէ ինչպէս  
ատիկայ մարդուս ունեցած արժա-  
նիք կը զարգարէ ու չունեցածը  
կը պարտկէ:

Ժ. Ենորհաւի կերպ կամ հաճոյ  
ըլլալու աբու-էսպը.

Հաճոյ ըլլալու փափաքը նոյն ա-  
րուեստին գոնէ կէսը կը սեպուի.  
Իսկ մնացածն կը կախուի մարդուս

վարմունքէն՝ որն որ ուշադրու-  
թիւնը, դիտողութիւնը և լաւ ըն-  
կերութեանց մէջ յաճախելը մար-  
դուս կը սորվեցընեն: Ասլահովա-  
պէս կրնանք ըսել որ ծոյլ, անհոգ,  
ու հաճոյ եղեր են չեն եղած փոյթ  
չընող մարդիկ՝ ոչ երբէք կրնան  
հաճոյ ըլլալ: Հաճոյ ըլլալու ա-  
րուեստը պինդ հարկաւորներէն  
մէկն է, բայց ստանալն շատ դը-  
ժուար է. հաճոյ ըլլալու ապահով  
ճամբայն այն է որ ուրիշներու հետ  
այնպէս վարուինք՝ ինչպէս որ կու-  
ղենք որ ուրիշները մեզի հետ վա-  
րուին. ուշադրութեամբ դիտէ թէ  
ուրիշները ինչ բանով մեզի հաճոյ  
կըլլան, և ապահովապէս մենք ալ  
նոյն բանով ուրիշներու հաճոյ կըր-  
նանք ըլլալ: Թէ որ ուրիշներուն մեր  
հաճոյիցը, ախորժակացը ու տկա-  
րութեանցը վրայ ցցուցած հաճոյա-  
րարութիւնը կամ մտադրութիւնը  
մեզի հաճելի կերևայ. ապա ուրեմն  
ուրիշներու ալ նոյնպէս հաճոյ պի-  
տի երևայ եթէ նոյն հաճոյարարու-  
թիւնն ու մտադրութիւնը մենք ալ



ուրիշի վրայ ցուցնենք: Ընկերու-  
 թեան գտուած ներկայ վիճակին հա-  
 մեմատ՝ մենք ալ պէտք է լուրջ, ու-  
 րախ կամ նաև խենթութիւն երևանք.  
 ասիկայ այնպիսի ուշադրութիւն մի  
 է որ ամեն առանձին մարդ պէտք է  
 որ ունենայ բազմութեան յարմա-  
 րելու համար: Մեղք որ հաճոյ ըլ-  
 լալու արուեստին նուսխայ մը չկայ,  
 եթէ ըլլար՝ արժանի էր որ և իցէ  
 բարձրագոյն գնով գնուելու. ու-  
 զի դատմունքը ու բարեւաւու-  
 թիւնը իրեն գլխաւոր բաղադրու-  
 թիւններն են, իսկ իրեն ճիշդ գոյնն  
 ու համը առողներն են մեր գիտ-  
 զութիւններն և ուրիշներու լաւ  
 խրատներն:

Մարդու շնորհալի կերպն, վար-  
 մունքն ու խօսուածքն էական բա-  
 ներ են. մի և նոյն բանը հաճոյական  
 կըլլայ՝ երբ աղնուական մը հաճոյա-  
 րար, շնորհալի ու սրու կերպով մը  
 կը զրուցէ, և անհաճոյ կըլլայ՝ երբ  
 մէկը անշնորհք կերպով մը ու ժանա-  
 երեսով մը զուրցելու ըլլայ: Բանա-  
 ստեղծք Աստուծոյ միշտ Երեք Շնոր-

հաց հետ մէկտեղ կը նկարեն, իմա-  
 ցնելու որ նոյն իսկ գեղեցկութիւնը  
 առանց անոնց չկրնար հաճոյ ըլլալ.  
 Աթենաս ալ նոյնպէս պէտք էր Ե-  
 րեք Քորքն ընկեր ունենալ. վասն զի  
 առանց անոնց գիտութիւնը շատ  
 հաճոյական բան մը չըլլար:

Թէ որ ինքզինքնիս լաւ մը քննե-  
 լու ըլլանք՝ թէ ինչո՞ւ հաւասար ար-  
 դիւնք ունեցող մարդիկներէն ո-  
 մանք՝ ուրիշներէն աւելի մեզի հա-  
 ճոյական ու սրտակից կըլլան, կը  
 տեսնենք միշտ որ ասոր պատճառն  
 այն է որ ասոնք շնորհք ունին, որ  
 մէկալնոնք չունին: Շատ կնիկ-  
 ներ տեսեր եմ որ իրենց գեղեցիկ  
 հասակովը՝ ու աղուոր կերպարա-  
 նաց չափակցեալ միութեամբը՝ մէ-  
 կու մը հաճոյ չէին ըլլար, ուր ու-  
 րիշները միջին հասակով մը ու գե-  
 ղեցկութեամբ մը ամենուն սիրտը  
 կը քաշէին. անտարակոյս Աստուծոյ  
 առանց իր ընկերակից Շնորհաց այն-  
 չափ հաճոյ չկրնար ըլլալ, որչափ ա-  
 սոնք առանց իրեն: Մարդկանց մէջ  
 ալ այս շնորհքս չըլլալուն՝ որչափ



անգամ մեծ արդիւնք ունեցողներ մոռցուեր են, լաւ ընդունելութիւն չեն գտած և նոյն իսկ մերժուեր են, ուր ընդհակառակն գոյղն կատարելութիւն, նուազ գիտութիւն և սակաւ արժանիք ունեցողներն՝ շնորհքով մարդկանց առջև ելլելուն համար, ընդունելի, սիրելի ու զարմանալի եղեր են: — Հիմա առաջ երթանք ու տեսնենք թէ ինչ են այս շնորհք ըսածնիս, և զանոնք ստանալու համար քանի մը խրատներ տանք:

### Մարդկանց առջև ելլել.

Մարդուս բաղդը շատ անգամ իր առջի բերան մարդկանց առջև ելլելէն կորուշուի, թէ որ հաճելի ըլլայ՝ մարդիկ գրեթէ ակամայ կերպով կը ստիպուին համոզուելու՝ թէ ատիկայ արդիւնք ունեցող մարդ է, որն որ թերևս չունի. իսկ ընդհակառակն երբ անշնորհք երևայ՝ մէկէն՝ ի մէկ անոր դէմ մտքերնին կը պաշարուի, և ունեցած արդիւնքն

ալ չեն ուզեր ճանչնալ: Եւրոպայի մէջ անկիրթ մարդ մի ալ երբ տեսնէ որ տիկնոջ մը հովահարն գետին ընկեր է, անշուշտ կառնէ ու իրեն կուտայ. բարեկիրթ մարդն ալ աւելի քան չէր կրնար ընել. բայց սակայն մեծ տարբերութիւն կայ կերպերնուն մէջ. վերջինը իր շնորհալի կերպով մատուցանելուն՝ հաճոյ կանցնի, իսկ առջինը անշնորհք կերպին համար ծիծաղելի կըլլայ: Բարեկիրթ մարդուն շարժուածքը ազնուական պէտք է ըլլայ, և իր վարմունքը շնորհալի. ընկերութեան մը մէջ մտած ատենը շատ զգուշաւոր և արթուն պիտի ըլլայ իր կերպին վրայ. յարգադիր առանց ցածութեան, համարձակ առանց չափազանց ընտանութեան, ազնուական առանց արուեստակութեան, և հաճոյարար առանց արուեստ ու գիտաւորութիւն ցուցընելու: Թէ արք և թէ կանայք շատ անգամ աւելի իրենց սրտին կը հեռուին քան թէ մտայր. սիրտը հասցընող ճամբայն զգայարանքներն են. ջանա՛ աչքեր.



նուն ու ականջներնուն հաճոյ ըլ-  
լալ, և կէս մը վախճանիդ հասած  
կըլլաս:

Զուարճութեանց ընդունելիս.

Ազնուական մարդը իր զուար-  
ճութեանց ալ լաւ ընտրութիւն կը-  
նէ: Թող թի խաղերուն ու ճարակու-  
թեան մարդերու մէջ կը զգուշանայ  
ցած ու անհամեստ խաղերէն. վասն  
զի գիտէ որ առակին կերպերուն նը-  
մանիլը առակութեան անջնջելի կը-  
նիք մը կը տարաւորէ իր վրայ: Նմա-  
նապէս չեմ կրնար զանց առնել ըսե-  
լու որ ազնուական մարդու մը հա-  
մար անուատչաճ բան է՝ որ և իցէ  
երաժշտական գործիք մը զարնելը.  
երաժշտութիւնը սովորաբար ազա-  
տական արուեստից մէկը կը սե-  
պուի, և յիրաւի. բայց բարեզարդ  
մարդ մը որ նուագածուաց մէջ սը-  
րինդ փչէ կամ ջութակ զարնէ՝ ինք  
իւր սպառիւր կը նուագեցընէ. եթէ  
երաժշտութիւն կը սիրես մաիկ ըրէ,  
նուագածուններն վարժէ, բայց դուն

մէջերնին մի մտներ. վասն զի աս  
բանս ունայնամիտ ու արհամարհելի  
կը ցուցընէ զմարդ, գէշ ընկերու-  
թեանց մէջ յաճախել կուտայ, և  
այն ժամանակն որ ուրիշ բանով օգ-  
տակար կրնար անցընել՝ կը կորսուե-  
ցընէ<sup>1</sup>:

Կերակուր ջարդել.

Կան բաներ որ որչափ ալ փուճ  
երևնան, բայց երբ աշխարհքիս կէ-  
սէն աւելին ուրիշ կերպ կը գատէ՝  
փուճ չեն ըսուիր. ուստի կերակուր

<sup>1</sup> Այս գլխուս մէջ քանի մը դիտելիք  
կայ. նախ հեղինակը յանուանէ քանի մը  
տեսակ առակական խաղեր կը յիշէ զորս  
մէնք զանց առինք համեմատը չգիտնալ-  
նուս: Երկրորդ երաժշտութեան վրայ ը-  
սածը իմանալու է նուագածուաց մէջ  
խառնուիլը, ապա թէ ոչ առանձին կամ  
ցայգանուագաց մէջ (soirées) իրեն հաւա-  
սարապատիւ մարդկանց հետ երգելն ու  
նուագելը ոչ միայն նուաստութիւն չէ,  
հասկա նաև ազնուութիւն, չէ թէ միայն  
արանց, այլ և տիկնայց ու օրիորդաց,  
մանաւանդ եթէ ուրիշներն հրաւիրեն:



Չարդեղն ալ՝ որ գոնէ օրը անգամ մը  
կը պատահի, մեր մտադրութեանը  
անարժան բան չսեպուիր. պէտք է  
որ վարժինք ճարակութեամբ ու  
ազնուութեամբ կերակուրը Չար-  
դեղ, առանց ոսկոր մը կտրելու հա-  
մարժամեր անցընելու, առանց մօտ  
նստողներն կերակրին ջրհամեմոյն  
ծեփելու, և առանց գաւաթներն  
ուրիշի գոգն ու գրպանը պարպե-  
լու. աս սղտի բանիս մէջ անչնորհք  
ու կոշտ երևնալը՝ շատ սհաճելի ու  
ծաղրելի բան է. և քիչ մը մտա-  
դրութեամբ ու վարժութեամբ  
մարդ կրնայ ծաղր ըլլալէն ազատիլ.  
Ե ով որ առանց կատակի կըսէ քեզի  
թէ կերակուր Չարդեղ չգիտեր՝ կըր-  
նայ նաև ըսել թէ քիթը սրբել չգի-  
տեր. վասն զի երկուքն ալ հաւասար  
րասպէս դիւրին ու հարկաւոր են:

### Զոսարխօսութիւն.

Զանա ստանալ այդ նորելուկ  
մանր ճարտասանութիւնը՝ որուն  
զուարթախօսութիւն կըսենք, որ

աղնիւ ընկերութեանց մէջ շատ կը  
բանի, և որչափ ալ ունայն բան ե-  
րևայ, բայց սակայն խառն ընկերու-  
թեանց ու սեղանի վրայ շատ հարկա-  
ւոր է. այս խօսակցութեանց ամե-  
նէն օգտակարն Եւրոպիոյ արտա-  
քին գործոցը վրայ է, շատ անգամ  
ալ այլևայլ տէրութեանց ունեցած  
զօրացը թուոյն, աղէկութեան,  
գէշութեան, կրթութեան ու հա-  
գուստին վրայ. երբեմն ալ թագա-  
ւորաց ու մեծամեծ մարդկանց,  
ընտանեաց, հարսնախօսութեանց  
ու ազգականութեանց վրայ<sup>1</sup>. ու-  
րիշ անգամ ալ հասարակաց զու-  
արձութեանց, պարահանդէսներու,  
գիմակաց շքեղութեանց վրայ են:

Այնպիսի դիպուածներու մէջ  
անդէս բան չէ նաև կերակրոց վրայ  
ալ տեղեակ երևնալը, և դիտնալ

<sup>1</sup> Այս նիւթերս որ միանգամայն քա-  
ղաքական կենաց մէջ ալ շատ հարկաւոր  
կըլլայ դիտնալը, ուզողը առատ կը գտնէ  
Almanach de Gotha ըսուած տօմարին մէջ  
որ ամեն տարի կը տպուի և ամեն մեծ  
քաղաքներ կը գտուի, ինչպէս նաև Բազ-  
մավէս և Եւրոպայ օրագրաց մէջ:



Թէ աղէկ գինիներն ուսկից կելլեն  
 ու ինչ համ ունին. ասոնք յիրաւի  
 փոքր բաներ են, բայց շատ անգամ  
 հարկաւոր եղածներն ալ փոքր բա-  
 ներն են, անոր համար անոնց վրա-  
 յօք շնորհքով ու ազնուականու-  
 թեամբ խօսիլ գիտնալն ամենահար-  
 կաւոր է:

### Մարդո-Ռիան.

Մարդուս անձը խնամով պէտք  
 է մաքուր ըլլայ, ինչպէս նաև ա-  
 կուայներն, ձեռուներն, ըղունկ-  
 ներն, աղտոտ բերանը նոյն իսկ ան-  
 ձին գէշ հետևանքներ կը բերէ.  
 վասն զի անտարակոյս ալուայի  
 փտուծիւն ու անտանելի ցաւ կը  
 պատճառէ, և ուրիշներու ալ ան-  
 տանելի կըլլայ հոտած շունչին պատ-  
 ճառաւ: Բան մը չկայ որ զմարդ  
 այնպէս հասարակ ու ռամիկ ու  
 գեղջուկ երևցընէ, ինչպէս ձեռաց  
 աղտոտուծիւնը, և ըղունկներու  
 սգեղ, անհաւասար ու մաշած ըլ-  
 լալը. որոնց ծայրերն պէտք է հարթ

ու մաքուր ըլլան, և ոչ սև ու կեղ-  
 տոտ ծիրերով բոլորած. և քանի  
 անգամ որ ձեռքդ սրբես՝ նայէ որ  
 ըղունկներուդ բոլորը եղած մորթը  
 գէպ 'ի ետև շփշփես՝ որպէս զի շատ  
 չաճին. կտրելու ատենդ ալ շատ  
 կարճ մի կտրեր:

Ինչ պատճառաւ ալ ըլլայ մա-  
 տուրներդ քիթդ կամ ալանջդ մի  
 խօթեր, որն որ շատ անտանելի,  
 զզուելի և գեղջկական կոպտուծիւն  
 է ընկերուծեան առջև. ալանջներդ  
 ամեն առաւօտ պէտք է լաւ մը լը-  
 ւաս և քիթդ սրբելէդ ետև՝ չըլլա՛  
 թէ թաշկինակիդ մէջ նայիս:

Այս բաներս թերևս շատ թեթև  
 ու յիշատակելու արժանի բաներ  
 չեն երևար. բայց երբ յիշենք որ  
 այս հազարումէկ մանր մուշր բա-  
 ներն որ անուն ալ չունին, և զորս  
 ամեն մարդ կըզգայ առանց կարե-  
 նալու զանոնք բացատրել, երբ մէկ-  
 տեղ գալու որ ըլլայ՝ հաճոյ ըլլալու  
 արուեստը կը կազմեն, ես կարծեմ  
 թէ պէտք է զանոնք պարապ բա-  
 ներ սեպել: Ուր թողունք որ մա-



քուր շապիկ և մաքուր մարմին ունենալը առողջութեան համար ալ այնչափ հարկաւոր բաներ են՝ որչափ որ ուրիշները չզգուեցրնելու համար: Այս խօսքս ես ինձի սկզբունք ունեցեր եմ, և բաւական ալ ապրեցայ զանիկայ ճշմարտելու համար, թէ, Երբ քսան տարուան մարդ մը անհող է իր վրայ, քառսուն տարուան որ ըլլայ՝ աղտոտ կըլլայ, իսկ յիսուն տարուան անտանելի:

Քաղաքավարութիւններ.

Երբ կը լսես բարեկիրթ մարդու մը իր մեծերուն, հաւասարներուն ու ստորագոյններուն ըրած ուրախակցութեան ու վշտակցութեան քաղաքավարութիւնները՝ լաւ ուշ դիր անոնց. դիտէ՛նաւ իրենց արտաքին կերպը ու ձայնին աստիճանը, վասն զի այս ամեն բանս հաճոյ ըլլալու շատ կօգնեն. բարեզարդ մարդու խօսուածքը մասնաւոր եղանակ մը ունի. ինքը գոհ կըլլար թորոսին պէս նոր կարգուած մարդու մը ը-

սելու « Ետ ուրախութիւն կը մալթեմ քեզի, սարոն » . կամ իւր որդին կորուսած մարդու մը ըսելու « Ետ կը ցաւիմ քու ըրած կորստեանդ վրայ, սարոն » . և այս երկու խօսքս ալ հաւասարապէս ցուրտ կերպով մը. հասլա թէպէտ, նոյն բանը կը զրուցէ բայց աւելի ազնուական և սարդ եղանակաւ մը, և իր դրսի կերպն ալ ըստ սարագային կը յարմարցընէ. նոր կարգուած մարդուն առջևը կելէ վառ ու աշխոյժ կերպով մը, և իրեն սրբելուելով՝ հաւանականաբար այսպէս կը զրուցէ » Եթէ իմ քու վրադ ունեցած սէրս լաւ կը ձանձնաս կըրնաս իմանալ թէ ինչ մեծ ուրախութիւն է ինձի այս դիպուածս, որն որ աւելի կը զգամ քան թէ կրնամ բացատրել » . իսկ մէկալին դիմացն կելէ տրամուծեամբ ու կամաց կամաց, և ծանր շարժուածքով մը և հաստատ եղանակով և ցած ձայնով մը անշուշտ կը զրուցէ. « Յուսամ որ աներկբայապէս համոզեալ ես թէ քու վիշտդ ես ալ կը



զգամ և քու ցաւոցդ միշտ ցաւա-  
կից պիտի ըլլամ » :

Ասացո՞ւսքի .

Խօսակցութեան մասնաւոր լե-  
զու մը և նորեւուկ ասացուածք մը  
կայ՝ որուն որ և իցէ ազնուական  
մարդ պէտք է լաւ տեղեակ ըլլայ ,  
ինչ լեզուով ալ որ խօսի . փրանկ-  
ներն այս բանիս շատ հոգ կը տանին  
և իրաւամբ . իրենց լեզուն ալ՝ որ  
ոճի լեզու է , մեծապէս կօղնէ ի-  
րենց . այս ասացուածքի նրբու-  
թիւնը բարեզարդ ու լաւ ընկերու-  
թեան մարդու յարտարարնշանն է :

Զգե՞սք ու Պար .

Զգեսար հաճոյ ըլլալու արուես-  
տին ձեռննտու նիւթերէն մէկն ըլ-  
լալով՝ մարդ պէտք է անոր վրայ  
քիչ մը հոգ տանի . վասն զի չենք  
կրնար ինքզինքնիս բռնել մէկուն  
հագուստին կերպէն իրեն խելքին  
և բնութեան վրայ դատաստան ընե-

լէն . զգեստի զարդասիրութիւնը  
տկար խելքի նշան կը սեպուի . խե-  
լացի մարդիկ ամենայն ջանքով կը  
խորջին իրենց զգեստին վրայ մաս-  
նաւորութիւն մը ցուցնելէն . ի-  
րենք իրենց տնձին սիրոյն համար  
մաքրութեան հոգ կը տանին , իսկ  
մնացած հոգերնին ուրիշներու հա-  
մար է : Մարդ ուր որ գտնուի հոն  
տեղի խելացի ու բարեզարդ մարդ-  
կանց հագածին պէս պէտք է որ  
հագուի . թէ որ անոնցմէ աւելի  
զարդարուի՝ ունայնամիտ կը սե-  
պուի . իսկ թէ որ սրակաս՝ աններե-  
լի անհոգութիւն կը ըլլայ ըրածը .  
բայց այս երկու ծայրերուս մէջ ե-  
րիասարդ մը աւելի լաւ հագուե-  
լովը պէտք է որ սխալի քան թէ  
նուազ . վասն զի այն կողմանէ եղած  
աւելազանցութիւնը քիչ մը հասա-  
կը առնելով ու խորհրդածութեամբ  
կրնայ բժշկուիլ :

Խելացի և ունայնամիտ մարդու  
հագուածքին մէջ այս տարբերու-  
թիւնս կայ , որ վերջինը իր արժե-  
քը իր հագուստներէն կը չափէ ,



իսկ առջինը զանի կը ծաղրէ, միանգամայն գիտնալով որ անհոգ պէտք չէ ըլլալ այս բանիս: Այս տեսակ հազարումէկ խենթութեամբ սովորութիւններ կան՝ որոնք մեղանչական բաներ չըլլալուն՝ պէտք է խելացի մարդը անոնց, համաձայնի և այն առանց գժկամակութեան: Ինչո՞ գինէս շնական փիլիսոփայն իմաստուն էր զանոնք արհամարհելուն համար, բայց անմիտ՝ իր արհամարհութիւնը ցուցնելուն համար:

Պէտք չէ անմիտ մարդու հագուստին հաւասարելու կամ անցընելու ջանանք, հասա հարկաւոր է նայիլ որ նորակերպ ու ծաղրելի չըլլանք. պէտք է միշտ հոգ տանինք որ ուր որ կը գտուինք հոն տեղի խոհեմ մարդկանց ու մեր հասակակցածը պէս հագուինք. որոնց հագուստին վրայ ոչ ոք այս կամ այն կերպով կը խօսի, որովհետև ոչ թափթփած ու անհոգ են, և ոչ ալ չափազանց զարդարուն:

Անշնորհք շարժուածքը զմարդիկ կը խրտեցնէ, և հագուստի ու կեր-

պի բոլորովին անհոգութիւնը՝ սովորութեանց ու բարեզարդութեան գէմ եղած նախաախնք մի է: Ասանայք մեծ ազդեցութիւն ունին բարեզարդ մարդու բնութեանը վրայ. և անշնորհք մարդ մը ոչ երբէք անոնց հաճութիւնը կուեննայ, որոնց թիւը խիստ շատ է, և շատ անգամ աւելի համրանքի տակ կ'ընան քան թէ կըշեռքի:

Երբոր մէյմը օրուան յարմար հագուեցանք, ալ անկէց ետև պէտք չէ անոր վրայ մտածենք, և առանց վախնալու որ հագուստնիս կաւրուի, պէտք է այնպէս արձակ ու բնական կերպով շարժինք՝ որպէս թէ ամենևին զգեստ հագած չըլլալինք:

Նմանապէս սլարն թէ և տղայական և ունայն բան մի է, բայց սակայն այն հաստատեալ յիմարութիւններէն է, որոնց իմաստուն մարդն երբեմն համաձայնելու պարտական է. արդ մէյմը համաձայնելն ետքը՝ պէտք է լաւ ու պատշաճապէս դուրս հանէ: — Պարելու ա



տեն թևերու շարժմանը մասնաւորապէս ուշ դնելու է, որովհետև մարմնոյն ուրիշ մասանցմէ աւելի՝ անոնցմէ կերևայ մարդուս ազնուական կամ ռամիկ ըլլալը. բազմաց խիստ ու փայտի պէս արշարժ դիրքը՝ շատ անշնորհք կերևցընէ զմարդ. աղէկ պարող կը սեպուի ո՛վ որ մէջքէն վեր լաւ կը պարէ, գլխարկը լաւ կը բռնէ, գլուխը շնորհալի կերպով կը շարժէ: Լաւ ուշադրութիւն պէտք է ընես նաև խուց մը մտնելու և ընկերութեան մէջ երևնալու ատենդ. վասն զի առջի տպաւորութիւն կընէ ուրիշի վրայ՝ որն որ շատ անգամ անջնջելի կը մնայ: Իրենք զիրենք լաւ կերպով ներկայացնողներն՝ ծանրութիւն մը ունին իրենց կերպին մէջ, որն որ առանց ամենևին հպարտութեան ցոյց մը տալու՝ միանգամայն իրենք զիրենք հաճելի և յարգելի կընեն:

### Մէկու մը կենդանութեանը խճել.

Ճաշակցաց կենդանութեան գինի խմելը հիմա սովորութենէ դուրս բան է, և աղէկ ընկերութեանց մէջ անքաղաքավարութիւն կը սեպուի. ատեն մը այս բանս ընդհանուր սովորութիւն էր, բայց դարուս յառաջագիմութիւնը՝ արտառոց ու ռամկական բան մը կը սեպէ զասիկայ. վասն զի ասկէց աւելի ինչ անգէտ ու ծաղրական բան կընայ ըլլալ՝ որ մէկը կերակուր ուտելու ատեն անհարկաւոր քաղաքավարութեամբ մը արգիլես: Ուրեմն զգուշացիր այս անխելք սովորութենէն՝ ուր որ բարձուած է, և միայն այն սեղաններուն գործածէ ուր որ ընդհանուր սեպուած է<sup>1</sup>:

1 Քաղաքավարութեան երկրորդական օրէնքներն ալ շատ անգամ նորելուկ զգեստի պէս կը հիննան ու կը նորոգին. այպէս է նաև այս կենդանութեան գինի խմելու սովորութիւնը, որն որ հիմա անգղիոյ մէջ ալ շատ ընդհանուր է, նաև դեսպանական սեղաններու վրայ:



Ինչ էր Վրայ Վարան ԸԼԼԻԼ.

Հաստատ վստահութիւն մը շատ անգամ յանիրաւի լրբութիւն կը կոչուի. ես չէ թէ միայն լրբութիւն չեմ սեպեր զանի, այլ ընդհակառակն շատ հարկաւոր և օգտակար, անով մարդ համարձակ և պաղ արեամբ որ և իցէ ընկերութեան մէջ կրնայ մանել. և ինչուան որ մէկը այս վստահութիւնս չունենայ՝ ապահով եմ որ մարդու առջև լաւ կերպով չկրնար տեսնուիլ. ինչ որ մարդ տարակուսած ու շփոթած կրնէ՝ գէշ կրնէ. և ինչուան որ մարդ որևիցէ ընկերութեան մէջ արձակ համարձակ կերպ մը չունենայ՝ բարեկիրթ մարդ չսեպուիր, և ախորժեղի չըլլար: Վստահութիւնը և անվստահութիւնը արտաքին համեստութեան ճերմակ քողովը պարտկած՝ արժանեաց ճամբան կը բանան. որն որ ուրիշ կերպով ճամբուն մէջ պատահած դժուարութիւններէն պիտի յուսահատեր. իսկ անամօթ

լրբութիւնը՝ անարժան և անմիտ յափշտակողին անպատկառ ու կրուարար առաջնորդը կըլլայ:

ՍԵՐՄՈՐԿԸ.

Խեղացի մարդ փոյթ ու ջանք կունենայ՝ բայց ոչ երբէք կարտորայ. վասն զի գիտէ որ ինչ որ արտորանօք կըլլայ՝ հարկաւ գէշ կըլլայ. ջանք կրնէ բան մը լմնցընելու, բայց կը նայի որ այս ջանքը արգելք չըլլայ լաւ ընելու ընելէքը: Պզտի խելքերը միշտ արտորացող կըլլան, և սովորաբար կը տեսնուի որ ըրածնին իրենցմէ շատ վեր բան է. հոս կը վազեն հոն կը վազեն, կը շփոթին կը տարակուսին և ընելէքնին չեն գիտեր, և ամեն բան մէկտեղ ուզելով ընել՝ բան մը ալ չեն ըներ: Իսկ խեղացի մարդը բան մը լաւ ընելու համար հարկաւոր ժամանակ կը կը սահմանէ, և բան մը լմնցընելու ջանքը՝ իրեն նոյն բանին վրայ ըրած հանապազորդութենէն կերևայ, հանդարտ հաստատութեամբ



Վր նոյն բանին ետեւէն կըլլայ, և ուս-  
րիչ բանի ձեռք չգարներ՝ ինչուան  
որ զանի չմնցընէ:

### Ծիծաղել.

Ստեպ և բարձր ձայնով ծիծա-  
ղելը խենթ ու անկիրթ մարդու նը-  
շան է. և ռամիկը իր յիմարական  
ուրախութիւնը փուճ բաներու  
վրայ այս կերպով կը յայտնէ, և  
զանիկայ ուրախութիւն կը կոչէ.  
Եթէ ինծի հարցընես այնպէս ցած  
ու անկիրթ բան չկայ ինչպէս բար-  
ձրաձայն ծիծաղելը: Ճշմարիտ հան-  
ձար ունեցողը կամ խելացի մարդը  
ոչ երբէք զուրիշը կը ծիծաղընէ,  
իրեն վախճանն շատ վեր է. մտաց  
հաճելի կըլլայ, և զուարթ կերպ մը  
կը ցուցընէ. միայն ցած միմոսու-  
թիւններն և անհամ դիպուածներն  
են որ մարդու ծիծաղը կը բերեն, և  
խելացի ու բարեկիրթ մարդիկ պէտք  
է որ իրենց ծանրութիւնը ցուցը-  
նեն: Մէկը կարծելով թէ ետեւը ա-  
թոռ մը կայ՝ նստել կուզէ, և կըռ-

նրկին վրայ գետին կիսնայ, ու բոլոր  
ընկերութիւնը այնպէս ծաղրի կը  
շարժէ որ բոլոր աշխարհիս հանձա-  
րը մէկ տեղ դար չէր կրնար ընել.  
արդ այս դիպուածս իսկ ինձ կը ցու-  
ցընէ թէ որչափ ցած ու անպատ-  
շաճ բան է ծիծաղելը. չենք ուզեր  
յիշել այն անհաճոյ աղաղակն որ  
կը փրթի ընկերութեան մէջ, և խըն-  
տալէն առաջ եկած մարդուս երե-  
սին ու կերպաբանաց տգեղ կեր-  
պով ծռամուկիլը:

Շատ մարդիկ առջի բերան ան-  
շնորհքութեամբ գէշ ու անհաճոյ  
սովորութիւն մը ստացած են որ խօ-  
սիլ սկսածնուն պէս կը ծիծաղին:  
Եւ ես կը ճանչնամ խելացի մարդիկ  
որ սովորական բան մ'ալ չեն կըր-  
նար ըսել առանց ծիծաղելու, որով  
զանոնք չճանչցողները առջի բերան  
բնական խենթի տեղ կը դնեն զի-  
րենք:

### Թաղել գրել.

Լաւ թուղթ գրելը խիստ հարկա-  
ւոր բաներէն մէկն է, որովհետեւ



այնպիսի տաղանդ մի է որ ամեն օր հարկաւոր կըլլայ թէ գործոց թէ զուարճութեան համար, ուղղագրութեան և ոճի սխալները ներելի են միայն խաթուհայց համար, այն ալ ևս շատ դժուարաւ: Կիկերոնի թղթերը լաւ նամակագրութեան գերազանց օրինակ են: — Նամակ ըսածդ համարձակ և բնական պիտի ըլլայ, և որոնց որ կը զրկենք ճիշդ այն բանը պիտի ըսենք, ինչ որ կուզէինք ըսել եթէ ներկայ ըլլային: — Նամակագրութեան ընտիր օրինակ են Կիկերոն, ծիրանաւորն ա՛ Ռոսա, Մատամ Սէվինէէ, Կոմսն Պիւսի Ռապիւթէն, բարեկամական և ընտանեկան ոճի ամենէն լաւ օրինակներն՝ Կիկերոնի առ Ատտիկոս և առ մտերիմ բարեկամս գրած նամակներն են, ա՛ Ռոսա ծիրանաւորին թղթոց պարզութիւնը կը ցուցնեն թէ գործաւնութեանց թղթերն ինչպէս գրուած պիտի ըլլան. իսկ զուարթ և զուարճացուցիչ թղթերու կողմանէ մէկը չկայ որ Պիւսի կոմսին ու Մատամ Սէ-

վինէէին հաւասարի. անանկ բնական են ասոնք որ չէ թէ թուղթ՝ հապա երկու հանձարաւոր բարեկամաց զուարթ խօսակցութեան կը նմանին:

Պէտք չէ ամենեւին անհոգութիւն ընել նաև թուղթը ծալելու, կնքելու և ծրարելու համար. նոյն իսկ նամակի արտաքին տեսքին մէջ բան կայ որ հաճոյ կամ անհաճոյ կրնայ ըլլալ, ուստի մտադրութեան արժանի բան է:

### Մտերի.

Պատանի մը որ առջի անգամ ընկերութեան մէջ կը մտնէ՝ բանէ մը այնչափ պիտի չվախէ, և այնչափ պիտի չզգուշանայ, ինչպէս ծաղրական կերպ մը ցուցնելէն իր վրայ. այս բանս նոյն իսկ խելացի մարդկանց առջև իր յարգը կը նուազեցնէ, իսկ ուրիշներու գիմացը բռնորովին կաւրէ. այսպէս եղան շատերը ծաղրական անուն մը կամ մակդիր մը ստանալով. բարեկիրթ



մարդկանց մէջ մակդիր տալու պատ-  
ճառ են սովորաբար կերպի, խօ-  
սուածքի ու շարժուածքի մէջ ե-  
ղած մանր պակսութիւններն. սըր-  
տուացող, անշնորհք, անկիրթ, ցըն-  
դած և տգէտ մակդիրները՝ կարծա-  
ծէ՞դ աւելի մնաս կրնեն քեզի. ասլա  
ջանա՛ այս մանր պակսութիւններէն  
խորշել և ծաղրողները բան չեն կա-  
րող ըսել:

Հնչումնք և խօսումնք.

Ենորհալի հնչումնք ստանալու  
համար ամեն օր բարձր ձայնով  
գիրք մը կարգա՛ բարեկամի մը առ-  
ջև, և աղաչէ զինքը որ զքեզ ուղղէ  
և սրբագրէ երբ խիստ շուտ կար-  
գաս ու կէտերը չնայիս, կամ ձայնդ  
չկարենաս աստիճանի մը մէջ պա-  
հել, կամ բառերն անհասկնալի կեր-  
պով մը հնչես: Ի՞նչ քեզի եղած ա-  
տենդ ալ կրնաս բարձր ձայնով  
կարգալ, այնպէս որ հնչածդ ա-  
կանջդ լսէ. նայէ որ կարգալու և  
խօսելու ատենդ տկուայներդ չսրխ-

մես, և ամեն մէկ բառ որոշ հնչես,  
որն որ ուրիշ կերպով չըլլար՝ բայց  
եթէ վերջի գիրը լաւ հնչելով. բայց  
ամենէն աւելի ջանա՛ ըստ նիւթոյն  
ձայնդ փոխել, և միաձայնութենէն  
զգուշացիր. աս բաներուս ամեն օր  
ուշագրութիւն որ դնես՝ քիչ ատենի  
մէջ դիւրին ու բնական կըլլան քե-  
զի:

Խօսելու ձայնին ու եղանակին  
ալ անհոգ ըլլալու չէ, ոմանք խօսե-  
լու ատեննին բերաննին կը սխմեն և  
անանկ կը մրմռան՝ որ բան մը  
չհասկցուիր, ոմանք ալ այնպէս  
շուտ կը խօսին ու կը լքուտան որ  
բան չխմացուիր. ուրիշներն ալ կար-  
ծես թէ խուլերու հետ կը խօսին,  
ուրիշներն ալ անանկ ցած ձայնով  
կը խօսին որ բան չըլսուիր. այս ա-  
մեն սովորութիւններս ալ անշնորհք  
ու անախորժ բաներ ըլլալուն՝ մտա-  
գրութեամբ զգուշանալու է. միան-  
գամայն հասարակ մարդ ըլլալու  
նշան է՝ որոնց դաստիարակութեան  
վրայ հոգ տարուած չէ: Չես կրնար  
կարծել թէ այս մանր բաներու ու-



չադրուածիւն ընելն որչափ հարկա-  
ւոր է, վասն զի ես շատ խելացի  
մարդիկ տեսեր եմ՝ որ այս փոքր  
կատարելութիւններս չունենալ-  
նուն՝ լաւ ընդունելութիւն չեն գը-  
տած, և ուրիշներն ընդունելի եղեր  
են այս փոքր կատարելութեանց  
համար թէսլէտ և մեծերէ զուրկ  
էին:

### Ուղղագրութիւն.

Լաւ ուղղագրութիւն գիտնալը  
այնպէս հարկաւոր է գրագէտ կամ  
աղնուական մարդու մը, որ շատ  
անգամ մէկ սխալ մը ծաղրելի կընէ  
զինքը բոլոր իր կենացը մէջ. մտա-  
գրութեամբ կարգալը խիստ շատ  
կօղնէ քեզի ուղղագրութեան սխալ-  
ներու մէջ չինալէն. վասն զի ընդ-  
հանրապէս գրեանց ուղղագրու-  
թեամբը նոյն ժամանակի գործա-  
ծութեան յարմար շտկած է. եր-  
բեմն իրաւ է որ քանի մը բառեր  
տարբեր կերպով կը գրեն մասե-  
նադիրք, բայց այս օրինակներս քիչ

են. իսկ այն բառերն որ մէկ կեր-  
պով կը գրուին՝ եթէ դու ուրիշ կերպ  
գրես, հարկաւ ծաղրելի կըլլաս:  
Նոյն իսկ չափաւոր կըթուածիւն ա-  
ռած կնիկ մը իր սիրականը կարհա-  
մարհէ ու ծաղր կընէ՝ թէ որ ուղ-  
ղագրութեան սխալներով լեցուն  
տոմսակ մը գրելու ըլլայ իրեն:

### Ոճ.

Գրուածքի ոճը մեր մտածման-  
ցը զգեստն է. մտածմունքդ որչափ  
ուղիղ ալ ըլլայ՝ երբ ոճդ հասարակ,  
կոսիտ ու ռամկական է, մտածու-  
թիւնդ ալ անհաճոյ կըլլայ, և այն-  
պէս ազեղ ընդունելութիւն կը գանէ  
ինչպէս քու անձդ որ թէսլէտ ամե-  
նայն կերպով համեմատ ու չափա-  
կցեալ ըլլայ՝ բայց հագուստդ պա-  
տըռտած աղտոտ ու չնչոտ ըլլայ.  
մտածութեան վրայ դատաստանը  
նելը ամենուն բանը չէ, բայց ո՛վ որ  
ականջ ունի քիչ շատ ոճին վրայ  
դատաստան կրնայ ընել:

Ինչ լեզուով ալ գրես կամ խօ-



սիս՝ նայէ որ սովորութիւն ընես  
քեզի խօսուածքդ ուղիղ և վսեմ  
կերպով շարագրելու. մտադրու-  
թիւն ըրէ քու ոճիդ նաև ազատ  
խօսակցութեան ու ընտանեկան  
թղթերու մէջ, և գոնէ առաջ ալ  
խորհած չըլլաս՝ բան մը ըսելէդ ետև  
մտածէ՛ թէ արդեօք այլ լաւագոյն  
կերպով չէիր կարող ըսել:

### Գիւր գրել.

Ա՛յ որ աչք և աջ ձեռք ունի ու-  
զած ձևովը կրնայ գիր գրել, բան  
մը չկայ որ ազնուական մարդու մը  
այնպէս անպատշաճ ըլլայ, ինչպէս  
դպրոցի տղոց պէս սյլանդակ գիր  
ունենալը. չեմ ուզեր ըսել որ գե-  
ղագրութեան վարպետի պէս վարժ  
ձեռք ունենաս, հապա գեղեցիկ,  
գիւրընթեանի ու արձակ գրուածք  
մը ունենաս, ու միանգամայն շուտ  
գրես. իսկ գրուածքիդ ուղղութեան  
ու վսեմութեան համար՝ մէկ կող-  
մանէ մտադրութիւն սխալ ընես քե-  
րականութեան, միւս կողմանէ ալ-

լաւ մատենագրաց գրուածքին.  
Թղթակցութեան ոճը արձակ ու  
բնական սխալ ըլլայ. և գրած  
մարդդ ներկայ որ ըլլար՝ ինչ կըսէիր  
նոյն բանը ճիշդ սխալ գրես:

### Ռամկական Բացաբերութիւններ.

Խօսուածքի մէջ ռամկութիւնը  
գէշ ընկերութեան ու գէշ դաստիա-  
րակութեան նշան է. առակաւոր  
խօսքերն ու հասարակ մարդկանց  
ասացուածները, ռամիկ մարդուն  
ճարտասանութեան ծաղիկներն են.  
զորօրինակ փոխանակ ըսելու թէ  
ամեն մարդու ճաշակն տարբեր է,  
այս կարծիքս կը հաստատէ ու կը  
զարգարէ հին ասացուածքով մը,  
ինչպէս որ ինքը յարգութեամբ կը-  
գոչէ, ըսելով « Ինչ որ մէկուն կե-  
րակուր է՝ ուրիշի մը թոյն է »: Թէ  
որ մէկը զինքը գրգռելու ըլլայ, ին-  
քը գիտէ « մէկին տեղ երկու տա-  
լու »: Ինչպէս որ ինքը կըսէ և կը  
նէ: Ըստ տեղւոյն քանի մը սիրած  
բառեր ունի, որոնք միշտ ուզելով



գործածել՝ սովորաբար անյարմար  
կերպով գործ կածէ. ինչպէս սասփի  
կատաղի, սասփի քաղաքավար, սաս-  
փի գեղեցիկ, սասփի տգեղ. նոյն իսկ  
յարմար բառերն հնչելու ատեն՝  
անբնական կերպ մը ունի. երբեմն  
զարդի համար խրթին բառեր կը  
գործածէ, ու կնիկ վարպետի պէս  
ծռամակելով կը հնչէ: Բարեզարդ  
մարդ մը ոչ երբէք առակներ ու  
առակական առածներ կը գործածէ,  
և ոչ ալ յասուկ սիրած կամ խրթ-  
թին բառեր ունի, հասպա մեծ փոյթ  
ունի որ ուղիղ և քերականորէն խօ-  
սի, և ճիշդ հնչէ, որ է ըսել լաւ ըն-  
կերութեանց գործածածին պէս:

Տեսաի փեսաի գեշ սովորութեանց  
դէ՛՛ զգուշութիւններ.

Ինքնիրեն քթին տակէն երգելը,  
մատուրներով թմբուկ զարնելը,  
ոտքով գետինը թոպելը, և ուրիշ  
այս տեսակ անշնորհք սովորութիւն-  
ները՝ բարեկրթութեան կանոնաց  
զանցառութիւն ըլլալով, ներկայ է.

ղած մարդկանց արհամարհութիւն  
մը կերևայ, անոր համար պէտք է  
զգուշանանք:

Ռամկութեան նշան է կերակու-  
րը խիստ շուտ կամ խիստ ծանր  
ուտելը. առջինը աղքատութեան  
նշան է, իսկ ետքինը թէ որ օտարի  
տուն է՝ այնպէս կերևայ թէ ըրած  
պատիւնին չես ախորժիր, իսկ եթէ  
քու տունդ է՝ այնչափ անքաղա-  
քավար կը համարուիս՝ որ ինչուան  
քու ուտել չկրցածդ բարեկամացդ  
առջև կը դնես. առակութիւն է նաև  
ապուր ուտելու ատեն քիթդ պնա-  
կին մէջ երկնցընելը. նմանապէս կե-  
րակուրը պատառաքաղով առնելէդ  
ետև բերանդ դնելէդ առաջ հոտուը-  
տալը. թէ որ քեզի զրկուած կե-  
րակուրը չես ախորժիր՝ թող. բայց  
ոչ երբէք հոտուըտալով ու քննելով  
անանկ երևցընես իբրև թէ բարե-  
կամդ քեզի մնասակար բան դրեր  
է առջիդ:

Խցի յատակին կամ կապերտի  
վրայ թքնելը աղտոտ սովորութիւն  
մի է, թէ որ սովորութիւն դառ-



նայ պէտք է կապերտներն ալ պե-  
ղանի սփռոցներու պէս ստէպ փո-  
խենք: Ուր թողունք որ ուրիշներն  
այնպէս կարծեն զմեզ իբրև թէ ազ-  
նիւ կահուց չենք վարժած, որուն  
համար գոնէ, թէ ոչ ուրիշ բանի  
համար՝ ազնուական կրթութիւն  
ունեցողը պէտք է զգուշանայ:

Ի վերջ բանիս, ճամբան չըլլա՛ թէ  
վաղելով քալես՝ որ ռամկութեան  
նշան է, ու անգէպ է ազնուական ու  
բարեզարդ մարդու վիճակին, թէ և  
վաճառականի մը ներելի է: Քէշ  
կրթութեան նշան է նաև հանգիստած  
մարդկանց վրայ աչուրնիս տնկած  
նայիլը. վասն զի այնպէս կերևայ թէ  
իր վրայ զարմանալու կարգէ դուրս  
բան մը կը նշմարենք. որ լռելեայն  
յանգիմանութիւն մի է:

Նմանապէս ազատ պահէ՛ զքեզ  
ամեն տեսակ անշնորհք սովորու-  
թիւններէ, ինչպէս են քերուրտիլ,  
մատուրները բերանը, քիթը կամ  
ականջը խոթել, լեզուն ցուցրնել,  
մատուրները չթաւացրնել, ըլլունկ-  
ները կրճել, ձեռուրները շփշփել,

բարձր ձայնով հորանջել, մարմինը  
դող ելլել ձեացրնել, բերանը բաց  
կենալ, և ուրիշ շատ տեսակ բաներ՝  
որ առաջ ալ յիշեցի, որոնք ամենքը  
ռամկի կերպերուն նմանութիւն, և  
ազնուական մարդու յարդը նուա-  
սացրնող բաներ են:

### Աշխարհ + ճանչնալ.

Քանի որ երիտասարդ ենք պէտք  
է շատ ծանօթութիւններ մտքերնիս  
հաւաքենք. վասն զի այն անմտա-  
դրութեան ժամանակը զանոնք շատ  
գործածելու առիթ ալ չունենանք,  
բայց ժամանակ պիտի գայ որ աշ-  
խարհիս մէջ երես ճերմկցրնելու  
համար անոնց կարօտ պիտի ըլլանք:  
— Աշխարհքիս ծանօթութիւնը  
մարդ աշխարհքիս մէջ կը ստանայ՝  
չէ թէ իր ուսմանց սենեկին մէջ.  
միայն գրքերն այդ բանը չեն կրնար  
քեզ սորվեցրնել, բայց դիտելու  
շատ բան մտքիդ կը ձգեն, որոնք կըր-  
նային բոլորովին անծանօթ մնալ  
քեզմէ, և մարդկութեան վրայ ը-



րած յատուկ դիտողութիւններդ՝  
երբ գրքի մէջ գտածներուդ հետ կը  
բաղդատես, ան ատեն քեզ կօգնեն  
ճշմարտութեան ճիշդ կէտն գտնե-  
լու:

Մարդիկ լաւ ճանչնալու համար՝  
չատ ուշադրութիւն և հանապա-  
զորդութիւն պէտք է. ինչպէս գիրք  
ճանչնալու համար, և թերևս շատ  
աւելի նրբամտութիւն և ընտրու-  
թիւն հարկաւոր է: Ես հիմա շատ  
հասակաւոր մարդիկ կը ճանչնամ,  
որ իրենց բոլոր կեանքը աշխարհքի  
մէջ անցուցեր են, բայց այնպէս թե-  
թեւութեամբ ու անմտադրութեամբ  
որ տասնըհինգ տարուան եղած ժա-  
մանակնին ինչ որ գիտէին անկէց ա-  
ւելի բան մը չեն գիտեր: Ապա ու-  
րեմն ինքզինքդ մի խաբեր կարծելով  
թէ այս ծանօթութիւնը կարենաս  
ունենալ դատարկասպորտ ընկերու-  
թեանց փճախօսութեանցը մէջ. չէ,  
այլ աւելի խորը պէտք է լիչնես.  
Գմարդիկ չէ թէ միայն դրսուանց  
պիտի թափանցես. ասպա մեծ խնա-  
մով որոնց հետ որ կը վարուիս

անոնց բնութիւնը քննէ, ջանա՛  
ճանչնալու անոնց գլխաւոր կրքերն  
յատուկ տկարութիւններն, իրենց  
ունայնասիրութիւններն, խենթու-  
թիւնները ու յօժարութիւնները,  
նոյնպէս մարդկային գործոց ուղիղ և  
մոլոր, խենթ ու խելօք պատճառ-  
ները, որոնք մեզի նման բանաւոր ա-  
րարածները այսպէս անհաստատ ու  
ցնորեալ էակներ կը դարձնեն:

Զկայ բնաւ այնչափ աննշան ու  
անարդ մարդ մը, որ այս կամ այն  
ատեն, այս կամ այն բանին մէջ չկա-  
րենայ քեզի օգտակար ըլլալ. բայց  
եթէ անգամ մը զինքը արհամարհած  
ըլլաս՝ անշուշտ թէ և կարենայ՝ բայց  
չօգնէր. անիրաւութիւնը շատ ան-  
գամ կը մոռցուի, բայց արհամար-  
հութիւնը ոչ երբէք. մեր հպար-  
տութիւնը զանիկայ միշտ կը յիշէ:  
Ապա յիշէ զգուշութեամբ ծածկե-  
լու քու արհամարհութիւնդ թէ և  
արդարացի ըլլայ, թէ որ չես ուզեր  
անհաշտ թշնամիներ ունենալ: Մար-  
դիկ շատ աւելի չեն ուզեր որ իրենց  
տկարութիւններն ու անկատարու-



Թիւններն ճանչցուին, քան թէ իրենց ոճիրներն. և զքեզ աւելի սասախիկ ու աւելի երկար ատեն կատէ թէ որ զինքը ապուշ, տգէտ կամ նաև անկիրթ ու անշնորհք սեպես, քան եթէ արձակ համարձակ ըսէիր իրեն թէ զինքը անզգամ կը կարծես:

Մարդուս տգիտութիւնը, աստիճանը ու բազդը երեսը զարնելէն աւելի մահացուցիչ նախատինք չկըրնար ըլլալ. առջինը միանգամայն անկրթութիւնն ու չարութիւնն է, իսկ վերջի երկուքը անիրաւութիւնն, որովհետև մարդուս աստիճանն ու բազդը իր ձեռքը չեն: Բարեկրթութիւնք ու բարեբարոյութիւնն թէ ունենանք՝ զուրիշները մեզմէ աւելի վեր կը սեպենք, քան թէ կը մահացընենք ու կը նախատենք. և ասով շատերը փոխանակ թշնամի ընելու բարեկամ կընենք մեզի: Հաճոյ ըլլալու հանապազորդ մտազրուիր հաճոյ ըլլալու արուեստին խիստ հարկաւոր նիւթերէն մէկն է. վասն զի որոնց որ կը ցուցընենք այս մտազրուութիւնն իսկ՝ անոնց անձնասիրու-

թիւնը կը փայփայենք, և մեծամեծ ծառայութիւններէ աւելի ասանկ փոքր բաներով անոնց սիրտը կը շահինք: Ամեն մարդ ընկերութեան պարտուց իրեն ընկած մասը պարտըկան է լեցընելու. բայց այս ըսած մտազրութիւններս կամաւոր դործեր են ու բարեկրթութենէ ու բարի սրտէ առաջ եկած ըլլանուն՝ ընդունելի կըլլան ու կը յիշուին և փոխարէնը կը տրուի: Կանայք աւելի իրաւունք ունին այս բանիս, և որ և է զանցառութիւնն այս բանիս մէջ խորթ անկրթութիւնն կը սեպուի:

Ամենեւին պէտք չէ տեղիք տանք այն փորձութեան՝ որ շատ երիտասարդաց վրայ կերևայ ուրիշի հիւանդութիւններն կամ տկարութիւնները առաջ քաշել, ընկերութիւնը անոնցմով զուարճացընելու համար՝ կամ մեր կատարելութիւնը ցուցընելու մտքով. վասն զի ասով առ ժամս զումանս կը ծիծաղցընենք, բայց ուրիշներն յաւիտեան թշնամի կընենք մեզի, և նոյն իսկ անունք որ մե-



զի հետ կը խնտան՝ յետոյ իրին անի-  
րաւութիւնը մտածելով մեզմէ կը  
խրտին ու զմեզ կարհամարհեն. այս  
բանս գէշ ու վատ բնութեան նշան  
է, ուր ընդհակառակն բարեսիրտ  
մարդը աւելի կուզէ ուրիշի տկա-  
րութիւնը կամ դժբաղդութիւնը  
ծածկել քան թէ հրասպարակել:  
Մեր վառվռուն աշխուժովը ուրիշի  
հաճոյ ըլլալու պիտի ջանանք՝ չէ թէ  
զանոնք խոցելու. բարեխառն գո-  
տեաց արեգական պէս կրնանք փայ-  
լել՝ առանց այրելու:

Շատ անմեղ արուեստներ կան՝  
որոնք աշխարհքիս ընթացքին մէջ  
հարկաւոր ալ են, և ո՞վ որ կանուխ-  
կեկ անոնց կը վարժի՝ աւելի հաճոյ  
կըլլայ և շուտ անուն կը հանէ. աշ-  
խոյժ ու վառվռուն տղայք զանոնք  
անօգուտ ու ձանձրալի կը սեպեն  
ու անհոգ կըլլան, բայց ետքէն ու-  
նեցած աշխարհի ծանօթութիւննիս  
ու փորձառութիւննիս՝ անոնց կա-  
րևոր ըլլալը կը ցուցնեն, երբոր ալ  
խիստ ուշ է զանոնք ձեռք բերելը:  
Այս բաներուս մէջ գլխաւորն է մեր

բնութեան վրայ ունեցած տէրու-  
թիւննիս, և մտաց պաղութիւնը ու  
կերպերնուս պարզութիւնը, որով  
ինքզինքնիս կը բռնենք խօսքով, գոր-  
ծով կամ նոյն իսկ նայուածքով մեր  
'ի ներքս եղած կամ կրած կրքեր-  
նիս կամ զգացմունքնիս գրսուանց  
չցուցնելու. որովք եթէ յայտ-  
նենք պաղ ու ճարտար մարդիկ  
զանոնք մեզի գէմ կը սկսին գոր-  
ծածել ու մեզի կը յաղթեն չէ  
թէ միայն ծանր նիւթերու մէջ, այլ  
նաև կենաց ամենօրեայ ընթացից  
մէջ: Այն մարդն որ ինքն իր վրայ  
բաւական իշխանութիւն չունի՝ ա-  
ռանց այլայլելու և առանց բարկու-  
թիւն ցուցնելու անախորժ խօսքեր  
լսելու, կամ հաճոյական խօսքեր լը-  
սելու ատեն իր ուրախութիւնը ու  
գոհութիւնը զսպելու, միշտ խաղա-  
լէք կըլլայ որ և իցէ վարպետորդի  
խաբեբայի ու աներես կոկոնողի.  
առջինը գիամամբ զքեզ կը գրգռէ  
կամ կը փայփայէ որպէս զի բերնէդ  
խօսք առնէ ու անով գիւրաւ քու  
սրտիդ գաղտնիքն իմանայ, որուն



որ բանալին պէտք է որ քու ձեռքդ ըլլայ և մէկու մը ջանձնես. իսկ ետքինը առանց այն դիտմունքն ունենալու՝ իրեն արտառոց կերպերովը նոյնպէս քու գաղտնիքդ կիմանայ, և ուրիշներն անոնցմէ օգուտ կը քաղեն:

Երբ ինքզինքդ յանկարծական կրից կամ խենթութեան ենթակայ կը տեսնես՝ (վասն զի այս երկուքին մէջ ուրիշ տարբերութիւն չեմ տեսներ՝ բայց եթէ իրենց երկար կամ կարճ տևելը) գոնէ առաջագրէ որ քանի որ ներքուստ խօսված չիմանաս՝ ամենևին բառ մը չխօսիս: — Վերջապէս դու քու բնութեանդ ու կերպիդ վրայ բացարձակ տէր եղիր, գոնէ այնչափ որ ինչ ալ ներսէն իմանաս՝ արտաքուստ երևելի փոփոխութիւն մը չցուցնես ասանկ կամ անանկ: Այս բանս յիրաւի դժուար է, բայց ոչ բնաւ անկարելի. և ինչպէս որ մէկ կողմանէ խելացի մարդ մը անկարելի բանին ձեռք չղարներ, այնպէս ալ միւս կողմանէ դժուարութիւններէ ամենևին

չվհատիր. այլ ընդհակառակն իր ջանքն ու փոյթը կը կրկնապատկէ, կը հանապազորդէ և անշուշտ վերջապէս կը յաղթէ: Արեւիցէ բանի մէջ երբ խոհեմութիւնը կը հրամայէ քեզի ետևէ ըլլալ, և ուսկից որ յայտնի օգուտ մը կը տեսնես, դժուարութիւններն միայն քու ճարտարութիւնդ պիտի ժրացնեն, չէ թէ նպատակէդ զքեզ հեռացնեն: Թէ մէկ ճամբայն չաջողի, միւսը փորձէ, ժրացիր, շարունակէ և կը յաղթես: Ամանց հետ պատճառով խօսելու է, ուրիշները շոյելու է, զոմանս ալ վախցնելու է, ուրիշներն ալ նեղը խոթելու է բան մը ընել տալու համար. բայց ընդհանրապէս ՚ի վախճանի զամենքը կրնաս համոզել՝ թէ որ վարպետութեամբ վարուիս ու զգուշութիւն գործածես, և առանց ձանձրանալու անոնց տկար կողմէն վրանին հասնիս. բայց յարմար ժամանակն ալ նայելու է. ամեն մարդ իր կռուի ծամանակն ունի, բայց ամեն օր հաւասար չէ. և ժամանակդ լաւ



ընտրած չես ըլլար՝ թէ որ գործոյ մը համար այնպիսի ատեն երթաս մէկուն քով՝ երբ անիկայ ուրիշ մը տածմունք ունի գլխուն մէջ, կամ սիրտը վշտով կամ բարկութեամբ կամ ո՛ր և իցէ անասորժ զգածմամբ լեցուած է:

Ուրիշի սիրտը դատելու համար՝ քու կիներ քննէ. վասն զի մարդիկ ընդհանրապէս մէկմէկու նման են, և թէպէտ մէկն առաւել այս կիրքս ունի, մէկաւր ուրիշ մը, բայց իրենց գործն գրեթէ նոյն է. անոր համար ինչ որ քու սիրտդ կը քաշէ կամ կը խրտեցընէ, հաճոյ կամ անհաճոյ կը լլայ, նոյն բաներն քու վրագ ալ երենալով ուրիշի հաճոյ կամ անհաճոյ, սիրելի կամ ատելի կը լլայ: Ամեն մտադրութեամբ զննէ քու մտացդ գործողութիւնները, քու կրկնդ յասկութիւնները, և քու կամքդ շարժող սլատճառները, և ասով բոլոր մարդկութեան վրայ մեծ ծանօթութիւն կը ստանաս: Օրինակի համար մէկն որ իր իմաստութիւնը, իր արդիւնքը, աստի-

ճանն ու բաղդը մեծցընելով զքեզ վար զարնէ՝ չես մի գժամնիր ու մահգնար. ասպա անշուշտ մեծապէս կը զգուշանաս դու ալ քու ունեցած առաւելութիւնդ չցուցընելու այն մարդուն որուն բարեկամութիւնը, բարեխօսութիւնը, օգուտն, համարմունքը կամ բարեկամութիւնը կուզես ձեռք ձգել: Թէ որ տհաճելի շողումութիւններն, կծու կատակները, ստէպ հակառակաբանութիւններն զքեզ անհանգիստ կընեն ու կը գրգռեն. մի թէ նոյն բաներն դու ալ կրնաս ընել՝ երբ կուզես մէկուն հաճոյ ըլլալ ու մէկուն սիրտը շահիլ. անշուշտ ոչ բընաւ, այլ մանաւանդ կտրծեմ թէ կը փափաքիս ամենուն հաճոյ ու սիրելի ըլլալ: Իմ գիտցածս՝ վառվառն ու կծու խօսք մը ըսելու փորձութիւնը, և ուրիշներու չարասիրտ ծափահարութեամբ զանի գովելը, անհամար ու անհաշտ թշնամիներ յարուցած է անոնց դէմ որ իրենք զիրենք աշխոյժ ունեցողի տեղ գրած են ու այնպէս չեն. և չեմ գիտեր



Թէ արդեօք ուրիշ բան մի կայ որ  
այնչափ չարեաց պատճառ եղած  
ըլլայ: Թէ որ այսպիսի բան մը քու  
վրայօքդ զուրցուի՝ (ինչպէս որ եր-  
բեմն յիրաւի կրնայ պատահիլ) լաւ  
մտածէ Թէ որչափ անհանգստու-  
թիւնդ, բարկութիւնդ և ոխդ կը  
բռնէ, և անկէ հետեցուր Թէ ար-  
դեօք խոհեմութիւն է ուրիշներն ալ  
քեզի դէմ դրդուել մի և նոյն կեր-  
պով: Յայտնի յիմարութիւն է կա-  
տակի մը համար բարեկամ մը կոր-  
սունցընէլը, բայց ես կարծեմ Թէ  
անտարբեր ու օտար մարդ մը խեղ-  
կատակութեան սիրոյն համար Թըշ-  
նամի ընէլն ալ անկէց պակաս յի-  
մարութիւն չէ: Երբոր ասանկ խօսք  
մը քու վրայօքդ ըսուի՝ խոհեմա-  
դոյն ճամբայն քեզի համար զուր-  
ցուած ըլլալը չցուցընէլն է, և ներ-  
սէն խմացած բարկութիւնդ ծած-  
կէլն է. և եթէ այնպէս յայտնի է  
ըսուածը որ ուրիշներն չեն կրնար  
կարծել Թէ դու խմացած չըլլաս՝  
այն ատեն լաւ է քու ալ ընկերու-  
թեան հետ մէկ տեղ քու վրայդ

ծիծաղիլ. խոստովանէ ևս որ քարը  
աղէկ տեղը դրուեցաւ, և Թէ շատ  
յարմար էր եղած կատակաբանու-  
թիւնն, և եղածին վրայ անտարբեր  
և զուարթ ցցուր ինքզինքդ. բայց  
չըլլա՛ որ նոյն ատեն մէկէն նոյն  
կերպով պատասխան տաս. վասն  
զի անով կը ցուցընէս Թէ ծանր ե-  
կեր է քեզի ըսուածն, և հակառա-  
կորդիդ յաղթութիւնը կը հրատա-  
րակես փոխանակ ծածկելու: Իսկ  
Թէ ըսուած խօսքը յիրաւի քու  
պատուոյդ ու բարոյականիդ կը  
դպչի, յիշէ որ ազնուական ու ար-  
ժանաւոր մարդու մը համար երկու  
կերպ կայ՝ ազնիւ բարեմարդութիւն  
և կամ արդար ցասումն:

Երբոր մէկը զքեզ յայտնի ու կա-  
մակար կերպով կանարգէ ու կը  
պախարակէ, ցցուր քու ցասումնդ.  
բայց եթէ միայն կը նախատէ՝ լա-  
ւագոյն վրէժխնդրութիւնը արտա-  
քուստ վերջին աստիճանի քաղա-  
քավարութիւն ցուցընէլն է. Թէ-  
պէտ և նոյն ատեն իւր նախատինքն  
իր գլուխը դարձընէ, հանդերձ



վաշխութիւն : Այս բանս նենդաւորու-  
թիւնն ու խաբէութիւնն չէ . այսպէս  
կըլլար թէ որ նոյն ատեն համար-  
մունք ու բարեկամութիւնն ցուցը-  
նէիր անոր , որն որ ոչ բնաւ կ'ա-  
պրօսարեմ , այլ ընդ հակառակն կ'ա-  
տեմ : Քաղաքավարութեան որ և  
իցէ պարտքերն ուրիշ բան չեն՝  
բայց եթէ հաստատեալ սովորու-  
թեանց հարատակութիւնն՝ ընկերու-  
թեան խաղաղութեանը և սրաաշա-  
ճութեանը համար սահմանուած . և  
այս ընկերութեան պէտք չէ որ մէ-  
կունն առանձին տհաճութիւննե-  
րովն ու նախանձայուզութիւննե-  
րովը խռովի : Յաճ կանանց ու խելքը  
կարճ մարդկանց միայն տրուած է  
պոռալ կանչուըռաւը , որոնք ըն-  
կերակցութեան մէջ զուարճու-  
թիւն մը կը դառնան , և ամեն  
մարդ վրանին կը խնայ , և կեր-  
պով մը իրենց վրայ չգթար : Ես  
թէպէտ և իմ նախանձորդիս կէտ մի  
ալ չեմ շնորհեր , բայց ինձի սրա-  
ճանք կը սեպեմ ամեն մարդկանցմէ  
աւելի մարդավարութիւնն ցցունե-

լու իրեն : Նախ որ այս կերպով ա-  
մեն խնտացողներն՝ որոնց թիւն  
խիստ շատ է՝ քու կողմդ կը շահիս .  
և երկրորդ որ նոյն իսկ քու նա-  
խանձորդդ էրիկ մարդ եղեր է կնիկ  
մարդ եղեր է՝ կը ստիպուի ըսելու  
քեզի . « Պէտք է խոստովանիմ որ  
այս բանիս մէջ շատ աղէկ կերպով  
վարուեցար » :

Վերջապէս քու վարմունքիդ ան-  
փոփոխ կանոն ըլլայ այս բանս . որ  
ցասման փոքրիկ նշան մի ալ չերե-  
ցընես՝ եթէ չես կրնար զանի յագե-  
ցընել , և միշտ եղածին վրայ ժպտիս  
թէ որ չես կրնար պատժել : Մէ որ  
մարդ չկարենար ծածկել կամ  
պարտկել իր ցասմանը արդարացի  
սրտաճառներն՝ որոնք դործոնեայ  
ու զբաղեալ կենաց մէջ ամեն օր  
կրնան պատահիլ , չէր կրնան աշ-  
խարհիս մէջ ասլրիլ . և ո՛վ որ իր  
բնութեան վրայ ախրած չէ՝ պէտք  
է որ աշխարհքս թողու և ճգնարան  
մը և անմարդի անասպատ մը քա-  
շուի : Անօգուտ և ծանր ցասում մը  
ցուցընելովդ՝ որոնք որ քեզի կրնան



փրասել ու դու անոնց չես կրնար՝  
 անոնց ցասումը հաստատած կըլ-  
 լաս, և թերևս իրենց փափաքած  
 պատճառանքը տուած կըլլաս ի-  
 րենց՝ քեզի հետ աւրուելու և զքեզ  
 նախատելու. ուր հակառակ կերպը  
 գոնէ զանոնք զգօնու թեան սահ-  
 մանին մէջ կը պահէ, և իրենց չա-  
 րու թիւնը կամ կը զսպէ կամ կը  
 խայտառակէ: Ուր թողունք որ  
 ցասկոտ, դեգ ու տրտաւոցող ըլլալը  
 շատ անկիրթ ու ռամկական բան է:

Թէպէտ և մարդիկ ամենքն ալ  
 մէկ խմորէ են, բայց ամեն մէկուն  
 բնութեան բաղկացու թիւնը այլև-  
 այլ չափով խառնուած ըլլալուն՝  
 երկու հոգի չես գտներ որ բոլորո-  
 վին նման ըլլան մէկմէկու. նա և ա-  
 մեն մարդ ալ ամեն ատեն նոյն չըլ-  
 լար. ճարտար մարդը կը տկարա-  
 նայ, հալարտը կը նուաստանայ, ա-  
 մենէն արդարը՝ կը մեղանչէ, և չա-  
 րագործ մարդը երբեմն բարի գործ  
 կընէ: Ասլա ուրեմն առանձին ան-  
 հաար զինէ, և թէպէտ իրենց  
 սիրող կըքերէն իրենց գաղափարն

ալ տանես՝ ինչպէս որ պէտք է,  
 բայց վերջի որոշմունքդ մի տար ին-  
 չուան որ իրեն մանր կըքերուն, ա-  
 խորթակներուն ու արտառոցու-  
 թիւններուն գործը չգիտես ու չի-  
 մանաս. մէկուն ընդհանուր բնու-  
 թիւնը կրնայ ըլլալ որ խիստ ար-  
 դար ըլլայ, վրան տարակոյս մի ցը-  
 ցուներ, վասն զի ասով ուրիշնե-  
 րուն նախանձոտ ու չարամիտ կե-  
 րենաս. բայց նոյն ատեն անոր ար-  
 դարութեան վրայ անանկ մի վստա-  
 հիր որ իր ձեռքն յանձնես քու  
 կեանքդ, ինչքդ ու պատիւդ. վասն  
 զի այդ արդար մարդն կրնայ քու  
 իշխանութեանդ, շահուդ և սիրոյդ  
 նախանձորդ ըլլալ. և այս երէք կըր-  
 քերս ալ մարդուս արդարասիրու-  
 թիւնը շատ ծանր փորձութեան  
 մէջ կը ձգեն, ու որոնց մէջ շատ ան-  
 գամ կը գտուին. բայց նախ դու մէ-  
 կիկ մէկիկ այս արդար մարդուն  
 յատկութիւններն քննէ, և այն ատե-  
 ն միայն կրնաս դատել թէ ինչ  
 աստիճան կրնաս կամ չես կրնար  
 անոր վստահիլ:



Ընդհանարպէս կասկածէ ան մարդկանց վրայ որոնք յայտնապէս առաքինութիւն մը ունենալ կը ցուցնեն, և զայն ուրիշ առաքինութիւններէ աւելի կը վերադասեն, և անանկ մը կը ցուցնեն թէ միայն իրենք ունին ատիկայ. կըսեմ որ զգուշանաս, վասն զի սովորաբար խաբեբայ են, բայց միտքդ մի դներ թէ միշտ այնպէս են. վասն զի երբեմն սուրբեր ճանչցայ որ յիրաւի կրօնասէր էին, ինչպէս պոռոգախօսներ որ յիրաւի կտրիճ էին, բարուց ուղղիչներ որ յիրաւի արդար էին, և մարապետներ որ յիրաւի զգաստ էին: Բու քեզմէ անոնց սիրտը դիտէ՝ որչափ որ կրնաս և ուրիշներու զուրցածին վրայ համարմունքդ մի հաստատեր. որովհետև ընդհանրապէս համբաւ ըսածդ ընդհանուր բնաւորութեանց վրայ ճշմարիտ ալ ըլլայ, բայց մասնաւոր պարագայներու մէջ միշտ ծուռ է:

Զգուշացիր այն մարդիկներէն՝ որոնք հազիւ քեզի հետ ճանչուորելով առանց քու ուղեւորդ ու ա-

ռանց արժանաւորութեան քեզի հետ բարեկամութիւն կուզեն հաստատել, որով քեզի հաճոյ ըլլալնուն վախճանն ուրիշ բան չէ բայց իրենց պորտաբուծութիւնը. բայց մի և նոյն ատեն նայէ որ այս կասկածիս համար զիրենք խիստ կերպով չմերժես: Քննէ դարձեալ թէ արդեօք այս անակնկալ անձնամատուցութիւնը տաք սրտէ ու տկար խելքէ առաջ կուգայ թէ չարամտութենէ ու պաղսրտէ. որովհետև շատ անգամ յիմարութիւնն ու խաբէութիւնը նոյն նշաններն կունենան. թէ առջինն է՝ ընդունելովդ մնաս մը չըլլար՝ որչափ կարժեն այնչափ թող արժեն. իսկ թէ երկրորդն է, լաւ կըլլայ որ ընդունել ցուցնես, և ետքը վարպետութեամբ մարտկոցը զանի սլատրաստողին դէմ դարձնես:

Երբոր մէկը երդումստատաւ ըլլայ քեզի բան մը հաւտացնելու որ ինքն իրեն հաւանական բան է, և պարզապէս ըսելն միայն բաւական է. դիտցիր որ սուտ է ըսածը, և



ինքը մեծ շահ ունի զանի քեզի հաւ-  
տացընելէն. ապա թէ ոչ այնչափ  
աշխատանք յանձն չէր առներ:

Երիտասարդաց մէջ տեսակ մը  
անժոյժ բարեկամութիւն ալ կայ,  
որոնք իրենց փոփոխակի զուարճու-  
թեանց համար իրարու հետ կա-  
սրուած են. այս բանս շատ անգամ  
գէշ հետեանքներ կուենեսայ. այս-  
պիսի եփուէն սիրտ ու անփորձ խել-  
քի աէր եղողներու ընկերութիւն  
մը, հացկերութի մը ուրախու-  
թենէն տաքցած ու թերևս քիչ մըն  
ալ շատկեկ գինիի ուժէն բորբո-  
քած՝ երգմամբ չափ յաւիտենա-  
կան բարեկամութիւն մը կը խոս-  
տանան մէկմէկու, որ թերևս առ-  
ժամն անկեղծ ալ է, և անզգուշա-  
բար առանց բան մը ծածկելու բո-  
լոր սրտերնին ամենուէն կը յայտնեն.  
ուրիշներն ալ նոյնօրինակ անխոհե-  
մութեամբ լսածնին ուրիշներուն  
կը զրուցեն, որովհետև նոր ընկե-  
րութիւններու նոր զուարճութիւն-  
ներ առջի գէշ կերպով շարուած  
միաբանութիւնը շուտով կը քակ-

տեն. և ան առեն առջի անխոհեմ  
վստահութիւններն շատ գէշ հե-  
տեանքներ կուենան: Բայց սակայն  
քուհասակացաց ընկերութեանը  
մէջ դու ալ խառնուէ, մանաւանդ  
թէ նայէ որ երիտասարդութեան  
վայել ամեն ընկերական զուարթու-  
թեան մէջ՝ թէ որ կրնաս, առջինը  
երևնաս. թէ որ կուզես պատմէ ա-  
նոնց քու տարփանքդ, բայց քու  
հարկաւոր խորհուրդներդ ծածուկ  
պահէ. և զասոնք լաւ ճանչցած ու  
քեզմէ աւելի փորձառութիւն ու-  
նեցող բարեկամի միայն յայտնէ,  
և անանկ մարդու որ քեզմէ տար-  
բեր ընթացք կենաց ունենալուն՝  
հաւանականաբար քեզի նախան-  
ձորդ չկրնար ըլլալ: Վասն զի չեմ  
ուզեր որ դու այնչափ վստահու-  
թիւն ունենաս մարդկանց դիւցաղ-  
նական առաքինութեանը վրայ՝ որ  
յուսաս կամ հաւատաս թէ մարդ  
մը բանի մը մէջ քեզի նախանձորդ  
ալ ըլլալով՝ քեզի բարեկամ կրնայ  
ըլլալ նոյն բանին մէջ:

Շատ անգամ աշխարհի ծանօթու-



Թեան մէջ խիստ հարկաւոր բան է  
 առ երևոյթ տգիտութիւն մը ցու-  
 ցընելը. օրինակի համար մէկն որ  
 քեզի դայ բան մը ուզէ պատմել՝  
 ալ լաւ է որ չգիտնալ ձեանաս. և  
 թէ որ հարցընէ թէ այս բանս դու  
 լսած չէս. պատասխանէ թէ չէ. և  
 թող որ առաջ տանի ըսածը, թէ և  
 առաջուց լսած ըլլաս: Վասն զի կան  
 ոմանք որ տաամել կը սիրեն՝ կար-  
 ծելով թէ լաւ կերպ ունին պատ-  
 մելու. ուրիշներն ալ անձնահաճու-  
 թիւն մը կիմանան՝ իրենք զիրենք  
 վարպետութեամբ ամեն բան իմա-  
 ցողի տեղ գնելով, ոմանք ալ սնա-  
 պարծութեամբ կուզեն ցուցընել  
 թէ այն բանը իրենց ծածուկ վստա-  
 հացեր են ուրիշները, որ այնպէս  
 չէ: Արդ թէ որ պատասխան տաս  
 թէ դու գիտես այդ բանը՝ ատոնք  
 ամենն ալ պաղ կը մնան ու հետեւա-  
 պէս կը տհաճին: Բայ 'ի խիստ ըն-  
 տանի բարեկամէդ նայէ որ ուրիշնե-  
 րուն առջևը միշտ չգիտցող երևաս  
 օտարներու առանձին յանցուածոց  
 ու անուանակոտորութեանը, թէ և

հազար անգամ լսած ըլլաս. որով  
 հետեւ յանցանքին տէրերը միշտ հա-  
 ւասարապէս կատեն բամբաստոյն ու  
 բամբասանքը լսողն, ինչպէս գողն  
 ու գողակիցը. և երբ այս բանս ընդ-  
 հանուր խօսակցութեան նիւթ ալ  
 ըլլայ, միշտ ինքզինքդ տարակուսող  
 ցցուր՝ թէպէտ և ստուգիւ ու ա-  
 ներկբայ հաւատաս, և միշտ պզտիկ-  
 ցընելու ջանա՛: Բայց այս ամեն առ-  
 երևոյթ տգիտութիւնը պէտք է որ  
 հիմնովին ու կատարեալ առանձին  
 ծանօթութեան հետ միացած ըլլայ.  
 և յիրաւի ինքզինքը չգիտցող ձեա-  
 նալէն աւելի ասպահովագոյն ճամ-  
 բայ չկայ ամեն բան իմանալու. վասն  
 զի ոմանք ուրիշներէն վեր երևնա-  
 լու այնպիսի փափաք մը ունին, թէ  
 և քիչ մը ժամանակուան համար ու  
 ոչ ինչ բաներու մէջ ըլլայ, որ չը-  
 սուելու բաներն ալ քեզի կուզեն  
 ըսել, քան թէ չցուցընել թէ կըր-  
 նան քեզի անանկ բաներ ըսել որ  
 դու չես գիտեր. ուր թողունք որ  
 այսպիսի ձեացեալ տգիտութիւնը  
 այնպէս մը կարծել կուտայ որ դու



հետաքրքիր մարդ չես, և հետևապէս ուրիշներու դէմ հնարք չես բանեցրներ: Բայց սակայն նայէ որ եղածին ետևէ ըլլաս, և անցած բաներու լաւ տեղեկութիւն առնելու աշխատէ. բայց քու բանորսակութիւնդ խելքով ըլլայ, և ոչ միշտ, և ոչ ալ յաճախ, և յայտնի հարցութիւններով. որոնք դիմացինդ կարծրնցրնեն զգուշանալու քեզմէ, և շատ որ ըլլայ ձանձրոյթ կը պատճառեն: Երբեմն ալ գիտնալու զած բանդ ձեացուր թէ դու ալ նոյն կարծիքին վրայ ես և ան ստեն կը տեսնես որ ուրիշ մը քաղաքավարութեամբ և սլատրաստականութեամբ կը ջանայ քու կարծիքդ շտկելու. երբեմն ալ ըսէ որ ասանկ անանկ լըսեր ես, ուրիշ ատեն ալ գիտցածէդ աւելի ցցուր, որպէս զի չգիտցածդ ալ իմանաս. բայց որչափ կրնաս յայտնի հարցմունքներէն զգուշացիր:

Մարդուս բնութիւնը ամեն տեղ նոյն է, բայց իր դաստիարակութեամբը ու սովորութեամբը իր

գործքերն այնչափ կը զանազանին՝ որ զանոնք լաւ ձանձնալու համար՝ պէտք է անոնց ամեն կերպարանքն ալ տեսած ըլլալ. զոր օրինակ փառասիրութեան կիրքը պաշտասկանի մը, զինուորականի և եկեղեցականի մը սրտին մէջ մի և նոյն կիրքն է. բայց անոր հասնելու համար ամենքն ալ իրենց դաստիարակութեան ու սովորութեանց համեմատ այլևայլ կերպեր կը բանեցրնեն: Մարդավարութիւնը որ ուրիշներու օգնելու և զանոնք երախտասլարտ ընելու կատարելութիւնն է՝ ամեն աշխարհք նոյն է. բայց բարեկրթութիւն ըսուածը որն որ նոյն կատարելութեան գործագրութեան կերպն է՝ գրեթէ ամեն աշխարհք տարբեր է ու ըստ տեղեաց կը փոփոխի. և խելացի մարդը ուր որ գտուի՝ ինքզինքը հոն տեղի բարեկրթութեանը կը յարմարցընէ: — Աշխարհքիս մէջ շատ հարկաւոր բան է որ մարդ իր կերպը ուրիշներուն յարմարցընելու կատարելութիւն ունենայ, յայտնի է այն



ամեն բաներու մէջ որոնք ըստ ինքեան սխալ չեն. նմանապէս Բարձայնդանակ հանճար ըսուածն քան զամենն աւելի օգտակար է. որովհետև շուտով մէկ նիւթէն միւսը կանցնի՝ երկուքին մէջ ալ իր յատուկ կերպն սբահելով. խոհական մարդու հետ ծանր, զուարթաբարոյն հետ ուրախ. և նոյն իսկ թեթևամտին հետ թեթևամտ:

Եւ յիրաւի չկայ այնպէս սիրտ քաշող բան մը ինչպէս ուրախ և համարձակ յարմարութիւն մը ուրիշի մասնաւոր կերպին, սովորութեանցն և նոյն իսկ տկարութեանցը. և ինչպէս ռամիկը կըսէ բան մը չկայ որ երկտասարդի մը անպատշաճ ըլլայ. ինքն պէտք է ազէկ բաներու մէջ նմանող ըլլայ Ալկիբիադիսին՝ ինչ որ նա էր գէշ բաներու մէջ. այսինքն Պրոմէտէոս մը՝ դիւրաւ, համարձակ և զուարթ կերպով մը ամեն ձև առնելով. պէտք է որ գիանայ ցցունել ապքութիւն, սրազութիւն, ճոխութիւն, ժուժկալութիւն, ծանրութիւն, պաշտօ-

նասիրութիւն, համարձակութիւն, գիտութիւն, թեթևութիւն, գործասիրութիւն, զուարճասիրութիւն, և ըստ տեղւոյն թողուլ կամ վիտխել իր բնաւորութիւնը այնպէս ազատութեամբ ինչպէս որ իր գլխարկն կը դնէ ու կը վերցընէ:

Տղայ մարդիկ սովորաբար կարծեն թէ ամենայն բան աշխուժութեամբ ու զօրութեամբ առաջ կըրնան տանիլ, և թէ վարպետութիւն բանեցընելը ցածութիւն է, և թէ լեզու թափելը ու հաճոյականութիւնը ցածութեան ու տկարութեան հնարքներ են. այս սուտ կարծիքս պատճառ կըլլայ իրենց խորթ յանդուգն ու անկիրթ կերպերնուն. անխելքներ, որոնք ոչ երբէք իրենց սխալը կը ճանչնան, ու բոլոր կեանքերնուն մէջ անով առաջ կերթան. բայց ինչպիսի մարդը քիչ մը փորձառութեամբ ու խորհրդածութեամբ աս բանէս կազատի. երբոր քիչ մը իրենք ղիրենք և զմարդիկ ճանչնալ սկսին, այն ատեն կը տեսնեն որ պարզ և ուղիղ դատմունքը



տասնին ինը՝ սրտի և կրից յաղթա-  
նակին շղթայակապ գերիներն են,  
և հեռուապէս տասնին ինը անգամ  
յաղթողին կը դիմեն որ զիրենք  
չնուաճէ. իսկ յաղթողքն ինչպէս  
որ գիտէք կուզեն որ խիստ քաղց-  
րութեամբ և խիստ հաճոյական  
կերպով իրենց աղաչեն:

Բայց դժբաղդութիւնն յայսմ  
է որ երիտասարդք իրենք զիրենք բա-  
ւական խոհեմ կը սեպեն, ինչպէս  
որ արբեցողք ալ իրենք զիրենք չա-  
փաւոր ժուժկալ կը կարծեն. վառ-  
վըռուն աշխոյժը՝ փորձառութենէ  
աւելի լաւ բան կը սեպեն, և զասի-  
կայ սլաղութիւն կը կոչեն: Ասոնք  
ալ կէս մը կը սխալին. վասն զի թէ-  
պէտ աշխոյժը առանց փորձառու-  
թեան փնասակար է, բայց փորձա-  
ռութիւնն ալ առանց աշխուժի  
թոյլ ու անկասար բան մի է. իսկ  
երկուքին մէկէն միաւորութիւնը  
որ քիչ կը գտուի՝ է նոյն իսկ կա-  
տարելութիւնը. դու թէ որ կու-  
զես կրնաս զանոնք միացընել. վասն  
զի բոլոր իմ փորձառութիւնս սլաւ-

րաստ է քեզի ծառայելու, և փո-  
խարէն քու աշխուժէդ ունկի մի ալ  
չեմ ուզեր. ասլա երկուքն ալ գոր-  
ծածէ, և նայէ որ փոխադարձաբար  
մէկզմէկ քաջալերեն ու սանձահա-  
րեն: Հոս երիտասարդական աշ-  
խոյժ ըսելով կ'իմանամ անոնց վառ-  
վըռնութիւնն ու ձեռներիցուիը՝  
որ չեն թողուր բանի մը դժուարու-  
թիւնը ու վտանգները տեսնելու.  
Բայց չեմ իմանար այն անմիտ ռամ-  
կին աշխոյժ ըսածը՝ որ զմարդիկ  
կռուարար ու իրենց աստիճանին  
չարաչար նախանձայոյզ կրնէ, ո-  
րոնք կարծեն միշտ թէ ուրիշները  
ըստ իրենց արժանեացը չեն սլա-  
տուեր զիրենք, և ամենամանր դի-  
պուածոց մէջ ալ սուր պատասխան-  
ներով զուրիշները կը խայթեն: Այս  
բանս խիստ չար և խիստ ցած աշ-  
խոյժ մըն է, որն որ հալածելու ու  
խողից երամակներու մէջ ձգելու է:

Թօսքերնիս կնքենք. ոչ երբէք  
հին բարեկամներդ երեսէ ձգես կամ  
արհամարհես նոր ու աւելի մեծե-  
րու հետ բարեկամութիւն ընելու



համար . վասն զի քու կողմանէդ ա-  
սիկայ ապերախառութիւն կը սե-  
պուի , և անոնք ալ չեն մոռնար  
զայս բանս : Որչափ կրնաս նայէ որ  
շատ անձնական բարեկամ ու քիչ  
անձնական թշնամի ունենաս . անձ-  
նական բարեկամ ըսելով չեմ հաս-  
կընար մտերիմ ու խորհրդակից բա-  
րեկամ , որոնք հինգ վեց հատէն ա-  
ւելի ոչ դք կրնայ յուսալ ունե-  
նալու բոլոր իր կենացը մէջ . բայց  
բարեկամ կըսեմ ընդհանուր նշա-  
նակութեամբ բառին , այսինքն մար-  
դիկ որ քու վրագ լաւ խօսին ,  
քեզի աւելի լաւ կամենան քան թէ  
չար , երբոր իրենց շահուն արդէլք  
չէ , և ոչ թէ աւելի :

### Ս Ի Կ Ե Բ Ե Լ

Սուտ զրուցելէն աւելի յան-  
ցաւոր , վատ ու ծաղրական բան  
չկրնար ըլլալ . այս բանս կամ չա-  
րութենէ կամ ցածութենէ և կամ  
անասարծութենէ առաջ կուգայ .  
բայց սովորաբար այս իրեքին մէջ

ալ իր վախճանին չհասնիր . վասն զի  
սուտը շուտ կամ ուշ երևան կելլէ .  
թէ որ մէկուն ընչիցը կամ անուանը  
մնասելու մտքով չարութեամբ  
սուտ մը ըսենք՝ յիրաւի առ ժամն  
կրնանք անոր մնասել . բայց վերջա-  
պէս մենք աւելի մնասով կելլենք .  
վասն զի սուտը յայանուելուն պէս  
մեր վատ դաւաճանութեանը հա-  
մար ամենէն կանարգութիւնք . և յե-  
տոյ ինչ որ ալ ըսելու ըլլանք այն  
անձին վրայ՝ թէպէտ ճշմարիտ ըլ-  
լայ՝ ըսածնիս զրպարտութիւն կը  
սեպուի : Մեր ըսածը կամ ըրածը  
արգարացընելու համար և ամօթ  
չկրելու համար սուտ զրուցելը կամ  
երկխօս սատասխան տալը՝ մեր վախ-  
կոտութիւնն ու մեր սուտզրուցու-  
թիւնը կը յայտնէ , և վտանգէն ու  
ամօթէն ազատելու տեղ՝ աւելի կը  
մեծցընէ զանոնք , և զմեզ ամեն մար-  
դէ աւելի ցած ու վատ կերեցընէ . և  
անշուշտ ուրիշներն ալ մեզի հետ  
անանկ կը վարուին : Թէ որ դժբաղ-  
դութեամբ բանի մը մէջ սխալինք  
կամ սլակասինք՝ տեսակ մը ազնուա-



կանուլթիւն է զանի համարձակ  
խոստովանիլը. և մի միայն ճամբայ  
յանցանքնիս ծածկելու և զանիկայ  
մոռցրնել տալու: Վստանգէ ազատե-  
լու համար երկխօս ու տարտամ  
պատասխաններ տալն ու փախչտիլը  
ան աստիճան ցած ու վախկոտի  
բան է՝ որ ընողն պատժոյ արժանի  
է:

Ոմանք ալ տեսակ մը սուտ զրու-  
ցելը օրինաւոր կը սեպեն, ըսելով  
որ անմեաս բան է. և իրաւ մէկ  
կողմանէ անմեաս է, վասն զի իրենց-  
մէ զատ ուրիշի չմեասեր. այս տե-  
սակ սուտը սնապարծութեան ան-  
հարազատ որդին ու յիմարութեան  
զաւակն է. այսպիսիները միշտ զար-  
մանալի բաներ կը պատմեն, անանկ  
բաներ տեսած են՝ որ աշխարհիս  
մէջ չգտուիր, կամ գտուի ալ իրենք  
բնաւ տեսած չեն, բայց տեսնելու  
բան ըլլալնուն իրենք տեսած կը սե-  
պեն. տեղ մը կամ ընկերութեան մը  
մէջ զարմանալի բան մը ըսուեր կամ  
եղեր է՝ մէկէն առաջ կը նետուին ու  
կը հաստատեն թէ իրենք այդ բանը

աչքով տեսեր ու ականջով լսեր են.  
ուրիշներու չփորձածը կամ չկրցա-  
ծը՝ իրենք վարպետութեամբ գլուխ  
հաներ են. բան մը որ պատմեն՝ միշտ  
իրենք զիրենք նոյն դիպուածին դիւ-  
ցազն կը սեպեն, և կարծեն թէ ա-  
նով փառք կը ստանան կամ գոնէ  
ուրիշներուն մտիկ ընել կուտան ը-  
սածնին. ուր ընդհակառակն ծաղ-  
րելի ու արհամարհելի կըլլան, հան-  
դերձ ուրիշներու վստահութիւնը  
իրենց վրայէն քիչ մը նուազեցրնե-  
լով. վասն զի դիմացինը բնականա-  
պէս կրնայ հետեցնել որ եթէ պարզ  
սնապարծութեան համարմէ կը մանր  
սուտեր կը զրուցէ, ևս առաւել շա-  
հու համար մեծ սուտեր զրուցելու  
խիղճ չընէր: Թէ որ ես յիրաւի այն  
աստիճան արտաքոյ կարգի բան մը  
տեսած ըլլայի՝ որ ունիշներուն ան-  
հաւատալի երևնար, աւելի կուղէի  
զայն բանը ծածուկ պահել, քան  
թէ զանի ստատմելովս ուրիշի վայր-  
կեան մի ալ կասկած տալ իմ ճշմար-  
տախօսութեանս վրայ:

Միայն ճշմարտութիւնը կրնայ մե-



զի աշխարհքիս մէջ առաջնորդել՝  
մեր խիղճն ու մեր սրտիւր անվնաս  
սրահելու համար. այս բանս չէ թէ  
միայն մեր պարտքն է, այլ նաև մեր  
չահը. ասոր ապացոյց գիտէ կը  
տեսնես որ ամենէն մեծ խենթերն  
ամենէն ստասացներն են: Մէկուն  
ճշմարտասիրութիւնը իրեն խելքէն  
կրնանք չափել ապահով կերպով:

Վսեմութիւն 'ի կերպս.

Ամենէն պատուական բնաւորու-  
թիւն ունեցող մարդն ալ աշխարհ-  
քիս մէջ յարգոյ և յարգելի ընե-  
լու համար՝ կերպի վսեմութիւն մը  
ամենահարկաւոր է: Քեղջուկ կա-  
տակները, աշխարհքիս մէջ, ստէպ  
և բարձրաձայն ծիծաղները, բա-  
նախաղերը, կծու խօսքերը և ան-  
խաիր ընտանութիւնները՝ մարդու  
արդիւնքն ալ, գիտութիւնն արհա-  
մարհելի կրնեն. և կամ գոնէ կա-  
տակախօս կրնեն զմարդ, իսկ արդ  
կատակախօսը ոչ երբէք պատուա-  
ւոր մարդ կրնայ ըլլալ: Անխաիր

ընտանութիւնները կամ մեծերուդ  
անհաճոյ կըլլայ, կամ զքեզ անոնց  
ծառայն և գերին կրնէ. իսկ քեզմէ  
վարիններուն իրաւացի բայց անա-  
խորժ ու անդէպ համարձակութիւն  
մը կուտայ քեզի հաւասար սե-  
սուելու: Վատակող մարդը միմո-  
սին մօտ ազգական է, և աշխոյժ  
մարդու հետ ամենևին համեմատու-  
թիւն չունի: Ով որ չէ թէ իր ար-  
դեանցն ու ազնուական կերպ ու-  
նենալուն համար, այլ ուրիշ բանի  
համար ընկերութեանց մէջ կը կո-  
չուի, ոչ երբէք պատիւ կը գտնէ,  
հասա անօթի մը պէս կը գործա-  
ծուի. այս մարդս կուզենք՝ ալէկ  
երգելուն համար, անիկայ պարի կը  
հրաւիրենք՝ վասն զի լաւ կը պարէ.  
մէկալը ընթրիք կը կանչենք, վասն  
զի կատակ ու խնտալ կը սիրէ, ու-  
րիշ մը կ'ախորժինք ամեն տեսակ  
խաղի մէջ վարպետ ըլլալուն հա-  
մար կամ լաւ անկելուն համար.  
այս ամեն պատիւներս զմարդ կը  
նուաստացրնեն ու կը մահացրնեն,  
ու յարգանաց և սրտկառանաց



կարծիքն անգամ միաքերնէս կը ջնջեն: Ո՛վ որ ընկերութեան մէջ մէկ բանի համար միայն կը կանչուի, այն բանին միայն կուգայ, և ուրիշ բանի մէջ արժէք մը չունենար. և հետևապէս ինչ արժանաւորութիւն ալ ունենայ՝ յարգելի չըլլար:

Վստմութիւնը չէ թէ միայն հպարտութենէ տարբեր բան է, ինչպէս կտրճութիւնը պարծենկոտութենէն ու ճշմարիտ հանճարը կժու լեզուագարութենէ, այլ և անոր բոլորովին հակառակ. վասն զի հպարտութենէ աւելինուաստացուցիչ ու ցած բան չկրնար ըլլալ: Մարդիկ շատ անգամ հպարտին պահանջմունքներուն վրայ աւելի կը ծիծաղին ու կարհամարհեն՝ բան թէ կը բարկանան. ինչպէս որ մենք իր ասրանքը խիստ սուղ ծախել ուզող վաճառականը ծաղրելու համար՝ ամենացած գին մը կուտանք անոնց. և ընդհակառակն արդար ու բանաւոր գին մը ուզողին հետ չենք կուրարիր:

Յաճ շողոքորթութիւնն ու ան-

խրաիր զիջողութիւնն ալ՝ անխաիր հակառակաբանութեան ու տաք կուրասիրութեան պէս զմարդ կը նուաստացընէ. իսկ մեր կարծիքը համեստ կերպով պաշտպանելն, և հաճոյ ըլլալու համար ուրիշի կարծեաց զիջանելն ալ՝ մեր սրատիւր կը պահէ:

Ռամկական ու ցած բացատրութիւններն անշնորհք կերպով մէկուն առջևը ելլելն և կոշտ շարժմունքներն զմարդ կը նուաստացընեն, որովհետև կամ խիստ ցած մտքի, և կամ ցած կրթութեան ու ընկերութեան մէջ յաճախելու նշան են:

Փուճ բաներու հետաքրքրութիւնն ու պզտի նիւթերու ծանր զարմացումը՝ որոնք մարդուս վայրկեան մը մտադրութեանն ալ արժանի չեն, զմարդ կը նուաստացընեն. որովհետև ասկէց արդարապէս կը հետևի՝ թէ անոնք ծանր նիւթերու վրայ խորհելու կարողութիւն չունին. Ռէցի ծիրանաւորը՝ շատ բարակամտութեամբ տկար խելք ունեցողի տեղ գրաւ զԿիճի



Ժիրանաւորն՝ երբ այս վերջինս անգամ մը իրեն ըսաւ թէ իրեք տարի մի և նոյն գրչով գրեր է, և դեռ խիստ աղէկ կը գրուի:

Նայուածքի ու շարժուածքի արտաքին չափաւոր ծանրութիւն մը՝ վսեմութիւն մը կուտայ մարդուս, առանց աշխուժը ու պատշաճ զուարթութիւնը կորսուցնելու. վասն զի այս վերջին յատկութիւններս ալ իրենք իրենցմէ ծանր են. երեսի վրայ երեցած հանապազորդ ժպիտ մը, և մարմնոյ անհանդարտ շարժում մը՝ տկարամտութեան խիստ յայտնի նշաններ են: Ո՛վ որ բան մը ընելու ատեն կարտորայ՝ անով կը ցուցնէ թէ ըրածը իր կարողութենէն շատ վեր է. փոյթն ու արտորանքը մէկմէկէ շատ տարբեր բաներ են:

Վերջապէս ինչպէս որ կից ուտելու համբերող մարդը՝ ինքզինքը կտրիճի տեղ կը դնէ, այսպէս ալ ախտերով ու յանցանքներով ապականած մարդը՝ իր պատիւն կրնայ պահանջել: Բայց արտաքին համես-

տութիւն մը և կերպի վսեմութիւն մը՝ կրնան զանի արհամարհելի ըլլալէն ազատել՝ որ առանց անոնց պէտք էր որ արհամարհելի երևար. ահա այսչափ հարկաւոր բան է ծանրութիւնն ու վսեմութիւնը, թէպէտև արուեստակեալ ու կեղծաւորեալ ըլլայ:

Անոռութիւն 'ի կերպս և  
Հասարակութիւն յասոց.

Մտաց հաստատութեան հետ միացած կերպի ազնուութենէն աւելի՝ կենաց ամեն պարագայներուն մէջ անխախտ օգտակար և հարկաւոր ուրիշ կանոն մը չեմ գիտեր. միայն եթէ առջինը երկրորդով չբարեխառնի՝ վայրագութիւն ու կատաղութիւն կը դառնայ. իսկ երկրորդը թէ որ իրեն օգնական ու զօրացուցիչ չունենայ զառջինը՝ ցածութեան կը փոխուի ու վախկոտ հաճոյականութիւն մը կը դառնայ. իսկ երկուքը մէկտեղ միացած քիչ անգամ կը գտնուին: Արակոտ ու



ցասկոտ մարդը՝ որ ամբանական  
 ոգևով լեցուած է՝ ազնուութիւնը  
 կարհամարհէ և կարծէ թէ մտաց  
 հաստատութեամբ միայն ամեն բան  
 կրնայ առաջ տանիլ. և յիրաւի  
 կրնայ ըլլալ որ դիպուածով այս  
 այն բանին մէջ յաջողի՝ երբոր տը-  
 կար ու վախկոտ մարդկանց հետ է  
 իր բանը գործը. բայց սովորաբար  
 իր ճակատագիրն է ուրիշներուն  
 անհաճոյ ըլլալ, զայրացընել, ատելի  
 ըլլալ և չյաջողիլ: Ընդհակառակն  
 վարպետորդի ու խարդախ մարդը  
 կարծէ թէ կերպի ազնուութեամբ  
 միայն իր ամեն ուղածին կը հասնի,  
 անոր համար ընդ ամենեցուն ամենայն  
 իշխան. կերևայ թէ ինքն իրեն յա-  
 սուկ կարծիք մը չունի, և ծառայա-  
 պէս առջևն ելած մարդուն կար-  
 ծեացը կը հետևի. այս կերպով խեն-  
 թերութեան համարմունքը կը ստա-  
 նայ, բայց շուտով ամենէն կ'անար-  
 գուի ու ստուգապէս ատելի կըլլայ՝  
 իսկ իմաստուն մարդն միայն (որ հա-  
 լասարապէս հետի է խաբեբայ ու  
 ցասկոտ մարդէ) կակուղ կերպը

մտաց հաստատութեան հետ կը  
 միացընէ:

Այս երկու կատարելութիւններ  
 ըստ միութենէն առաջ եկած օ-  
 գուտներն հաւասարապէս յայտնի  
 և զգալի են. օրինակի համար թէ որ  
 գու հրամայելու իշխանութիւն ու-  
 նիս՝ թէ որ քու հրամաններդ քաղց-  
 րութեամբ ու ազնուութեամբ տաս՝  
 կամակար ու յօժար կերպով ըն-  
 դունելի կըլլան և հետևապէս լաւ  
 հնազանդութիւն կը գտնես. ուր  
 ընդ հակառակն թէ որ յօխորտա-  
 նօք հրամայես՝ ըսածդ աւելի կը  
 մեկնուի քան թէ կը կատարուի:  
 Բայց միանգամայն պաղ ու ան-  
 շարժ հաստատութեամբ մը պիտի  
 ցուցընես՝ թէ ուր որ իրաւունք ու-  
 նիս հրամայելու՝ թէ կուզես որ  
 հնազանդին. բայց սակայն այս հնա-  
 զանդութիւնն պահանջելու ատենդ  
 ալ անանկ ազնիւ կերպ մը պիտի  
 ցուցընես, որ որչափ կարելի է ա-  
 խորժելի ընէ ու կակղացընէ հնա-  
 զանդողին իւր նուաստութեան գի-  
 տակցութիւնը:



Թէ որ շնորհք մըն է ուզածդ, կամ նաև քեզի ընկածը պահանջելու ասենդ՝ շնորհալի կերպ մը բանեցուր, ապա թէ ոչ որոնք որ չեն ուզեր ըսածդ կատարել՝ քու կերպդ պատճառ կը բռնեն չընելուն, իբրև թէ անով նախատուած ըլլան. բայց ուրիշ կողմանէ ալ անշարժ հաստատութեամբ մը ու պատշաճ զօրութեամբ մը քու անսասանութիւնդ ցցուր: Մարդկանց գործքերը քիչ անգամ ճշմարիտ պատճառներէ առաջ կուգան, մանաւանդ անոնց որ բարձր աստիճանի մէջ են. ասոնք շատ անգամ ինչ որ արդարութեան ու արժանեաց համար չեն տար՝ թախանձանաց ու վախի համար կը շնորհեն: Թէ որ կրնաս ազնուութեամբ ու կակղութեամբ անոնց սիրտը շահէ, որպէս զի գոնէ զայրանալու պատճառանք չունենան. բայց նայէ որ բաւական հաստատութիւն ու անխոնջութիւն ցուցնես իրենց հանգստասիրութենէն կամ վախկոտութենէն ընդունելու այն բանն՝

որն որ իրենց արդարութենէն ու բարեբարոյութենէն սպասելը զուր է: Բարձրաստիճան մարդիկ ուրիշներուն կարօտութիւնն ու թշուառութիւնը չեն հասկընար, ինչպէս վիրաբուժներն անոնց մարմնոյն ցաւերը. որովհետև ամեն օր տեսածնին ու լսածնին այն է, և շատ ալ ձեռքեալ թշուառութիւններ տեսնելնուն՝ ալ ճշմարիտը սուտէն չեն կրնար որոշել: Ապա անոնց հետ արդարութենէ ու մարդասիրութենէ զատ ուրիշ զգածմունքներ բանեցընելու է. և շնորհալի կերպով իրենց ձեռնտուութիւնն որ սալու է, իրենց հանգստասիրութիւնն թախանձանօք նեղացընելու է, և պատշաճ սպառնալիքով մը անհաշտ ու պաղ ցասմամբ իրենց վախը գրգելու է: Աշխարհքիս մէջ աս խրատէս զատ ուրիշ ճամբայ չեմ գտներ առանց արհամարհանաց սիրելի ըլլալու և առանց ատելութեան երկիւղալի ըլլալու: Այս է արժանապատուութիւն մարդոյ ըսուածը՝ որն որ ամեն իմաստուն ու



խելացի մարդ պիտի ջանայ ստանալու :

Վերջասպէս երբ կը տեսներ որ շուտով այլայլող բնութիւն ունիս, որ աւանց մտադրութեան անխոհեմ ու ծանր խօսքեր բերնէդ կը փախցընես թէ մեծերուդ, թէ հաւասարներուդ և թէ ստորնադոյններու հետ, արթուն կեցիր ու զսպէ ինքզինքդ, և քաղաքավարութիւնն ու շնորհալի կերպն ձեռքէ մի թողուր. քանի որ զայրացած ես լուռ կեցիր՝ ինչուան որ հանդարտիս. նմանասպէս արտաքին կերպդ անանկ ձեռացուր՝ որ ներքին կիրքդ դրսանց չերևայ. որն որ շատ հարկաւոր բան է բանի գործի մէջ. ուրիշ կողմանէ խելքի ու խոհեմութեան պահանջած բաներուն մէջ ալ նայէ որ կէտ մըն ալ չջարժիս ուրիշներուն հաճոյ ու անուշ կերպին համար, կամ թէ դու անոնց հաճոյ ըլլալու տկար փափաքով, կամ անոնց բանեցուցած վարպետութեան, փափայանքին ու շողորթութեան պատճառաւ. հա-

պա նորէն առջի ուղածդ կրկնէ ու շարունակէ, և տեսնես որ ամեն կարելի բան այս կերպով կրնաս ձեռք ձգել: Անիրաւ և անզգայ մարդիկ միշտ կարհամարհեն ու կը խաբխրբեն վախկոտ ու ամեն բանի զիջանող մարդիկը, բայց երբ հաստատութիւն ցուցընես՝ միշտ կը պատուեն և ուղածդ սովորաբար կը յաջողի:

Քու բարեկամութեանցդ ու կապակցութեանցդ մէջ, ինչպէս նաև քու թշնամութեանցդ մէջ՝ այս կանոնն մասնաւոր կերպով օգտակար է. նայէ որ քու հաստատութեամբդ ու զօրութեամբդ ուրիշի սիրտը քեզի քաշես ու պահես, բայց մի և նոյն ատեն ջանա՛ քու կերպովդ այնպէս ընել որ քու բարեկամացդ և քեզի վերաբերեալ անձանց թշնամիներն քեզի հետ ալ չթշնամանան. նայէ որ քու ազնիւ կերպովդ թշնամիներդ զինաթափ ընես, բայց մի և նոյն ատեն իմացուր անոնց քու արդար ցասմանդ տևողութիւնը. վասն զի մեծ տարբերութիւն կայ



ոխակալու թեան և հաստատ կերպով անձին պաշտպանութեանը մէջ, առջինը միշտ մեծանձնութեան պակասութենէն առաջ կուգայ, իսկ երկրորդն արդարացի խոհեմութենէ:

Մարդիկ կան որ իրենք զիրենք չեն կրնար բռնել ու հաճոյ և քաղաքավար երևնալ իրենց նախանձորդներուն, զուգընթացներուն ու հակառակորդներուն, զորոնք պիտի սիրէին ու մեծարէին թէ որ այս պարագայներս չըլլային. ընկերութեան մէջ անոնց հետ մէկտեղ գրանուած ժամանակնին ահաճութիւն ու կոսպտութիւն մը կը ցուցնեն, և ամեն մանր մունր բանի մէջ կը նային որ զանոնք մէջ քաշեն ու ծիծաղին, և այսպէս անցաւոր և դիպուածական ընդհամակացներն՝ իրենց անձնական թշնամի կրնեն:

Այս բանս շատ մնասակար տկարութիւն մի է, ինչպէս որ և իցէ գործոյ մէջ դիւրագրգռութիւնը գէշ բան է, որոնց մէջ մարդ աւելի կը յաջողի պարզ լաւ քաղաքակա-

նութեամբ և ուղիղ տրամաբանութեամբ: Այսպիսի դիպուածներու մէջ կուզէի կարգէ դուրս քաղաքավար, հաճոյական և համարձակ երևնալ այն մարդուն՝ որուն որ մտքի դրածին հակառակ գործեցի. այս բանս սովորաբար վեհանձնութիւն մեծանձնութիւն կը կոչուի, բայց ստուգապէս ուղղագատութիւն և քաղաքականութիւն է: Մարդուս կերպը շատ անգամ գործին պէս՝ մանաւանդ թէ անկէ աւելի հարկաւոր է. հաճոյք մը կըրնայ մէկը թշնամի ընել, և անիրաւութիւն մը բարեկամ, ըստ այլևայլ կերպին որով որ այն հաճոյքն ու անիրաւութիւնը կրնես: Վերջապէս կերպի ազնուութիւնը և մտաց հաստատութիւնը համառօտ բայց կատարեալ ստորագրութիւն է մարդկային կատարելութեան կրօնական և բարոյական պարտքերու մէջ:



## Բարոյական .

Մարդուս բարոյականը չէ թէ միայն անարատ պիտի ըլլայ, այլ նաև ազատ ՚ի կասկածանաց ինչպէս Աեսարու կնկանը . վասն զի պղտի կէտ մը կամ բիծ մի ալ մեծ փնաս կը հասցընէ . և բան մը չկայ որ զմարդ այնպէս վատացընէ ու անարգընէ, որովհետև անով ատելի միանգամայն արհամարհելի կըլլայ : Բայց սակայն աշխարհքիս մէջ կը գտուին այնպիսի անշնորհք ու ապականեալ մարդիկ որ բարոյական բարւոյ և չարի զանազանութիւնը ջնջել կուզեն, և կը ջանան հաստատել թէ ատունք տեղական կարծիքներ են, և բոլորովին տեղեաց ու սովորութեանց զանազանութենէն կը կախուին . մանաւանդ ասոնցմէ ալ աւելի անշնորհքներ կան, որ առանց իրենք հաւտալու՝ այսպիսի արտառոց և ամբարիշտ սկզբունքներ քարոզել ու տարածել կը ձեացընեն : Արդ որչափ որ կրնաս փախիր այսպիսեաց ըն-

կերութենէն, որովհետև որոնց հետ որ կը տեսնուին՝ անոնց անուանակոտորութեանն ու վատահամբաւութեանը պատճառ կըլլան : Բայց որովհետև դիպուածով կրնաս այսպիսեաց մէջ իյնալ՝ այն ատեն զգուշացիր որ չըլլայ թէ հաճոյական ու ախորժելու կերպով մը և տաք ու զուարթ ուրախութեամբ մը այնպէս ցուցընես թէ ըսածներնոն կը զիջանիս, ևս առաւել եթէ կը հաստատես ու կը հաւնիս այնպիսի ամբարիշտ վարդապետութեանց . միևս կողմանէ ալ մի կագեր ու ծանր պատճառներով վիճաբանիր այնպիսինիւթի մի վրայ որ չարժեր, հասրաբաւական սեսէ ըսել թէ դիտես որ համոզմամբ չէ ըսածնին, թէ դու անոնց վրայ աւելի լաւ համարմունք ունիս քան թէ ինչ որ իրենք կը ցուցընեն, և թէ տալահով ես որ իրենք ալ չեն ուզեր՝ իրենց քարոզած վարդապետութեանն հետևիլ : Բայց նշանէ այդ մարդիկն և անկէջ ետև միշտ հեռու փախիր անոնցմէ :  
Մարդուս բարոյականէն աւելի



փափուկ բան չկրնար ըլլալ, և զանիկայ անարատ պահելէն աւելի շահաւոր բան չկայ. երբոր մէյմը անիրաւութեան, չարութեան, նենգութեան ու ստութեան կասկած տայ՝ ոչ ոք զինքը կը յարգէ, կը մեծարէ կամ կը բարեկամայ՝ թէ և ամենայն կերպով արդիւնաւոր ու աշխարհք ճանչցող մարդ ըլլայ: Անոր համար կապասարեմ քեզի ամենայն խղճահարութեամբ քու բարոյականիդ վրայ զգուշանաս, և ամենայն հոգ տանիս ամեն մանր խօսքէ ու գործքէ որ զանիկայ թեթեւ կերպով մըն ալ կրնայ փրասել: Ամեն դիպուածի մէջ զքեզ առաքինութեան բարեկամ երեցուր, չէ թէ սուտ պարծենկոտ: Նոյն իսկ Չարթրըս գնդապետը՝ (որ աշխարհքիս մէջ ամենէն համբաւեալ վատանուն սրիկայն էր, և որն որ ամեն տեսակ ոճրագործութեամբ անբաւ հարստութիւն գիղեր էր) աւրած բարոյականին փրասակարութիւնն իմանալով՝ անգամ մը ըսեր է « թէ և առաքինութիւնը ինձի

համար գանկ մի ալ չաժէր, բայց լաւ մարդ ճանչցուելու համար տասը հազար լիրայ չէի խնայեր, որովհետեւ անով կրնայի հարիւր հազար վաստակիլ »: Ուրեմն ինչպէս կարելի է որ պատուաւոր մարդ մը անհոգ ըլլայ այն բանին՝ որն որ խելացի սրիկայ մը այնչափ սուղի կուզէր գնել:

Վերը յիշուած ախտերուն մէջ մէկ մը կայ որուն մէջ կրնան երբեմն իյնալ բարեկիրթ ու նաև լաւ սկզբունք ունեցող մարդիկ, վարպետութեան, ճարտիկութեան ու անձին պաշտպանութեան սկզբանցը լաւ ծանօթութիւն չունենալնուն համար. և այս ախտս է ստախօսութիւնը, որն որ ուրիշ ախտերէն աւելի փրասակար ու անարգական բան է: Բայց այս նիւթիս վրայ յօք իմ զգացմունքս համարձակապէս վերը ըսի. ուստի այս գլուխս ալ կնքելու համար կաղաչեմ որ խղճմտութեամբ նախանձաւոր ըլլաս քու բարոյականիդ անարատութեանը, և զանիկայ անբիծ ու ան



վթար պահեստ ու կանկածի և չարա-  
խօսութեան տեղիք չտաս: Երբ տը-  
կար կողմ չկայ՝ վատահամբաւութիւնն  
ու զրպարտութիւնը չեն  
կրնար յարձակիլ: Վասն զի անոնք՝  
եղածը կը մեծցընեն, բայց չեղածը  
չեն կրնար հնարել:

Ընդհանուր լծիւնէր,  
պատգամներ.

Չըլլա՛ թէ գործածես, հաւտաս  
կամ հաստատես սովորական կամ  
ընդհանուր դատակնիքներն կամ  
պատգամներն՝ որոնք որ դատար-  
կադլուխ ու խելք ծախող մարդ-  
կանց սովորական խօսակցութեանը  
նիւթ են. որոնք որ ճշմարտիւ հան-  
ճար ունեցող մարդիկ են՝ այսպիսի  
խօսքերն կարհամարհեն, և հանճար  
թափողներու այսպիսինիւթոց վրայ  
զուրցածներուն համար խնտալը՝ ա-  
նարժան բան կը սեպեն:

Ասոնց սիրած սովորականնիւթե-  
րէն մէկը կրօնքն է. իրենց խօսքին  
նայելով՝ կրօնք ըսածդ ամեն կրօն-

քի քահանայից իրենց օգտին ու շա-  
հուն համար հնարած առասպել  
մըն է. այս սուտ և արտառոց սկըզ-  
բունքէն առաջ կուգան կղերեկա-  
նաց վրայ ըսուած անհամ կատա-  
կաբանութիւններն ու նախատիւք-  
ներն. ըստ իրենց կարծեաց ամեն  
կրօնից քահանաներն յայտնի կամ  
ծածկապէս անհաւատ են, կամ  
գինով մարդիկ են և այլն. ուր էս  
կարծեմ թէ քահանայք ալ ամենեւին  
ուրիշներու պէս մարդիկ են, և  
պճղնաւոր կամ փիլոն հազնեւնուն  
համար աւելի լաւ կամ գէշ չեն  
կրնար ըլլալ. և թէ որ ուրիշներէն  
տարբերութիւն մի ալ ունին, ա-  
ւելի կրօնասիրութեան ու բարոյա-  
կանութեան առաւելութեամբ կամ  
գոնէ պարկեշտութեամբ կը տար-  
բերին, որ իրենց կրթութենէն ու  
վարմունքի կերպէն առաջ կուգայ:

Թեք ծախողներու սովորական  
նիւթերէն ու պաղտորդ ծաղրաբա-  
նութիւններէն մէկն ալ ամուսնա-  
կան վիճակն է. ասոնք կը համարին  
թէ այր և կին զերար սրտանց կա-



տեն. Թէ և դրսուանց բոլորովին  
հակառակը կը ցուցընեն. էրիկն ան-  
շուշտ կուզէ որ իր կնիկն կրողն տա-  
նի. կնիկն ալ անտարակոյս իր էր-  
կանը ամենայն չարիք կը փափաքի:  
Ուր ես կարծեմ թէ արք և կանայք  
մէկզմէկ աւելի չեն սիրեր կամ ա-  
տեր իրենց վրայ պսակի խորհուրդը  
կատարուելուն համար. իրաւ է որ  
բնակակցութիւնը որ ամուսնու-  
թեան հետեանք է, աւելի պատ-  
ճառ կըլլայ զիրար սիրելու կամ ա-  
տելու, ըստ որում հակադարձա-  
բար արժանի են, բայց նոյն բանը  
ամենեւին կրնայ պտտահիլ էրկան և  
կնկան մը մէջ որ առանց ամուսնա-  
լու մէկմէկու հետ կը բնակակցին:

Նմանապէս ծթաած ու հնցած  
կարծիք մի է թէ արքունիք թագա-  
ւորաց ստուծեան ու խաբէութեան  
բնակարան են. այս ալ ինչպէս շատ  
պատգամներն, և կրնամ ըսել բո-  
լորն ալ, սուտ է. իրաւ է որ ստու-  
ծիւնն ու խաբէբայութիւնը ար-  
քունեաց մէջ ալ կը գտուի, բայց  
տեղ կայ որ չգտնուի. աղքատաց

հիւղերուն մէջ ալ, թագաւորաց  
արքունեաց մէջ ալ, միայն թէ առ-  
ջիններուն մէջ աւելի ցած կերպով:  
Երկու դրացի վարձուոր գեղացի-  
ներ ամենայն վարպետութիւն կը  
բանեցընեն մէկզմէկ խաբերու մեր-  
ձաւոր տօնավաճառին մէջ, կամ  
մէկզմէկ իրենց տիրոջը աչքէն հա-  
նելու, ինչպէս որ երկու պալատա-  
կանք կը ջանան զիրար իշխանին  
շնորհքէն զրհելու: Բանաստեղծ-  
ներն ինչ որ կուզեն գրեն, և խեն-  
թերն ալ ինչ որ կուզեն հաւտան-  
գիւղական անմեղութեան ու պար-  
զութեան ու արքունեաց նենգու-  
թեան մէջ այս բանս է անտարա-  
դուսելի ճշմարտութիւն որ հովիւք  
և պալատականք ամենքն ալ մար-  
կիկ են, իրենց բնութիւնն ու կիր-  
քերն նոյն են, և իրենց կերպն միայն  
մէկմէկէ տարբեր է:

Ս,յս և ասոնց նման ուրիշ շատ  
ընդհանուր դատակնիք ազգաց կամ  
արուեստից վրայօք (որոնք որ գոնէ  
այնչափ անպամ սուր են՝ որչափ ան-  
գամ ճշմարիտ) հանձար ու իրենք



իրենցմէ գիւտ չունեցող մարդկանց սովորական նիւթերն են, որոնք կուզեն ուրիշներէն փոխ առած նըրբաբանու թեամբ ընկերութեան մէջ փայլիլ: Ես այսպիսի լիբբ խելառներն շփոթելու համար՝ երբ իրենք կարծեն թէ իրենց խելկատակութեանց վրայ պիտի խնտամ, ծանր կերպով երեսնին կը նայիմ ու կ'ըսեմ է՛, քէնէն, էքքէ: Իբրև թէ խօսքերնին լմընցուցած չըլլային, և խնտալու կտորն գեւ ետքէն պիտի գայ: Ասանկով կը շփոթին ու կը պապանծին, որովհետև իրենք իրենցմէ գիւտ չունին, և իրենց խելկատակութիւնն ալ մէկ խօսքով կը լմնայ: Իսկ արդիւնաւոր մարդիկ այսպիսի նիւթոց կարօտ չեն, մանաւանդ թէ սաստիկ կարհամարհեն. այլ բաւական իրենք իրենց նիւթ կը դանեն օգտակար ու զուարթ խօսակցութեան. կրնան հանձար ցուցընել առանց երգիծաբան ու խելկատակ ըլլալու, և ծանր առանց ասուշ ու թմրած երենալու:

Ճարտարխօսութիւն.

Ճարտարխօսութիւնը կամ լաւ խօսելու արուեստը կենաց ամեն պարագայներուն մէջ օգտակար է, իսկ շատերուն մէջ ալ յոյժ հարկաւոր. առանց ասոր մարդ մը երևելի չըլլար ոչ ժողովարանի մէջ, ոչ ՚ի բեմի և ոչ յատենի. նա և նոյն իսկ սովորական զրուցատրութեան մէջ՝ ո՛վ որ համարձակ և ընտանեկան ճարտարխօսութեան մը վարժած է, և յատուկ և ուշադիր կերպով կը խօսի, շատ կը գերազանցէ, զանոնք որոնք ոք անզարդ ու սխալ կերպով կը խօսին: Ճարտարխօսութեան վախճանը համոզելն է. իսկ համոզելու ալ ամենէն ապահով ճամբայն հաճոյ ըլլալն է: Հասարակաց ժողովարանի մէջ խօսող մարդուն շատ օգտակար է իր ունկնդիրները զուարճացընելը, որպէս զի անոնց մտադրութիւնը իրեն քաշէ, որն որ առանց ճար-



տարխօսու թեան օգնու թեանը չկըր-  
նար ըլլալ:

Ստոյգ է որ ջանքով ու վարժու-  
թեամբ ամեն մարդ կրնայ չափա-  
ւոր ճարտարախօս մը ըլլալ. որով  
հետև ճարտասանութիւնը դիտո-  
ղութենէ ու ջանքէ առաջ կուգայ.  
ով որ կուզէ կրնայ անպէտ բառե-  
րու և ոճերու տեղ ընտիրներն գործ-  
ածել, անյատուկ կերպերու տեղ  
յատկապէս ու վայելչապէս խօ-  
սիլ, մութ ու անիմանալի ըլլալու  
տեղ, պարզ ու յայտնի պատմա-  
բանել, իրեն ձևերուն ու շար-  
ժուածքին մէջ աշնորհք ու կոպիտ  
երևնալու տեղ՝ շնորհալի երևալ.  
վերջապէս ամեն մարդու իր ձեռքն  
է աշխատանքով ու հանապազոր-  
դութեամբ շատ հաճոյական ատե-  
նախօս մը ըլլալ՝ փոխանակ անհաճոյ  
ըլլալու. և շիտակը ամենայն աշխա-  
տանք կարժէ որ մարդ ջանայ ու-  
րիշներէն անով պւելի գերազանցե-  
լու՝ որով որ մարդիկ քան զանբանս  
կը գերազանցեն:

Դիմոսութենէս լաւ խօսիլը այնչափ

էական ու հարկաւոր բան սեպեց՝  
որ թէպէտ բնականապէս թլուատ  
էր և տկար կուրծք ունէր, բայց  
սակայն միտքը դրաւ վարժութեամբ  
աս թերութեանցս յաղթելու. բե-  
րանը մանր խիճեր դնելով թլուա-  
տութիւնը շտկեց. և ամեն օր եր-  
կայն ատեն բարձր ու որոշ ձայնով  
խօսելով՝ կամաց կամաց իր թոքը  
զօրացուց. մրրկի ատեն շատ ան-  
գամ ծովեզերքը կերթար, և որ-  
չափ կրնար բարձրաձայն կը խօսէր,  
որպէս զի ինքզինքը վարժեցրնէ ա-  
թենացւոց հասարակաց ժողովքնե-  
րուն աղաղակին ու շնկոցին, որոնց  
առջևն որ պիտի խօսէր: Ասանկ  
կարգէ դուրս ջանքով և մտադրու-  
թեամբ, և լաւ մտտենագրաց ան-  
խոնջ ուսմամբը՝ իրեն դարուն՝ մա-  
նաւանդ թէ ամեն դարուց և ազ-  
գաց ամենէն մեծ ճարտասանն ե-  
լաւ:

Մարդ ինչ լեզու ալ խօսելու ըլ-  
լայ՝ պէտք է որ ամենայն յատկու-  
թեամբ և ըստ քերականական կա-  
նոնաց խօսի. լեզու մը գէշ չխօսիլը



բաւական չէ, այլ պէտք է ջանանք  
լաւ ալ խօսելու. այս բանիս հա-  
մար պէտք է երևելի մատենագիր-  
ներն մտադրուածեամբ կարգալ, և  
բարեզարդ ու բարեկիրթ մարդ-  
կանց խօսակցութեանն ուշ գնել:  
Հասարակ ժողովուրդը սովորաբար  
դէշ կը խօսի, և անզարդ ու սամկա-  
կան ոճեր կը բանեցընէ որ ազնուա-  
կանները բնաւ չեն գործածեր. շատ  
անգամ եզակին յոգնակիի հետ կը  
խառնէ, և արականն իգական սեռի  
հետ կը շփոթէ, և քիչ անգամ բա-  
ռերուն ժամանակը ըստ տեղւոյն կը  
գործածէ: Այս ամեն սխալներէս  
զգուշանալու համար պէտք է մտա-  
դրութեամբ կարգալ և ընտիր մա-  
տենագրաց ոճը ու կերպը դիտել.  
և ինչ բառ որ լաւ մը չենք հասկը-  
նար՝ առանց իմաստը լաւ քննելու  
և հարցընելու չթողուլ ջանցնիլ:

Արսուի թէ մարդ պէտք է բա-  
նաստեղծ ծնանի, բայց ճարտասան  
ըլլալը իր ձեռքն է. վասն զի բանաս-  
տեղծ ըլլալու համար մտքի աստի-  
ճան մը զօրութիւն և աշխուժու-

թիւն հարկաւոր է. իսկ ճարտասան  
ըլլալու համար մտադրութիւնը,  
ընթերցումը և ջանքը բաւական է<sup>1</sup>:

### Իմաստակութիւն.

Ամեն կատարելութիւն և ամեն  
առաքինութիւն իրեն հակառակ  
ախտն ու թերութիւնը ունի, և ո՛վ  
որ չափ ու սահման չգիտեր՝ մէկուն  
կամ մէկալին մէջ կիյնայ. առատա-  
ձեռնութիւնը շատ անգամ շուայլու-  
թեան կը տանի, չափաւորութիւնը՝  
ագահութեան, սրտոտութիւնը՝  
յանդգնութեան, զգուշաւորութիւնը՝  
վախկոտութեան, և այսպէս ուրիշ-  
ներն. անանկ որ ես կարծեմ թէ  
այլ աւելի խոհեմութիւն պէտք է  
մեր առաքինութիւններն չափաւո-  
րելու համար, քան թէ հակա-

<sup>1</sup> Մենք կը համարձակինք ըսելու՝ որ  
թէ բանաստեղծ և թէ ճարտասան ըլլա-  
լու համար առհասարակ հարկաւոր է ի  
բնէ այն կիրքերն ունենալը, և ուսմամբ և  
ջանքով զանոնք մշակելը:



ևակ ախտէն զգուշանալու համար :  
 Ախտից ճիշդ կերպարանքը այնպէս  
 տգեղ է՝ որ առջի տեսութեան ըզ-  
 մարդ կը խորշեցընէ . և շատ դժուա-  
 րաւ մեր սիրտը իրեն կը քաշէ թէ  
 որ առջի բերան առաքինութեան մը  
 դիմակով ինքզինքը չստարակէ : Իսկ  
 առաքինութիւնն ինքիրեն այնպէս  
 գեղեցիկ է , որ առջի բերան մէկէն  
 զմեզ իրեն կը քաշէ , և որչափ ա-  
 ւելի հետը ծանօթանանք՝ այնչափ  
 աւելի զինքը կը սիրենք . բայց որով  
 հետև այս բանիս՝ ինչպէս նաև ու-  
 թիշ գեղեցկութեան մէջ , մտքերնէս  
 չանցնիր թէ կրնանք սիրոյ չափն  
 անցընել , անոր համար խոհեմու-  
 թիւնն հարկաւոր է , որ այս գերա-  
 զանց պատճառէս առաջ եկած ար-  
 դիւնքն ուղղէ և չափաւորէ : Եւ  
 ահա նոյն կերպով մեծ գիտութիւն  
 ալ՝ երբոր ողջամիտ դատմունքի հետ  
 միացած չէ՝ շատ անգամ զմեզ ՚ի մո-  
 լորութիւն , ՚ի հպարտութիւն և յի-  
 մաստակութիւն կը տանի :

Գիտուն մարդիկ կան՝ որ իրենց  
 իմաստութեամբը ուռած՝ բերան-

նին ուրիշ բանի համար չեն բանար՝  
 բայց եթէ վճիռ ու անդարձ պատ-  
 գամ որոտալու . ասոր հետևանքն  
 այն է որ առջի մարդիկը իրենց ե-  
 ղած նախաախնքէն գրգռուելով և  
 անիրաւութենէն ճնշուելով՝ կապրս-  
 տամբին , և բռնաւորին լուծը թօ-  
 թուելու համար՝ անոր օրինաւոր  
 իշխանութեան վրայ ալ տարակոյս  
 կը հանեն : Արչափ աւելի բան գիտ-  
 նաս՝ այնչափ աւելի խոնարհամիտ  
 պէտք է ըլլաս , քու ունայնասիրու-  
 թիւնդ յագեցընելու ապահով ճամ-  
 բայն ալ այս խոնարհամտութիւնն  
 է : Նաև բան մը ստոյգ ալ գիտ-  
 նաս՝ տարակուսիլ ցցուր . գիտ-  
 ցածդ զուրցէ՝ բայց մի՛ վճռեր . և  
 թէ որ կուզես ուրիշներն համոզել՝  
 դու ինքզինքդ համոզուելու պատ-  
 րաստ ցցուր :

Մարդիկ իրենց գիտութիւնն ցը-  
 ցունելու համար , կամ շատ անգամ  
 դպրոցական կրթութեան նախա-  
 պաշարմամբ մը , երբ կը տեսնեն որ  
 ընկերութեան մէջ ուրիշ խօսող  
 չկայ՝ կը սկսին հիներու վրայ խօսիլ .



անանկ կերպով մը իբրև թէ անոնք մարդկանցմէ վեր բաներ էին, իսկ հիմակուաններն՝ իբրև թէ քան ըզմարդիկ ցած բաներ ըլլային. ուր ալ ըլլան քանի մը ընտիր մատենագիրք գրականնին կը քաղցրեն. հիներուն ուղղագատու թեանը վրայ կը զմայլին. հիմակուան անժուր մատենագիրներէն համ չեն առներ. և համարձակ կը ցուցրեն քեզի որ հազար եօթը հարիւր տարիէ վեր արուեստք և գիտութիւնք քայլ մի ալ առաջ գացած չեն: Միտքս այն չէ որ դու այնպէս ցուցրնես իբրև թէ հիներու հետ ծանօթութիւն չունիս, բայց չեմ ուզեր որ պարծիս միայն իրենց հետ ծանօթ ըլլալուդ վրայ. հիմակուաններուն վրայ խօսէ առանց անարգելու և հիներուն վրայ առանց զիրենք պաշտելու. զամենքն արգիւնքէն դատէ, և ոչ թէ իրենց դարէն. և թէ որ ընտիր մատենագիր մը ունիս գրքաւանդ՝ մի ցուցրներ զանի և խօսքի մէջ մի բերեր:

Կան մեծ գրագէտներ ալ որ ար-

տառոց կերպով մը իրենց առանին և հասարակ կենաց ամեն կղբուցներն կուզեն հին մատենագրաց զբնեաց Դեպքէն հանել, ինչպէս որ իրենք կը կոչեն. առանց գիտելունախ որ աշխարհքիս ստեղծմանէն ՚ի վեր երկու գիպուած եղած չեն բոլորովին իրարու զուգածայն. և երկրորդ՝ գիպուած մը չկայ որ պատմագիրք ամենայն պարագայներովն գրած կամ իմացած ըլլան. և սակայն զանոնք ամենքը սէտք է ճանչնալ՝ անոնցմէ հետեանք մը հանելու համար: Նոյն գիպուածին և անոր պարագայներուն վրայ խօսէ որչափ որ կուզես, և ըստ այնմ ալ գործէ, բայց ոչ եթէ հին պատմագրաց կամ քերթողաց խօսքին հատալով: Թէ որ կուզես խորհրդածէ նման սեպուած դէպքերուն վրայ, բայց զանոնք քեզի օգնականի տեղ առ՝ ոչ թէ առաջնորդի:

Ուրիշ տեսակ մը ուսեալ մարդիկ ալ կան՝ որ թէպէտ այնչափ պատգամախօս ու բարձրահայեաց չեն, բայց լրբութեան կողմանէ առ-



ջիններէն վար չեն մնար: Այսպիսի-  
ներն են հաղորդական ու վառվառն  
իմաստականներն, որոնք նոյն իսկ կա-  
նանց հետ խօսելու ատեն՝ իրենց խօ-  
սակցութիւնը յոյն և լատին վկա-  
յութիւններով կը զարդարեն, և  
այնչափ ընտանութիւն ունեցած են  
յոյն և հռոմ մատենագրաց հետ՝  
որ անոնց մէջմէկ անուն կամ մակ-  
անուն տուած են ընտանութեան  
նշան. զոր օրինակ այն ծերուկ Հոմե-  
րոսը, այն սափանորդի Ռրատիոսը.  
նմանապէս Վիրգիլիոս ըսելու տեղ  
Մարոն կըսեն, Ովիգիոս ըսելու  
տեղ Նասոն: Շատ արգամ գա-  
տարկազուլի մարդիկ ալ որ կար-  
գալ չեն գիտեր, այս բանիս մէջ  
գրագէտներուն կուզեն հետևիլ.  
և քանի մը մատենագրաց անուն  
բերան սորվելով, և հիներուն քա-  
նի մը ասացուածքը միտք առնելով՝  
յարմար անյարմար ամեն ընկերու-  
թեանց մէջ զանոնք կը կրկնեն, որ-  
պէս զի ուսելոց կարգ անցնին: Ա-  
պա ուրեմն եթէ կուզես մէկ կող-  
մանէ սոցիտութեան կասկած չտալ

ջանա՛ գիտնոց ցուցամոլութենէն  
փախչելու: Ինչ ընկերութեան մէջ  
որ գտուիս՝ անոր յատուկ լեզուով  
խօսէ, նայէ որ լեզուդ մաքուր  
ըլլայ, և ուրիշ լեզուի բառերով  
չմալակոնես. որոնց հետ որ կը վա-  
րուիս անոնցմէ աւելի իմաստուն և  
գիտուն մի ցուցըներ ինքզինքդ:  
Քու գիտութիւնդ ժամացուցիդ  
պէս առանձին քսակի մէջ պահէ.  
և ոչ երբէք դուրս հանէ կամ զար-  
նեւտուր՝ ժամացոյց ունենալդ ցու-  
ցընելու մտքով. թէ որ մէկն հար-  
ցընէ թէ ժամը քանի է, ըսէ. բայց  
երբ հարցընող չկայ՝ մի ատեն ատեն  
ժամերը կանչեր գիշերուան պահա-  
պաններուն պէս:

### Զոտարձու-Ռիան.

Շատ երիտասարդներ այնպիսի  
զուարճութեանց ետեւէ կըլլան՝ ո-  
րոնց իրենք ամենևին յարմունք չու-  
նին, հասպա միայն զուարճութիւն  
ըսուելնուն համար: Ասոնք երբեմն  
այն աստիճան կը խաբուին՝ որ կար-



Ծէն թէ անառակութիւնը զուար-  
 ճութիւն է. եթէ այնպէս է ապա  
 գինովութիւնն ալ որ զմարմինը և  
 զմիտքը առհասարակ կապականէ՝  
 գերազանց զուարճութիւն մի է.  
 նմանապէս խաղը որ հազարումէկ  
 տագնապներու մէջ կը ձգէ զմեզ, և  
 քսակնիս կը դատարկէ, և զմեզ կա-  
 տաղի խենթ կը դարձնէ՝ ան ալ  
 զարմանալի զուարճութիւն մի է:

Զուարճութիւն ըսածդ ժայռ  
 մըն է, որուն վրայ շատ երիտա-  
 սարդք կը նաւակոծին. լեցուն ա-  
 ռագաստներով զանիկայ փնտռելու  
 կելլեն, բայց իրենց ընթացքը ուղ-  
 զելու կողմնացոյց չունին, կամ բա-  
 ւական խելք զնաւն շակելու. անոր  
 համար փոխանակ զուարճութեան  
 ցաւով և ամօթով ետ կը դառնան:

Ռամիկը զուարճութեան մարդ  
 որ կըսէ՝ կը հասկընայ անբանի սէս  
 արբեցող մը, վարած կորած անա-  
 ռակ մը և ամբարիշտ հայհոյիչ մը:  
 Մեր ներկայ զուարճութեանց վա-  
 յելքը պէտք է որ անոնց անհրա-  
 ժեշտ հետեանացը հետ կշռենք, և  
 խելքերնուս ցցուցածն ընարենք:

Արնանք կերուխուսի զուարճու-  
 թիւնն ճաշակել, բայց պէտք է չափ  
 գնենք և զգուշանանք՝ տեսնելով ա-  
 նոնցմէ առաջ եկած նեղութիւն-  
 ներն: Արնանք թողուլ որ ուրիշ  
 ներն ուզածնին ընեն, առանց ծանր  
 կերպով ու պատգամախօսութեան  
 զանոնք աս բանիս համար յանդի-  
 մանելու. բայց մտքերնիս հաստատ  
 դնելով որ մեր կարողութեանցն ու  
 կազմուածքին մնաս չտանք՝ պար-  
 զապէս հաճոյ ըլլալու համար ա-  
 նոնց որոնք որ իրենց անձին համար  
 չեն զգուշանար: Թաղն ալ զուար-  
 ճանալու համար պիտի խաղանք,  
 չէ թէ զմեզ նեղելու համար. խառն  
 ընկերութեան մը մէջ զուարճանա-  
 լու և սովորութեանց յարմարելու  
 համար կրնանք քիչ մը ստակով  
 կամ մանր մուկեր նիւթերու հա-  
 մար ալ խաղալ: Բարեկարգ ընկե-  
 րութեան մէջ անտանելի բան է  
 գողգոջոտ գինով մը տեսնել, կամ  
 ուրիշ մը որ խաղի մէջ վճարել կըր-  
 ցածէն աւելի կորսուցնենելուն հա-  
 մար՝ մաղերը փետտէ ու հայհոյէ:



կամ կէս քթով անառակ մը՝ որ ան-  
յագ ու անբանական շուայտու-  
թեամբ մը խեղացած ըլլայ. անոնք  
որ զայսպիսիս կը գործեն կամ կը  
քարոզեն՝ լաւ ընկերութեանց մաս-  
նակից չեն կրնար ըլլալ, և ակամայ  
կերպով թոյլ կը տրուի իրենց ընկե-  
րութեանց մէջ մտնել: Իսկ ճշմար-  
տիւ բարեզարդ ու զուարճասէր  
մարդը՝ վայելչութիւնը կը նայի, և  
գոնէ ախտի տէր ըլլալը չցուցըներ,  
և թէ որ դժբաղդութեամբ ունի ալ՝  
ընտրութեամբ, մեղմով և ծածկա-  
պէս իր ախտը կը յագեցընէ:

Մեր զուարճութեանց ալ այն-  
չափ ուշագիւր պիտի ըլլանք՝ որչափ  
մեր ուսմանը. այս վերջինիս մէջ  
պիտի գիտենք և խորհինք ինչ որ կը  
կարգանք. իսկ առջինին մէջ ալ ար-  
թուն և մտադիր պիտի ըլլանք՝ ինչ  
որ կը տեսնենք և կը լսենք, որպէս  
զի չըլլա թէ այն յիմարներուն նմա-  
նինք որ իրենց առջևն եղած և ը-  
սուած բանին համար կըսեն թէ  
« Յիրաւի ուշ չգրի, վասն զի ուրիշ  
բան մը կը մտածէի » . ինչո՞ւ ուրիշ

բան կը մտածէին. և թէ մտածելիք  
ունէին՝ ինչո՞ւ ընկերութեան մէջ  
մտան. ուսմկերէն խօսք մը կայ որ  
Ուր ալ ըլլանք՝ մեր աչքն ու ա-  
կանջը հետերնիս պէտք է ունենանք.  
պէտք է ուշ գնենք ամեն բանի ինչ  
որ ուրիշներն կընեն. գիտենք՝ ա-  
ռանց գիտող երևնալու. ապա թէ  
ոչ ուրիշներն կը սկսին իրենք զի-  
րենք մեր գիմացն պարտկել:

Ամեն տեսակ խաղ և գիւղական  
զուարճութիւնք և ուրիշ զբօսանք-  
ներն ուր որ զգայութիւնք կամ  
խելք մասն չունին՝ թեթեւութիւն  
են, և սկար խելքի զուարճութիւն  
են՝ որոնք կամ չեն մտածեր կամ չեն  
ուզեր մտածել. իսկ խելացի մարդ-  
կանց զուարճութիւններն կ'մ զգայու-  
թիւնը կը շոյեն կամ միտքը կը սրեն:

Ինչպէս որ կան ազատական և  
ծառայական արուեստներ, այսպէս  
ալ նաև կան ազատական և ծառա-  
յական զուարճութիւններ. խենթ  
արբեցութիւնը, անխտիր շատակե-  
րութիւնը, կառք քշելը, գիւղական  
զբօսանքներն՝ ինչպէս են գայլ որ-



սալ, ձիրնթաց ընել, և այլն, գեր-  
ձակի և կոչկակարի պէս պատուա-  
ւոր և բանուկ արուեստներու ալ  
անարժան ցած զուարճութիւններ  
են:

Որչափ որ բաներնուս գործեր-  
նուս ուշադիր ըլլանք՝ այնչափ  
զուարճութիւններն համով կուգան  
մեզի. առաւօտը մտքերնիս ուսման  
հետ որ պարասի՝ երիկուան զուար-  
ճութեանց ասորժակնիս կը սրի.  
ինչպէս որ մարմնոյ շարժմունքը՝  
ճաշելու ասորժակնիս կը բանայ:  
Բանուգործը և զուարճութիւնը  
երբ կարգաւոր են՝ մէկմէկու կօգ-  
նեն, փոխանակ մէկմէկու ներհակ  
ըլլալու՝ ինչպէս որ խենթերն կը  
կարծեն: Զուարճութիւններէ լաւ  
համ չենք առներ, ինչուան գոր-  
ծունէութեամբ զանոնք չվաստը-  
կինք. և քիչերը կան որ իրենց բա-  
նուգործը լաւ կատարեն՝ թէ որ ա-  
նոնցմէ զատ ուրիշ բան ընել չեն  
գիտեր: Բայց զուարճութիւն որ  
կըսեմ կիմանամ բանաւոր արարա-  
ծոյ մը պատշաճ բարեզարդ զուար-

ճութիւնը, չէ թէ խողի վայել ան-  
բանական զուարճութիւն:

Նախապաշարմունք.

Կարգացած գրքիդ կամ գտուած  
ընկերութեանդ մէկ կարծիքը մի  
ընդունիր, ինչուան որ չքննես չի-  
մանաս թէ արդեօք ճշմարիտ են թէ  
սուտ. ապա թէ ոչ փոխանակ ու-  
ղիղ միտքն քեզի առաջնորդ ու-  
նենալու՝ նախապաշարմունքներէ  
քարշ դալու կը ստիպուիս, և փո-  
խանակ ճշմարտութիւնը գտնելու՝  
մոլորութիւնը կը սնուցանես:

Միտքդ բանեցուր և անոր ցը-  
ցուցածն հաստատէ, և որպէս զի  
առողջ ու հաստատուն դատողու-  
թիւն ունենաս՝ ամեն բան քննէ և  
լուծէ. չըլլա թէ Նա սասց ոճը քու  
միտքդ խոնարհեցընէ, գործոցդ  
սխալ առաջնորդ ըլլայ և ըսելիքդ  
տունասայ քեզի: Ինչ որ ատենօք պի-  
տի ուզես որ եղած ըլլայիր և հիմա  
չես, նայէ որ հիմակուց ըլլաս, զի  
այն ատենն՝ ալ ուշ է: Առաջուց



խորհուրդ հարցուր քու մտքիդ,  
 չեմ ուզեր ըսել թէ ամեն անգամ  
 անսխալ առաջնորդ մը պիտի ըլլայ  
 քեզի, վասն զի մարդուս բանակա-  
 նու թիւնն ալ անսխալ չէ, բայց գո-  
 նէ քան զամեն առաջնորդ որ կրնաս  
 ունենալ քիչ կը սխալի: Գիրք և  
 ընկերութիւն շատ կօզնեն մտաց.  
 Բայց կուրօրէն ու առանց քննելու  
 բան մը մի ընդունիր, երկուքն ալ  
 լաւ մը փորձէ այն կարողութեամբ  
 զոր Աստուած տուեր է մեզ զմեզ  
 ուղղելու համար որ է Բանն: Ամեն  
 աշխատանքէ աւելի մտածելու աշ-  
 խատութենէն մի փախչիր, ինչպէս  
 որ շատերը կրնեն: Արնանք ըսել թէ  
 մարդկանց շատը մտածել ինչ ըսել  
 է չեն գիտեր, իրենց ծանօթութիւն-  
 ներէն փոխ առած են, և կարծեմ  
 թէ ընդհանրապէս ասանկ ըլլալն ա-  
 ւելի լաւ է, որովհետեւ հասարա-  
 կաց կարգն ու կանոնը պահելու  
 համար աւելի կը ծառայեն ռամ-  
 կին նախապաշարմունքներն՝ քան  
 եթէ ամենքն իրենց առանձին խել-  
 քին հետևէին, որ բոլորովին ան-  
 դարման ու անկիրթ մնացած են:

Տեղական նախապաշարմունք-  
 ներն ռամկին վրայ միայն ազդեցու-  
 թիւն ունին, իսկ մշակեալ, ուսեալ  
 և խոհական մտաց վրայ չեն ազդեր.  
 Բայց կաննաւ սուտ ծանօթութիւն-  
 ներ թէ և ոչ յայտնապէս արտա-  
 ռոց՝ որոնք բարձր ու կրթեալ միտք  
 ունեցող մարդիկն ալ կը պաշտեն՝  
 որպէս զի քննողութեան աշխա-  
 տանքէն և մըտադրութենէն ազա-  
 տին, ճշմարտութիւնը չունենալ  
 նուն համար: Աուզէի որ քու բա-  
 նաւորուէ կարողութեանդ վրայ  
 արթուն ըլլալով և զանի քաջա-  
 պէս գործածելով այս տեսակ նա-  
 խապաշարմունքներէ ալ զգուշա-  
 նայիր:

Արօհ.

Աարծեաց մոլորութիւններն և  
 սխալներն՝ որչափ ալ բարձր ըլլան՝  
 երբոր անկեղծութեամբ են, գթա-  
 լու է վրանին, և ոչ երբէք սլատ-  
 ժելու կամ խնտալու. մտքի կու-  
 րութիւնն ալ մարմնոյ կուրութեան



պէս խղճալու բան է, և երկուքին մէջ ալ իր ճամբան կորսուցընողը ծիծաղելի կամ յանցաւոր կըլլայ: Սէրը կը հրամայէ մեզի պատճառաբանութեամբ և համոզուելով զանոնք ուղիղ ճամբայն դարձընելու. բայց մի և նոյն ատեն գթութիւնն կարգելու զմեզ զիրենք պատժելու կամ իրենց թշուառութեանը վրայ խնտալու:

Ժամանակի գործածութիւն.

Ո՛րչափ քիչ կը մտածենք ժամանակի գործածութեան և արժէիցը վրայ. ամեն մարդ ատոր վրայ կը խօսի, բայց քիչերը կը գործադրեն. ամեն յիմար որ իր ժամանակը ոչ ինչ բաներու կը ծախէ, շատ անգամ ծթաած պատգամներ կորոտայ ժամանակին յարգըն և արագութիւնը ցուցընելու համար: Աս բանիս վրայօք բոլոր Ներսիայի արեգակնային ժամացոյցներն մէյմէկ հանճարաւոր գրութիւններ ունին. անանկ որ ոչ ոք

իր ժամանակը կը փճացընէ՝ առանց շատ անգամ լսելու և տեսնելու թէ ինչպէս հարկաւոր է լաւ կերպով զանի գործածելը, և ինչպէս անդարման է իրեն կորուստը: Պատանիք սովորաբար կը կարծեն թէ իրենք շատ ժամանակ ունենալնուն՝ ուզածնուն պէս կրնան վատնել, մնացածն իրենց բաւական սեպելով ինչպէս որ մեծամեծ հարստութիւններ շատ անգամ զմարդիկ կը խաբեն, և անչափ շոտլու թիւններով կը կործանեն: Բայց այս ամեն խրատներս անօգուտ են՝ անոր որ ուղիղ խոհականութիւն չունի ինքզինքը խրատելու քան թէ ուրիշներէն լսելու:

Ժամանակն յարգի բան է, և կեանքն կարճ. անոր համար վայրկեան մի ալ կորսուցընելու չէ: Զգայուն մարդիկ գիտեն թէ ինչպէս օգուտ քաշելու է ժամանակէն, և թէ կարելի ըլլայ ամենգնով և ամեն հաճոյքով զանիկայ կը գընեն. ոչ երբէք պարաս կը կենան, այլ կամ կաշխատին կամ կը զուար-



Ճանախն: Ընդհանուր առած է թէ  
Ծուլութիւնն մայր է ամենայն ասի-  
ախց. և սակայն ստոյգ է թէ ծու-  
լութիւնն խենթերու ժառանգու-  
թիւն է, և ծոյլ մարդէն աւելի ար-  
համարհելի բան չկայ: Կատոն դա-  
տարան իմաստուն և առաքինի  
Հաովմայեցին սովոր էր ըսել թէ կե-  
նացը մէջ իրեք բանի վրայ զըջացեր  
է. առջինը ծածուկ խորհուրդ մը  
իր կնկանը յայտնելուն, երկրոր-  
դը՝ անգամ մը ծավով ճամբայ ըրեր  
է՝ ուր որ կրնար ցամաքով երթալ,  
երրորդ՝ օր մը առանց բարեք ճշ ընելու  
անցընելուն վրայ:

« Փողին վրայ դու հոգ տար. լի-  
րայներն իրենք զիրենք կը հոգան,  
կըսէր յոյժ իմաստութեամբ Պ.  
Լաունաէս ծերը՝ որ Կուլիէլմոս  
Գին, Աննային և Գէորգ Աին ժա-  
մանակը անուանի պաշտօնեայ ե-  
ղաւ հասարակաց Գանձատան: Ուս-  
տի ես ալ կապսպարեմ քեզի որ  
վայրկեաններդ չկորսուցընես, վասն  
զի ժամերն իրենք զիրենք կը պա-  
հեն: Բոլոր օրն բանի մը հետ եղիր,

և կէս ժամերն ու քառորդներն  
փուճ բան մի սեպեր. վասն զի տար-  
ւոյն վերջը մեծ դումար կը կազմեն,  
օրինակի համար օրուան մէջ աշխա-  
տանքի և զուարճութեան մէջ տե-  
ղերը շատ կարճ ժամանակներ կան,  
արդ փոխանակ ծոյլ ծոյլ նստելու  
և յօրանջելու՝ օգտակար գիրք մը  
առ կարգա՛ ինչուան որ լմնցընես:  
Մի և նոյն ատեն մէկ նիւթէն աւե-  
լի՝ ուրիշ բանով միտքդ մի ծան-  
րաբեռներ. և գիրք մը կարգա-  
լու ատենդ՝ վեր ՚ի վերանց մի անց-  
նիր, հասա ամեն մէկ մասն կրկին  
անգամ կարգա, կամ գոնէ ինչուան  
առջինը լաւ մը միտք առած չըլլաս՝  
ուրիշ գիրք մի սկսիր, և զայս մի  
թողուր՝ ինչուան որ աղէկ մը նիւ-  
թին տեղեկութիւն չառնուս. այս-  
պէս որ չընես՝ շաբթէ մը ետքը բո-  
լոր կարգացածդ կը մոռնաս:

Զուարճութիւններն ու հան-  
գիստն ժամանակի կորուստ չեն սե-  
պուիր՝ բաւական է որ բանաւոր  
արարածոյ մը պատշաճ զուարճու-  
թիւն ըլլան. ընդհակառակն քիչ մը



ատեն այս զուարճութիւններու  
ծախելը՝ օգտակար կերպով անցած  
կը սեպուի:

Ինչ գործ ալ ունենաս՝ նայէ որ  
զանի ժամանակ մը ունենալուդ պէս  
կատարես. կէսկատար մի թողուր  
այլ թէ որ կրնաս առանց ընդհա-  
տութեան զանի լմնցուր. բանգործ  
ըսածդ ձգձքելով չլմնար. և պէտք  
չէ Փելիքս դատաւորին առ Պօղոս  
առաքեալ ըսածին պէս ըսես « Ա-  
ւելի յարմար ժամանակին քեզի հետ  
կուզեմ խօսիլ »: Գործոյ մը ամե-  
նէն յարմար ժամանակն ներկայն է.  
բայց խելք ունեցողին նոյն իսկ ըզ-  
բաղմունքն ու զուարճութիւնը ի-  
րենց պատշաճ ժամանակն կը ցու-  
ցընեն. շատ անգամ ժամանակն կը  
կորսուի զուարճութեանց և զբօ-  
սանաց լաւ ընտրութիւն և յար-  
մար եղանակ մը չսահմանելէն:

Չանքն գործոյ մը հոգին է, և  
Չանացողութեան ալ ամենէն հար-  
կաւոր բանն կարգաւորութիւնն է.  
նայէ որ ամեն բանի կարգ մը դնես՝  
և զանի անշփոթ պահես, քանի որ

անակնկալ դիպուած մը վրայ չհաս-  
նիր: Օրուան մէջ որոշ ժամ մը և  
շաբթու մէջ օր մը հաստատէ՝ քու  
հաշիւներդ տեսնելու, և զանոնք  
լաւ կարգի մէջ պահէ. որով քիչ  
ժամանակ հարկաւոր չըլլայ և շատ  
չես խաբուիր: Ինչ նամակ և թուղթ  
որ կը պահես՝ ծալէ կապէ ունշա-  
նէ, և իւրաքանչիւրը իր պատշաճ  
խորշը դիր, որ հարկաւոր ժամա-  
նակ շուտով կը գտնես: Քու ըն-  
թերցմունքիդ ալ կարգ մը դիր, և  
նայէ որ ամեն առաւօտ որոշեալ  
ժամանակ մը ընթերցմամբ անցը-  
նես. և կարգանցմունքդ ըլլայ հաս-  
տատ ու անխաբան ընթացքով մը,  
չէ թէ ցատկատուկ ու անկարգ կեր-  
պով մը, ինչպէս որ շատերն կընեն  
այլևայլ նիւթոց վրայ զանազան մա-  
տենագրաց հատուածներ կարգա-  
լով: Ինչ որ կարգաս հարկաւոր  
բաներն օգտակար և համառօտ գըր-  
քուկի մը մէջ նշանէ, քու յիշողու-  
թեանդ օգնելու համար, չէ թէ ի-  
մաստակութեամբ անոնցմէ վկայու-  
թիւն բերելու համար: Առանց աշ-



խարհացուցի և ժամանակագրա-  
կան տախտակը գիմացդ ունենալու՝  
պատմութիւն մի կարգար, և շատ  
անգամ անոնց վրայ նայէ ու քննէ.  
վասն զի առանց անոնց՝ պատմու-  
թիւնը անցից շեղակոյտ մի է:

Թերևս՝ ինչպէս որ շատ պատա-  
նիք կը կարծեն, պիտի ըսես թէ  
այս կարգս ու կանոնս շատ ձան-  
ձրացուցիչ բաներ են, և մանկու-  
թեան կրակին անհաճոյ կապանք-  
ներ են, և միայն ապուշ մարդկանց  
յարմար բաներ են: Բայց ես ըսածդ  
կը մերժեմ, և կը հաստատեմ թէ  
այս կարգաւորութեամբս աւելի  
ժամանակ կը վաստակիս և զուար-  
ճութիւններէդ աւելի համ կառ-  
նես. և թէ միայն ձանձրացուցիչ  
չեն ըլլար քեզի, այլ նաև եթէ քա-  
նի մը ամիս զանիկայ շարունակես,  
զանի ձեռքէ թողուլը քեզի ծանր  
կուգայ: Բանուգործը մարդուս  
ախորժակը կը սրէ, և զուարճու-  
թեանց աւելի համ մը կուտայ,  
ինչպէս որ մարմնոյ շարժմունքը կե-  
րակուրի ախորժակնիս կը բանայ.

իսկ բանուգործը առանց կարգի  
կանոնի մը ընելը անհնարին է. ա-  
նոնք են որ մարդուս ոգիքը կը գըր-  
գուեն զուարճութիւններէն համ-  
առնելու. և օրուան առջի մասը  
զբաղմամբ անցնող մարդուն շատ  
աւելի ախորժեղի կուգան թատր-  
մը, պար մը կամ ընկերութիւն մը,  
քան թէ անոր որ բոլոր օրը պա-  
րապ անցուցեր է... վասն զի նոյն  
թմրածութիւնը ամեն տեղ իր հե-  
տը կը կրէ, և ինչպէս որ ամեն բա-  
նի անյարմար է, այսպէս զուար-  
ճութենէ ալ համ մը չառներ:

Յուսամ որ դու աշխատութեամբ  
քու զուարճութիւնդ կը գնես, և  
հետեւապէս համ ալ կառնես անոնց-  
մէ. վասն զի, անցողաբար ըսելով,  
ես շատերը կը ձանձնամ որ զուար-  
ճասէր մարդիկ կըսուին. բայց ճըշ-  
մարտիւ զուարճութիւն մը չունին.  
աւելի անտարբեր կերպով ուրիշնե-  
րու զուարճութեանցը կը հետեւին,  
բայց իրենք իրենցմէ համ մը չեն  
առներ: Ասոնցմէ զոմանս կը ձանձ-  
նամ որ իրենք զիրենք չափազանց



զուարճութեան կուտան, կարծե-  
լով թէ ազնուութիւն է ըրածնին.  
Թէպէտ այնչափ անյարմար ու ան-  
շնորհք կերևան՝ որչափ որ մէկը ու-  
րիշի զգեստը հագնելու ըլլայ: Ասլա  
դու քու բնութեանդ յարմար և  
ախորժած զուարճութիւններուդ  
ետե՛ք եղիր. վասն զի անոնցմով  
միայն կրնաս փայլիլ:

Շատերը կան որ երբ ուսմունք  
մը, զբաղմունք մը չունին՝ իրենք  
զիրենք մեծ հաճոյից մէջ կը կար-  
ծեն. բայց բանի մը հետ չըլլալը  
զուարճութիւն չըսուիր, ապա թէ  
ոչ կրնային քուն ալ ըլլալով զը-  
ւարճանալայսպէսով ծուլութիւնը  
սովորութիւն կը դառնայ իրենց, և  
ասոնք են որ այնպիսի աեղուանք  
կը յաճախեն՝ ուր որ ամենեին ի-  
րենց վրայ մտադրութիւն ընել և  
զգուշանալ հարկ չըլլայ: Զգոյշ կե-  
ցիր այսպէս ծուլութեամբ ժամա-  
նակիդ կորսունցընելէն, և ուր որ  
երթաս նայէ որ քեզի կամ պատ-  
րաստ և աշխոյժ զուարճութիւն մը  
գտնես կամ քու մտացդ յառաջա-

դիմութիւն մը. ինչ ընկերութեան  
մէջ յաճախես նայէ որ կամ քու  
զգայարանքդ զուարճացընէ, կամ  
քու ծանօթիւթիւնդ ընդարձակէ,  
կամ քու կերպդ ազնուացընէ:

Թէ որ դիպուածով հարկաւոր  
բանի մը զբաղելու համար՝ երկու  
իրեք ժամ միայն հարկաւոր ըլլայ  
քեզի, նայէ որ քունէդ կարես:  
Վէց կամ շատ շատ եօթը ժամ  
քուն ըլլալը բաւական է քեզի ինչ-  
պէս նաև ամեն մարդու. աւելին  
ծուլութիւն ու ծուլութիւն է, և  
մարմնոյ առողջութեան փրաստակար  
ըլլալէն զատ միտքն ալ կը թմրեցը-  
նէ: Աթէ դիպուածով քու գոր-  
ծոցդ կամ զուարճութեանցդ հա-  
մար ինչուան առաւօտեան չորսն  
հինգը արթուն անցընես, սակայն  
նայէ որ քու սովորական ատենիդ  
արթըննաս. որպէս զի առաւօտեան  
մեծագին ժամերն չկորսունցընես,  
և միանգամայն իրիկունը քունդ  
կոխելով՝ սախուլիս շուտով ան-  
կողին երթալու:

Ամեն բանէ աւելի թեթևամտու.



Թե՛նէ զգուշացիր . Թե՛թեւամիտն  
միշտ զբազած է, բայց մեծ գործ  
մը ըրած չունի, և սղտի ու փուճ  
բաներու այնչափ միտք ու ժամա-  
նակ կը ծախէ, որ մեծ բաներն հա-  
զիւ թէ կարժանաւորին . մեծ հո-  
գով խաղալիկներ, Թի՛թեւնիկներ  
ու որդեր ժողվելու ետեւէ կըլլայ . և  
ընկերութեան մէջ որ գտուի՝ փո-  
խանակ ուրիշներու բնութիւնն ու  
կերպը դիտելու՝ անոնց հագուստը  
կը դիտէ . Թատրոն որ երթայ աւե-  
լի վարագուրներուն զարդին մտա-  
դիր կըլլայ քան թէ իմաստին, և  
արքունեաց աւելի արարողութիւն-  
ներուն քան թէ քաղաքականու-  
թեանը ուշ կը դնէ . ժամանակի  
աչսօրինակ գործածութիւնը բոլո-  
րովին կորուստ է :

Այս նիւթիս վրայօք ալ խօսքեր-  
նիս կնքելու համար կըսեմ թէ ծու-  
լութիւնը, անհոգութիւնը ու մեղ-  
կութիւնը երիտասարդաց անդէս  
և փնասակար բաներ են . շատ շատ  
ասկէց քառառուն տարի ետքը կըր-  
նաս անոնց ետեւէն ըլլալ : Ո՛ր և իցէ

ժամանակ, և որչափ ալ քանի մը  
բաներու մէջ և քիչ մը ատեն քե-  
զի անհաճոյ ըլլայ՝ նայէ որ գտուած  
տեղւոյդ ամենէն ընտիր և բարե-  
զարդ ընկերութեան մէջ գտնուիս,  
որոնք որ իրենց աստիճանին կամ  
գիտութեան կամ հանճարին և ճա-  
շակին համար անուն հանած են .  
վասն զի այս բանս քեզի յանճա-  
րարական թղթի տեղ կանցնի՝ ուր  
որ ալ երթաս բարեկարգ ընկերու-  
թեանց մէջ ընդունելի ըլլալու :

Ժամանակին ճշմարիտ յարգը  
ճանչցիր, և անոր ամեն մէկ վայր-  
կեանը գողցիր, բունէ ու գործածէ .  
չըլլայ թէ ծուլիս, Թմրիս և ընե-  
լիքդ ձգձգես, ինչ որ կրնաս այսօր  
ընել վաղուան մի թողուր, անուա-  
նի և միանգամայն թշուառ Տէ Ուիթ  
Թօշակառուին կանոնն էր ասիկայ,  
զորն որ ամուր բռնելով՝ ոչ միայն  
ժամանակ կը գտնէր պետութեան  
ամեն գործին հասնելու, այլ նաև  
իրիկուններն ալ ընկերութեանց և  
ընթրեաց մէջ գտնուելու չէր պակ-



սէր, իբրև թէ գործելու կամ մտածելու բան մը ունեցած չըլլար:

Ունայնամարտելիւն.

Ամենայն կերպով զգուշացիր ունայնամտութենէ՝ որ անփորձ երիտասարդաց սովորական պակասութիւնն է. մանաւանդ այն տեսակ ունայնամտութենէ որ զմարդ ծանծաղամիտ կրնէ, որն որ մէյմը բնութիւն գառնալէն վերջը՝ անջնջելի կը մնայ: Չենք կրնար ըմբռնել թէ քանի հազարումէկ կերպով ունայնամտութիւնը իր դիտմունքէն կը զրկուի: Մարդ կայ որ առանց մտածելու ամեն բանի վճիռ կը կարէ, անով շատ բանի մէջ իր տգիտութիւնը կը յայտնէ, մնացածին մէջ ալ իր անհաճոյ սնասարժութիւնը. ուրիշ մըն ալ կը ցանկայ ցուցնելու թէ իր բանը կանանց հետ յաջող է, կը ցուցնէ թէ ինչպէս աստիճանով և գեղեցկութեամբ աւուանիններ իրեն քաջալերութիւններ առեր են, և կուզէ այնպէս

հաւտացընել թէ ոմանց հետ ալ ընտանի սրտակցութիւն ունի. եթէ ճշմարիտ է ըսածը՝ ապա ուրեմն ինքն ազատամիտ մարդ չէ, իսկ թէ սուտ է՝ վատանուն է. և յերկոսին ևս փոխանակ համարմունք ստանալու իր անունը կ'աւրէ: Ոմանք ալ իրենց ունայնամտութիւնը բոլորովին իրենցմէ դուրս օտար բաներով կը փայփայեն, ինչպէս արդեամբ ու առաքինութեամբ անուանի եղած մարդիկներ իրենց նախահայր, ազգական և ծանօթ ունենալուն: Միշտ իրենց պապուն վրայ կը խօսին որ էր այս անունը, իրենց քեռւոյն, իրենց մտերիմ բարեկամին որ է Պ. սա անունը, զորն որ թերևս հազիւ ճանչցած են: Բայց ենթադրելով ալ թէ ըսածնին ճշմարիտ է, ինչ բանի կուգայ, մի թէ այս դիպուածներու համար աւելի արդիւնք մի ունին իրենք. ոչ բնաւ. մանաւանդ թէ ընդհակառակն այս դիպուածական բաղդերս վրանին առնելէն՝ կերևայ թէ իրենք իրենց յատուկ արդիւնք մի չունին. հա-



քուսար ուրիշէն փոխ չառնուր :  
 Այս կանոնս անսխալ սեպէ ու  
 բանէ : Այն կատարելութիւնն ու  
 բով որ կուզես փայլիլ՝ դրսուանց  
 ունենալ մի ցուցըներ . գովութիւն  
 որսալու ամենէն յարմար խայծը՝  
 խոնարհամտութիւնն է : Կարճու-  
 թիւն ծախելը՝ նոյն խի քաջ մար-  
 դը մեծախօսի տեղ դնել կուտայ :  
 Ինչպէս նաև խելք ծախելը՝ արդիւ-  
 նաւոր մարդն ալ իմաստակի կարգ  
 կը դնէ . խոնարհամտութիւն ըսե-  
 լով վախկոտութիւն կամ անշնորհք  
 ցածութիւն չեմ հասկընար . ընդ-  
 հակառակն ներսանց հաստատ և  
 անփոփոխ եղիր , ու քու արժէքդ  
 ճանչցիր , ինչ որ ալ ըլլայ , և այն  
 սկզբունքով գործէ ինչ որ կրնես .  
 բայց զգոյշ կեցիր որ չըլլայ թէ մե-  
 կուն ցուցընես թէ դու քու յարգդ  
 գիտես : Ինչ ճշմարիտ արժանիք ալ  
 ունենաս՝ թող որ ուրիշներն զանի  
 գտնեն . վասն զի մարդիկ իրենց  
 գտածը միշտ կը մեծցընեն , և ու-  
 րիշներունը կը սղախկցընեն :

Առաքինութիւն .

Առաքինութիւն ըսածդ անանկ  
 բան մի է որ քու և ամեն մարդկանց  
 մտադրութեանն ալ արժանի է :  
 Առաքինութիւնն ուրիշ բան չէ ,  
 բայց եթէ բարիք գործել և ճշմա-  
 րիտ խօսիլ . ուստի անկէց մեծ օգ-  
 տակարութիւններ առաջ կուգան  
 բոլոր մարդկութեան և առան-  
 ձինն ամեն մէկու : Առաքինութիւնը  
 մեզի մարդկանց թշուառութեանը  
 վրայ գթալ և օգնել կը սորվեցընէ ,  
 ընկերութեան մէջ արդարութիւն  
 և բարեկարգութիւն մտցընել կու-  
 տայ , և մարդկանց ստոյգ բարին  
 զարգացընել կուտայ : Իսկ մեզի  
 ներքին քաջալերութիւն և գոհու-  
 թիւն մը կուտայ , որն որ ուրիշ բա-  
 նով մարդ չկրնար վաստակիլ , և ոչ  
 մէկը կրնայ զանի իրմէ գողնալ : Ու-  
 րիշ ամեն օգուտներն՝ չէ թէ միայն  
 մեզմէ՝ այլ նաև ուրիշներէն կը կա-  
 խուի : Հարստութիւնն , զօրութիւնն



ու մեծութիւնը ու բիշնէրու բռնու-  
 թեամբը կամ անիրաւութեամբը և  
 կամ անհրաժեշտ դիպուածով մը  
 կրնան մեզմէ վերնալ. իսկ առաքի-  
 նութիւնը միշտ մեր ձեռքն է. ոչ  
 ոք կրնայ զանի մեզմէ յաւիշտակել:  
 Հիւանդութիւն մը կրնայ զմեզ  
 մարմնոյ հաճոյքներէն զրկել, բայց  
 չկրնար առաքինութիւնը մեզմէ կո-  
 ղուպտել. և անկէց ունեցած գոհու-  
 թենէն զմեզ զրկել: Առաքինի մարդ  
 մը ինչ թշուառութեան մէջ ալ խ-  
 նայ՝ ներքին քաջալերութիւն և գո-  
 հութիւն մը կ'իմանայ, որ զանի ա-  
 ւելի երջանիկ կրնէ, քան զչարա-  
 գործ մարդ մը որ կենաց ամեն դի-  
 րութիւններն ունենայ: Ստուք,  
 անիրաւութեամբ և բռնահարու-  
 թեամբ մեծ զօրութիւն և հարըս-  
 տութիւն դիզող մարդը՝ չկրնար զա-  
 նոնք վայելել. վասն զի իր խիղճը  
 միշտ զինքը կը տանջէ, և հանապազ  
 երեւր կը զարնէ այն անիրաւ կերպե-  
 րը՝ որոնցմով այն ճոխութեան հա-  
 սեր է. խղճին խայթոցները հան-  
 դիստ քուն ըլլալու ալ չթողուր

զանիկայ, երազին մէջ իր յանցանք-  
 ներն կը տեսնէ. օրուան մէջ ալ մի-  
 նակ ու մտածելու հետ եղած ժա-  
 մանակ անհանգիստ ու մտղձոտ  
 կըլլայ. ամեն բանէ կը վախնայ. և  
 դիտնալով որ մարդիկ զինքը կ'ատեն  
 ուստի իրաւամբ կը կասկածի՝ թէ  
 անոնք կրցած ժամանակնին պիտի  
 զինքը մնասեն: Իսկ առաքինի մար-  
 դը թէպէտ աղքատ ու թշուառ ալ  
 ըլլայ աշխարհիս մէջ, բայց առաքի-  
 նութիւնն իրեն վարձքն է, և իր ա-  
 մեն տրամութեանցը միսթարու-  
 թիւն: Իրեն խիղճը հանգիստ ու  
 գոհ ըլլալուն ցորեկը սիրելի կրնէ  
 զինքը և դիշերը ապահով քուն կըլ-  
 լայ. առանձինն կենալ կ'ախորժի և  
 իր խորհուրդներէն վախ չունի. ա-  
 ռաքինութիւնը ամեն տեղ իրեն  
 ճամբայ կը բանայ, և քաջուած  
 կեանքի մը ստուերաց մէջ ալ կը  
 փայլի, և շուտ կամ ուշ իր վարձքը  
 միշտ կ'առնու:

Ի վերջ բանից Լորտ Շէֆթըսպը-  
 րին կըսէ թէ « Ինքը առաքինի կու-  
 ղէր ըլլալ իր անձին սիրոյն համար՝



Թէ և ոչ ոք զանի գիտնար . ինչպէս  
 նաև մաքուր կուզէր ըլլալ իր ան-  
 ձին սիրոյն համար՝ Թէ և ոչ ոք  
 զինքը տեսնէր » :

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԴԻՏԵԼԻՔ ՄԱՐԴԿԱՆՑ  
 ԵՒ ՄԱՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ .  
 ԼՈՐՏ ՁԷՍԹՐՅԻԼՏԻ ԹՂԹԵՐԷՆ  
 ԸՆՏՐԱՆՕՔ ՀԱԻԱՒԱԾ .

Ո՛վ որ հաստատ կացութիւն մը  
 չըստանար , և ստուգապէս չար-  
 ժանաւորիւր ճշմարտութեան , ար-  
 դարութեան , բարեկրթութեան և  
 բարոյականութեան նկարագիր մը  
 ունենալու , այնպիսին առջի ան-  
 դամ աշխարհի մէջ երևնալուն՝ ու-  
 ըրիչի վրայ ազդեցութիւն մը կրնայ  
 ընել , և օգերևութի մը պէս քիչ մը  
 ատեն փայլիլ , բայց յետոյ շուտ մը  
 կանցնի , և արհամարհանօք անե-  
 րևոյթ կըլլայ : Մարդիկ դիւրաւ կը  
 ներեն երիտասարդաց իրենց զգա-  
 յութեանցը սովորական անկար-  
 գութեանցն , բայց սրտէ առաջ փոք-  
 րիկ ախտն ևս չեն մոռանար :

Մեծամեծ շնորհքներ կրնան ա-  
 նանկ անշնորհք ու կոպիտ կերպով  
 ըլլալ՝ որ ընդունողին նախատինք ե-



րևայ. և ընդհակառակն անհաճոյ  
բաներն ալ այնպէս շնորհքով կըր-  
նան ըլլալ՝ որ դիմացինդ երախտա-  
պարտ ընէ:

Քիչ զինուորական սրաշտօնակալ-  
ներ կան՝ որոնք ընկերութեան ա-  
ւելի յարմարագոյն կըլլան՝ քան  
զՎարդեսիոս և քան զՆևտոն Իսա-  
հակ. ես կը սրատուեմ ու կը մեծա-  
րեմ այսպիսի գերիմաստ հանձար-  
ները, բայց աւելի կը փափաքիմ  
այն տեսակ մարդկանց հետ տես-  
նուիլ՝ որ ընկերութեան զուար-  
թութեանը կամ գոնէ սիրելու-  
թեանը, բարեկրթութեանը և մար-  
դուս ծանօթութեանը իրենք ալ  
մասնակից կըլլան: Սովորական կե-  
նաց մէջ մարդ աւելի մանր ստակի  
և արծաթի պէտք ունի քան թէ  
ոսկի ստակի. դու ինձի անանկ մարդ  
մը ցուցուր որ առժամանակեայ  
ծախուցն համար ունենայ գանկ,  
փող և բոլոր որոնց գործածու-  
թիւնն աւելի յաճախ շատ է. իսկ  
այն որ ոսկեոյ ձոյլ մը ունի, հասա-  
րակ գործածութեան չգար ունե-

ցածը, և իր հարստութիւնը ոչ  
դիւրատար է և ոչ ալ յարմար:  
Մէկ քսակդ որչափ որ կուզես ոսկի  
ունեցիր, բայց նայէ որ մէկալին մէջ  
մանր ստակ ունենաս. վասն զի շատ  
անգամ աւելի բոլորի պէտք կունե-  
նաս քան թէ լիրայի:

Խորհուրդը քիչ անգամ ընդու-  
նելի կըլլայ մարդուս, և անոնք որ  
աւելի պէտք ունին խրատի՝ անոնք  
աւելի քիչ կը սիրեն զանիկայ:

Նախանձը ամենէն ցած ու տան-  
ջող ախտերէն մէկն է. որովհետև  
աշխարհիս մէջ մարդ մը հազիւ կը-  
գտուի որ նախանձոտի մը սրտին  
անհանգստութիւն մը չպատճառէ.  
վասն զի նախանձոտը չկրնար եր-  
ջանիկ ըլլալ երբ ուրիշներն երջա-  
նիկ կը տեսնէ:

Մեծ ու լաւ գործ մը ամեն մարդ  
կը գովէ, և ներքին հաճութիւնն որ  
մարդ կը զգայ՝ չկրնար բացատրուիլ:

Մարդասիրութիւնը մեծ մտքե-  
րու մասնաւոր նշանն է. պղտի և  
ախտաւոր մտքերը բարկութեամբ  
ու վրէժխնդրութեամբ լեցուած



կըլլան, և թշնամւոյն ներելու վսեմ՝  
հաճութիւնը չեն կրնար զգալ:

Տգէտ ու տկար մարդիկ միայն  
ծոյլ կըլլան. իսկ որոնք որ գիտու-  
թեան համն առած են՝ միշտ կը  
փափաքին զանի շատցընել: Այս  
բանիս կողմանէ գիտութիւնը իշխա-  
նութեան կը նմանի՝ որ որչափ մէկը  
շատ ունենայ՝ այնչափ աւելի կուզէ  
ունենալ: Մուլութիւնը տկար մը ա-  
քերու ապաւէնն է և խենթերու  
կիրակին:

Ալեն մարդ իր պատուոյն բնա-  
կան իրաւունք մը ունի, և ո՛վ որ  
զանի յափշտակել ուզէ՝ մեծ ճամ-  
բու վրայ մարդուս ստակն յափըշ-  
տակելու համար յարձակող աւա-  
զակէն աւելի չար է:

Համեստութիւնը գովելի յատ-  
կութիւն մի է, որ սովորաբար ճըշ-  
մարիտ արդեանց հետ մէկտեղ կը  
գտուի, և մարդուս սիրան ու միտ-  
քը իրեն կը քաշէ. վասն զի պա-  
հանջողութենէ ու լրբութենէ ա-  
ւելի զզուելի և անհաճոյ բան չկայ:  
Ո՛վ որ միշտ ինքզինքը կը գովէ, և

իր պատմութեանցը գիւցազներ կե-  
րևայ՝ ուրիշներուն արհամարհելի  
կըլլայ:

Խոստմունքնիս չկատարելը յի-  
մարութիւն, վատութիւն և յան-  
ցանք է. յիմարութիւն է, վասն զի  
անկէ ետև ոչ ոք մեզի կը վստահի.  
վատութիւն և յանցանք է, վասն  
զի ճշմարտութիւնը կրօնքի և բա-  
րոյականի առաջին պարտքն է. և  
ո՛վ որ ճշմարտախօս չէ՝ լաւ յատ-  
կութիւն մը չկրնար ունենալ, և ա-  
մեն լաւ մարդ պէտք է զայնպիսին  
արհամարհէ:

Աշխոյժը շատերն կը զարմացը-  
նէ, բայց քիչերը բարեկամ կրնէ.  
կէսօրուան արևուն պէս կը փայլի  
և աչք կառնէ, բայց անոր պէս ալ  
կայրէ կը մրկէ, անոր համար վախ-  
նալու բան է. իսկ արևուն առաւօ-  
տեան և իրիկուան բարեխառն ջեր-  
մութիւնն ու լոյսը՝ մտքերնիս կը  
խաղաղէ և կը հանգարտեցընէ: Աշ-  
խուժութեան ետևէ մի ըլլար. թէ  
ինքնիրեն գայ լաւ է. բայց ան ա-  
տենն ալ նայէ որ խելքդ վրագ ըլ-



լայ, և նայէ որ ատով մէկուն մնաս  
չըլլայ. Փոփ բանաստեղծը շատ ճշ-  
մարտապէս կը զրուցէ.

Եւ զորս Երկինք ճոխացուցին  
հանձարով,

Այլ առ վարել Նովիմք զլացան  
ըզկորով:

Ուրիշ տեղ մըն ալ կըսէ, և վախեմ  
շատ ճշմարտութեամբ.

Քանզի հանձար և միտք ուղիղ  
միմեանց կարգեալք 'ի յօձան

Ձերդ զայր և զկին կագեն վիճին  
միշտ 'ի կռիւ անվախձան.

Խեղացի մարդիկ հարկաւոր  
գաղտնեաց համար միայն խորհր-  
դապահովութիւն կընեն. իսկ տկար  
և խարդախ մարդիկ խորհրդապա-  
հովութիւնը միայն գաղտնիք կերեցը-  
նեն:

Բարեկամիդ, կնկանդ կամ սիրա-  
կանիդ այնպիսի խորհուրդ մը յայտ-  
նելը՝ որ իրենց չվերաբերիր, ուրիշ  
բան չէ բայց եթէ քու խորհրդապա-  
հովեան անկարողութիւնդ ցու-  
ցընել, և զանոնք վստահացընել թէ

դեռ շատերու ալ պիտի ըսես գիտ-  
ցածդ, որով իրենք ալ սիրտ կառ-  
նուն ըսածդ ուրիշներու յայտնե-  
լու՝ առանց վախնալու որ կրնան  
մատնուիլ: Իսկ երբ գաղտնիք մը  
անոնց միայն յայտնես՝ որոնց հար-  
կաւոր է գիտնալը, թէ և շատուոր  
ալ ըլլան՝ հաւանականաբար գաղտ-  
նիքը կը պահուի: Մանր գաղտնիք-  
ներն սովորաբար կը յայտնուին, և  
մեծերն ընդհանրապէս կը պա-  
հուին: Այն մարդն որ բան մը չըսեր  
կամ ամեն բան կըսէ. ուրիշներն ալ  
իրեն բան մը չեն ըսեր:

Խենթը գաղտնիք մ'որ գիտնայ՝  
զանի կը զրուցէ. վասն զի խենթ է.  
անզգամ մը եթէ գիտնայ՝ ուր որ ի-  
րեն շահ մը կայ՝ կը յայտնէ զանի.  
Իսկ կանայք և տղայք գիտցած  
գաղտնիքնին պատրաստ են ըսելու  
թէ թեւամտութեան համար, որպէս  
զի ցուցընեն թէ մէկն իրենց գաղտ-  
նիք մը վստահեր է. ուր ալ ըլլաս  
ասոնմէ մէկուն ալ մի վստահիր:

Քու բարեկամութեանցդ և թըշ-  
նամութեանցդ մէջ նայէ որ քու



սրտակցութեանդ և բարկութեանդ  
չափ մը դնես. որպէս զի չըլլա՛ թէ  
առջինը վտանգաւոր և երկրորդն  
անհաշտելի ընես. որովհետև կեան-  
քերնուս մէջ արտառոց դիպուած-  
ներ շատ կրնան սրտահիլ:

Մէկուն միտքը համոզելու համար՝  
սիրտը կակղացուր. մտքի ճաբայն  
լաւ բան է, բայց սովորաբար եր-  
կայն է, և թերևս ապահով ալ չէ:

Աշխոյժ ըսուածը հիմա նորեւուկ  
բառ մի է. և աշխուժով գործել որ  
կըսուի՝ կիմացուի յանդուգն գոր-  
ծել և անխտիր խօսիլ: Իսկ խելացի  
մարդն իր աշխոյժը բարեկիրթ խօ-  
սակցութեամբ և ամփոփոխ գոր-  
ծովը կը ցուցընէ. ոչ վախկոտ է և  
ոչ յանդուգն:

Համբերութիւնն խիստ հարկա-  
ւոր է բանի գործի մէջ. շատ մարդ  
աւելի կուզէ որ իր պատմութեանը  
մտիկ ընես, քան թէ իր ուղածը  
շնորհես: Պէտք է անշարժ մտիկ ը-  
նել շատախօսին խնդիրքը, և ան-  
ձանձրոյթ կերպով պաղշորդին  
տաղտկալի մանրամասն պատմած-

ները: Այս ցածագոյն գին մի է զոր  
մարդ պիտի հատուցանէ իրմէ բար-  
ձրը եղածներուն:

Ամեն մարդ իրաւունք ունի խար-  
դախութիւն մը երևան հանելու, և  
ուրիշի յիմարութիւնը տեսնելու,  
բայց զանոնք յայտնելը անիրաւու-  
թիւն է: Բանի գործի մարդուն ա-  
չուրները պէտք է որ միշտ բաց ըլ-  
լան, բայց շատ անգամ անանկ ե-  
րևցընէ իբրև թէ գոց ըլլար:

Արքունեաց մէջ, ինչպէս նաև ա-  
մեն տեղ վախկոտութիւնն ու ապ-  
շութիւնը այնչափ մնասակար են  
մէկ կողմանէ, որչափ որ ուրիշ կող-  
մանէ մնասակար են լրութիւնն ու  
յանդգնութիւնը: Անփոփոխ վստա-  
հութիւն մը և պաղ աներկիւղու-  
թիւն մը, հանդերձ արտաքին հա-  
մեստութեամբ մը՝ ճշմարիտ միջին  
ճամբան կը սեսլուի:

Ինչ բան որ ընդունիլը քիչ հա-  
ւանական կը տեսնես՝ զայն բանը մի  
խնդրեր. վասն զի անյարմար և չըն-  
դուրելի բաներ խնդրելովդ, պաշն-  
տօնեայները քեզի շատ անգամ զլա-



նաչու կը վարժեցընես . անանկ որ  
խիստ պատշաճ և բանաւոր բան  
մ'ալ խնդրելու ըլլաս՝ դժուարու-  
թիւն մը չեն կրեր քեզի այն ալ զը-  
լանալու : Արքունեաց մէջ սովորա-  
կան բայց մոլար կանոն մըն է՝ որ  
ամեն բան կը խնդրեն՝ գոնէ բան մը  
ընդունելու համար . իրաւ է այս  
կերպով բան մը կառնուն . բայց գի-  
տես ինչ . մերժումն և ծաղր : Այս  
սկզբունքս ալ առջինին պէս ընդ-  
հանուր է :

Զուարթ երես և համարձակ  
կերպ մը ունենալը խիստ հարկա-  
ւոր է . վասն զի անով խենթերն  
զքեզ բարեսիրտ մարդու տեղ կը  
դնեն , իսկ խարդախներն պարզա-  
մտի մէկը զքեզ կարծեն :

Քանի մը դիպուածներու մէջ  
մարդ գիացած գաղտնեացը մէկ մա-  
սը միայն պիտի յայտնէ , որպէս զի  
մնացածը ծածկէ , բայց հազիւ դի-  
պուած կրնայ ըլլալ՝ որ մարդ բո-  
լորն ալ յայտնելու ստիպուի : Մեծ  
վարպետութիւն հարկաւոր է գիտ-

նաչու թէ մարդ ինչուան ուր պիտի  
խօսի և ուր պիտի լռէ :

Արարողութիւնքն հարկաւոր են ,  
իբրև արտաքին գործ և պաշտպա-  
նութիւն բարեկրթութեան :

Մարդու բարեկրթութիւնը՝ ու-  
րիշի անկրթութեանը դէմ ամենէն  
ասպահով պաշտպանութիւնն է :

Բարեկիրթ մարդը վսեմ կերպ  
մը ունի՝ ուսկից որ ամենէն լիրբերն  
ալ կը պատկառին . իսկ անկրթու-  
թիւնը ամենէն երկչոտ մարդու ալ  
համարձակութիւն կուտայ՝ ընտա-  
նեքար վարուելու : Մէկն եղած չէ  
որ Մայլաորը՞ի դքսին համարձակ  
խօսք մը ըսած ըլլայ . ընդհակա-  
ռակն Սըր Ռոպըրթ Ուոլթոլի ալ  
մէկը քաղաքավար խօսք մը ըսած  
չէ , թէ և շողոքորթ խօսքեր խիստ  
շատ :

Գիտութիւնը մարդուս յարգ կու-  
տայ . բայց արտաքին բարեկրթու-  
թիւնն է որ զմարդ կը փայլեցընէ .  
և շատ մարդիկ աւելի կը տեսնեն  
քան թէ կը կշռեն :

Շատ արուեստներ երկայն ուս-



մուկնք և ջանք կը պահանջեն, բայց  
ամենէն օգտակար արուեստը որ է  
հաճոյ ըլլալունը՝ միայն փափաքով  
կը ստացուի:

Հաւանական է որ երբ խելացի  
մարդ մը հաճոյ ըլլալ չփափաքիր՝  
ուրիշ բանի ալ փափաք չունի, ու  
րովհետեւ պէտք է գիտնայ որ ա-  
ռանց անոր մարդ բան մը չկրնար  
ձեռք բերել:

Ճարտար միջնորդ մը պէտք է որ իր  
գործոցը մէջէն մեծը պզտիկէն որո-  
շէ, և որչափ որ առջիններն ծա-  
ծուկ պահէ և պաշտպանէ, այն-  
չափ ետքիններն յայտնէ ու շնորհէ:  
Աս սկզբունքս սովորական հասա-  
րակ կենաց մէջ ալ ճշմարիտ է:

Սիւլի գուքսը իր յիշատակա-  
րանաց մէջ շատ ճշմարտութեամբ  
կը գրէ թէ իր այնչափ մեծնալուն  
ուրիշ բան մը այնչափ ձեռնառու  
չեղաւ՝ քան մանկութենէ վեր ու-  
նեցած խոհական խնայողութիւնն՝  
որով որ և իցէ անակնկալ դիպուա-  
ծի համար քովը սրատրաստ գումար  
մը կը գտուէր:

Շատ դժուար է խնայողութեան  
և շռայլութեանն ճիշդ չափ մը  
սահմանել. բայց երկու սխալմանց  
մէջ լաւ է խնայողութեան առաւել-  
լութեան մէջ իյնալ. ասիկայ կրնայ  
ուղղուիլ, իսկ շքայլութիւնը ուղ-  
ղութեան չգար:

Առատաձեռութեան համարմուն-  
քը կրնանք աժան կերպով վաստը-  
կիլ. վասն զի ասիկայ մարդուս ը-  
րած ընդարձակ ծախքէն չկախուի,  
հապա տալիքը շնորհալի կերպով  
տալէն. օրինակի համար մէկն որ  
ծառային տասնը հինգ բոլոր բարի  
ձեռք տայ՝ ագահ կը սեպուի, ուր  
թէ որ քսաննոց մը տայ՝ առատա-  
ձեռն կերեսայ. և այս երկու ծայր  
բնաւորութեանց մէջի տարբերու-  
թիւնը հինգ բոլորէ կը կախուի:  
Այս նիւթիս մէջ մարդուս անունը  
շատ անդամ իր ծառայիցը պաս-  
մածներէն կը կախուի. իրենց թօ-  
շակէն քիչ մը աւելի բարի ձեռք մը  
տալը՝ մեծ գովասանքի դուռ կը բա-  
նայ:

Նայէ որ քու ծախքդ քու է.



կամտիդ հետ այնպէս յարմարցը-  
նես, որ քովդ միշտ բաւական գու-  
մար մը ունենաս՝ անանկնկալ սա-  
տահարաց և կամ ըստ տեղւոյն  
սխառաճ առատաձեռնութիւն մը  
ընելու համար: Մարդուս կենացը  
մէջ հազիւ թէ տարի մը կրնայ ըլ-  
լալ՝ որուն մէջ սրտորաստ ստակի  
սլզտի գումար մը մեծ օգուտ մը  
չբերէ իրեն:

ՎԵՐՋ



ՅՈՒՅԱԿ ՆԻԻԹՈՅ

Անուշագրութիւն . . . . .	1
Մտադրութիւն . . . . .	4
Տեսակ տեսակ անշնորհք կեր- սւեր . . . . .	10
Վախկոտութիւն . . . . .	15
Ընկերութիւն . . . . .	20
Խօսակցութեան կանոններ . . . . .	28
Խնայութիւն . . . . .	55
Բարեկամութիւն . . . . .	57
Բարեկրթութիւն . . . . .	62
Շնորհալի կերպ . . . . .	72
Աշխարհք ճանչնալ . . . . .	107
Սուտ զուրցել . . . . .	136
Վսեմութիւն 'ի կերպս կամ	



Տանրակացութիւն . . .	140
Ազնուութիւն 'ի կերպս և հաստատութիւն մտաց . . .	145
Բարոյական նկարագիր կամ բարք . . . . .	157
Ընդհանուր պատգամներ . . .	158
Ճարտարախօսութիւն . . . . .	163
Իմաստակութիւն . . . . .	167
Զուարճութիւն . . . . .	173
Նախապաշարմունք . . . . .	179
Կրօնք . . . . .	181
Ժամանակի գործածութիւն . . .	182
Ունայնամտութիւն . . . . .	194
Առաքինութիւն . . . . .	197
Ամէն տեսակ օգտակար գի- տելիք մարդկանց և մար- դավարութեան վրայ :	201



« Ազգային գրադարան



NL0127287



